

Երևանում քաղաքային կոշտ թափոնների գործածության խորհրդատվական ուսումնասիրություն



Առաջադրանք 6
Հաշվետվություն
օրենսդրության և իրավական այլ ակտերով
ընդունված կանոնակարգերի կիրարկման
վերաբերյալ խորհրդատվության մասին



Helping to eliminate poverty and achieve sustainable development through public-private partnerships in infrastructure

Սույն հաշվետվությունը մշակվել է ՀՄԵԽԿ (Հանրային-մասնավոր ենթակառուցվածքների խորհրդատվական կառույց) դրամաշնորհի շրջանակներում: ՀՄԵԽԿ-ը տեխնիկական օժանդակության բազմադոնոր կառույց է: Տեխնիկական օժանդակության և գիտելիքների տարածման միջոցով ՀՄԵԽԿ-ն օժանդակում է քաղաքականություն մշակողների, հասարակական կազմակերպությունների, հետազոտական հաստատությունների և այլ անձանց ջանքերին՝ ուղղված ենթակառուցվածքների ոլորտում ռազմավարությունների մշակման ու իրականացման համար մասնավոր հատվածի ներուժի լիարժեք ներգրավմանը: Պարտադիր չէ, որ հեղինակների տեսակետներն արտացոլեն ՀՄԵԽԿ-ի, Համաշխարհային Բանկի կամ այլ փոխկապակցված կազմակերպությունների տեսակետները և քաղաքականությունը:

FICHTNER

Sarweystraße 3
70191 Stuttgart • Germany
Phone: + 49 711 8995-0
Fax: + 49 711 8995-459
www.fichtner.de

Հարցերով դիմել՝

Ներքին հեռախոս՝ 699
Էլ. փոստ՝ MettlerD@fichtner.de
Դիտմար Մեթլերին

Ներքին հեռախոս՝ 659
Էլ. փոստ՝ JohnsonJ@fichtner.de
Ջեֆրի Ջոնսոնին

Բովանդակություն

1	Համառոտ ամփոփում	4
1.1	Ներածություն	4
1.2	Հանրային-մասնավոր համագործակցության ակնկալվող սցենարը	4
1.3	Հիմնական թերությունները	6
1.4	Առաջարկություններ	7
1.5	Հետագա քայլերը և ճանապարհային քարտեզը	8
2	Հաշվետվության նախադրյալներն ու առարկան	9
2.1	Ծրագրի հիմնավորումը	9
2.2	Ընդհանուր և առանձնահատուկ նպատակները	9
2.3	Ծրագրի առաջադրանքները	10
2.4	Սույն հաշվետվության առարկան	11
2.5	Իրականացված գործողությունները	11
3	Կիրառվող օրենսդրական և կարգավորման դաշտի քննադատական վերլուծությունը	12
3.1	Երևանի ՔԿԹ բնագավառի համար ՀՄՀ նախատեսվող տարբերակը	12
3.2	Իրավական ակտերի ստորադասությունը	13
3.3	Օրենքների և իրավական ակտերի ընդունումը, ուժի մեջ մտնելը, ուժը կորցնելը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը	14
3.4	Օրենսդրություն	14
3.4.1	Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը	15
3.4.2	«Թափոնների մասին» ՀՀ օրենքը	17
3.4.3	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը	20
3.4.4	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը	23
3.4.5	«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը	26
3.4.6	«Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքը	27
3.4.7	«Համատիրության մասին» ՀՀ օրենքը	28
3.4.8	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը	29
3.4.9	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը	29
3.4.10	«Գնումների մասին» ՀՀ օրենքը	29
3.4.11	ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը	30
3.4.12	«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը	31
3.5	Թափոնների գործածության բնագավառի առանձնահատկությունները	31

3.5.1	Թույլտվությունների տրամադրում և լիցենզավորում	31
3.5.2	Վճարների սահմանումը և գանձումը	33
3.6	Քննադատական վերլուծության եզրակացությունները	34
4	Թերությունների վերլուծությունը և խոչընդոտների բացահայտումը	39
4.1	Քաղաքականության նպատակը	39
4.2	Թերությունների վերլուծությունը և խոչընդոտների բացահայտումը	40
4.2.1	ՀՄՀ նախատեսված տարբերակը	40
4.2.2	Թերությունների վերլուծությունը	44
4.2.3	Խոչընդոտների բացահայտումը	46
4.3	Տարբերակների վերլուծությունը / խոչընդոտների հաղթահարումը	52
4.3.1	«Ա» խմբի (Թափոնների դասակարգում) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակ	53
4.3.2	«Բ» խմբի (Վճարման պարտավորություն) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակներ	54
4.3.3	«Գ» խմբի (Իրավասություններ) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակներ	56
4.3.4	«Դ» խմբի (ՀՄՀ միջավայր) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակներ	58
5	Օրենսդրության կիրարկման ապահովման առաջարկներ	61
5.1	Փուլային բարեփոխման հայեցակարգը	61
5.2	Թափոնների բնագավառում կոմունալ ծառայությունների համար սակագների և վճարների սահմանման վերաբերյալ առաջարկությունները	64
5.3	Թափոնների բնագավառում իրավասությունների սահմանման վերաբերյալ առաջարկությունները	66
5.4	Գործող դրույթների վերանայումը և ՀՄՀ պայմանների բարելավմանն ուղղված առաջարկությունները	68
5.5	Շահագրգիռ կողմերի վերլուծությունը	69

Հավելված Ա. Հանդիպումներ և հարցազույցներ
 Հավելված Բ. Իրավական ակտերի ստորադասությունը Հայաստանում
 Հավելված Գ. Օրենքների և իրավական այլ ակտերի ընդունման ընթացակարգը
 Հավելված Դ. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը
 Հավելված Ե. Իրավական այլ ակտերի ցանկ.
 Հավելված Զ. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը

Համառոտագրությունների և հապավումների ցանկ

ԱԺ	Ազգային ժողով
ՀԱ	Համայնքի ավագանի
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՏՄ	Աղբատար մեքենա
ԲԲՇ	Բազմաբնակարան շենքեր
ԲԸ	Բաժնետիրական ընկերություն
ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՎՇՂ	Վարչական շրջանի ղեկավար
ԿԹԳ	Կոշտ թափոնների գործածություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄԵԽԿ	Հանրային-մասնավոր ենթակառուցվածքների խորհրդատվական կառույց
ՀՄՀ	Հանրային-մասնավոր համագործակցություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԽՍՀ	Հայաստանի Խորհրդային Սոցալիստական Հանրապետություն
ՄԱԶԾ	Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄԳԳ	Միավորի գոյացման գործակից (ՔԿԹ-ի կզ/մարդ/օր կամ կզ/մարդ/տարի)
ՄՀ	Միջազգային համաձայնագրեր
ՇԱ	Շինարարական աղբ (թափոններ)
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔԿԹ	Քաղաքային կոշտ թափոններ
ՔԿԹԳ	Քաղաքային կոշտ թափոնների գործածություն

Չափման միավորներ

Լ	լիտր
մ ³	խորանարդ մետր
տ/տարի	տոննա տարեկան

Փոխարժեքներ (2008թ. սեպտեմբերի 9-ի դրությամբ)

1 ԱՄՆ դոլար = 320 դրամ

1 Եվրո = 400 դրամ

1 Համառոտ ամփոփում

1.1 Ներածություն

Երևանի քաղաքային կոշտ թափոնների գործածության (ՔԿԹ) գործող համակարգը տրամադրում է ՔԿԹ-ի հավաքման և հեռացման ցածրորակ ծառայություններ: Տարբեր պատճառներով և, հիմնականում,, թերֆինանսավորման պատճառով, Երևանի 12 քաղաքային համայնքներից 11-ի համակարգերը քայքայված վիճակում են: Ներկայումս իրավիճակն այնպիսին է, որ պահանջվում են բարելավման և արդիականացման անհապաղ գործողություններ:

Երևանի քաղաքապետարանը փորձում է բարելավել առկա իրավիճակը մասնավոր հատվածի ներգրավման միջոցով: Հանդես գալով ՀՀ կառավարության անունից, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, գործընթացին աջակցելու նպատակով դիմել էր Համաշխարհային բանկին խորհրդատվության ու օժանդակության խնդրանքով: Համաշխարհային բանկն արձագանքել և հայտարարել էր Հանրային-մասնավոր ենթակառուցվածքների խորհրդատվական կառույցի (ՀՄԵԽԿ) դրամաշնորհով ֆինանսավորվող ուսումնասիրության մրցույթ, որի արդյունքում գերմանական «Ֆիխտներ» ընկերությունն ընտրվել է իրականացնելու:

«Երևան քաղաքում մասնավոր հատվածի մասնակցությամբ կոշտ թափոնների գործածության համակարգի զարգացման վերաբերյալ խորհրդատվական ուսումնասիրություն»:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է խորհրդատվական ուսումնասիրության 9 փոխկապակցված առաջադրանքներից 6-րդը: Առաջադրանքի նպատակն է. աջակցել կառավարությանը և քաղաքային իշխանություններին համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման և բնագավառի կարգավորման գործընթացում:

1.2 Հանրային-մասնավոր համագործակցության ակնկալվող սցենարը

Սույն առաջադրանքը Երևան քաղաքի ՔԿԹ բնագավառի համար պահանջում է ՀՄՀ կենսունակ տարբերակի մշակում: Այն, իր հերթին, պահանջում է, որպեսզի ուժի մեջ մտնի և լիարժեք գործի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը: Հակառակ պարագայում, Երևանը չի ունենա տեղական ինքնակառավարման մեկ մարմնի (մունիցիպալիտետի) կարգավիճակ: Կիրառվող համապատասխան օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով ընդունված կանոնակարգերի ուսումնասիրության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի¹ հետ մի շարք քննարկումների և հարցազրույցների

¹ Սույն առաջադրանքի շրջանակներում կազմակերպված հարցազրույցների և հանդիպումների մասին մանրամասն տեղեկատվությունը բերված է Հավելված Ա-ում:

արդյունքում, որպես առավել կենսունակ դիտարկվեցին և հետագա ուսումնասիրության ընթացքում որպես հիմք ընդունվեցին հանրային-մասնավոր համագործակցության հետևյալ նախնական սցենարները.

1. Որպես տեղական ինքնակառավարման «մեկ» մարմին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն Երևան քաղաքը կբաժանվի թափոնների հավաքման ծառայությունների մատուցման երկու, մոտավորապես հավասարաթեք, շրջանների (տարածքների) և Նուբարաշենի աղբավայրի միջև:
2. Այս շրջաններից յուրաքանչյուրում թափոնների հավաքման ծառայություններ մատուցելու համար Երևանի քաղաքապետի կողմից կտրվի «մեկական» թույլտվություն: Մեկ թույլտվություն կտրվի նաև աղբավայրի (դրա մասերի) շահագործման համար:
3. «Թափոնների հավաքման ծառայությունը» կներառի Երևանի հիշատակված երկու սպասարկման շրջաններում թափոնների հավաքումը, փոխադրումը (պահեստավորումը) և տեղադրումը, ինչպես նաև (այս դրույթը դեռևս հետագա դիտարկման առարկա է) փողոցների սանիտարական մաքրումը², որն իր մեջ կներառի փողոցների մաքրման և ձյան հեռացման աշխատանքները:
4. Աղբավայրի շահագործման ծառայությունն կներառի Նուբարաշենի աղբավայրի (դրա մասերի) կառուցումը և շահագործումը:
5. Թափոնների հավաքման ծառայության մատուցման յուրաքանչյուր պայմանագրի տևողությունը կկազմի 10 տարի, ինչը թույլ կտա ապահովել համապատասխան ներդրումների լրիվ մարում (ամորտիզացիա) և շահույթի գրավիչ մակարդակ:
6. Գործունեության առաջին 5 տարիների ընթացքում թափոնների հավաքման ծառայություններ մատուցողներից (օպերատորներից) յուրաքանչյուրը կստանա ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք, իսկ հետագա 5 տարիների ընթացքում, ընկերությունները կգործեն «մասնակի բացառիկության» պայմաններում, ինչը օպերատորներից յուրաքանչյուրին հնարավորություն կտա պայմանագրեր կնքել սպասարկման մյուս շրջանում գտնվող և ծառայությունից օգտվող առևտրային կազմակերպությունների հետ:
7. Մատուցված ծառայությունների համար հաշիվների պատրաստումը, ներկայացումը և վճարների գանձումը կիրականացվի քաղաքապետարանի կողմից: Միևնույն ժամանակ, ունենալով քաղաքական ընտրության հնարավորություն, քաղաքապետարանը կապահովի բոլոր ծախսերի փոխհատուցումը վճարների գանձման, կամ բնակչության (պատվիրատուների) որոշակի խմբերի սուբսիդավորման միջոցով:
8. Մատուցված ծառայությունների դիմաց օպերատորը կվարձատրվի Երևանի քաղաքապետարանի կողմից: Վճարը կգանձվի թափոնների հավաքման (և սանիտարական մաքրման) ծառայությունների մատուցման դիմաց և կսահմանվի, ելնելով գնային առաջարկներից (որի նպատակն է. նվազեցնել ֆինանսական բեռը, քանի որ մատուցվող ծառայությունների դիմաց նվազագույն վճար

² ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից և Երևանի քաղաքապետարանից ստացվել են ստույգ ցուցումներ ծառայությունների փաթեթում սանիտարական մաքրման ծառայությունների (փողոցների մաքրում / լվացում և ձյան հավաքում) ներառման վերաբերյալ:

առաջակող կողմը մրցույթի ընթացքում կստանա առավելագույն գնահատականը) և օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների (կատարողականի) որակից: Ծառայությունների անհրաժեշտ որակի ապահովման նակարդակը կանդրադառնա օպերատորի կողմից վճարների ստացման պարբերականության վրա:

Սա Հայաստանում և Երևանում ՔԿԹ բնագավառի առավել համապարփակ և մանրամասն ուսումնասիրության առաջին փուլն է: Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում անհրաժեշտ է իրականացնել բնագավառին յուրահատուկ օրենսդրական դաշտի հետագա համապատասխանեցում ԵՄ օրենսդրությանը (EU *acquis communautaire*), կիրառելով ժամանակակից սկզբունքներ և պահանջներ (չրջակա միջավայրին պատճառած վնասի փոխհատուցման նպատակով աղտոտողի կողմից կատարվող վճարներ, հետագա խնամքի սկզբունք և այլն) և սահմանելով կարգավորման համապատասխան ռեժիմ:

Եթե Հայաստանը ձեռնամուխ լինի կիրառելու ՀՄՀ ավելի լայն քաղաքականություն, թափոնների գործածության (կառավարման) բնագավառում շուկայի հետագա ազատականացումը հնարավոր կլինի ապահովել ՀՄՀ գործակալության և ՀՄՀ գործընթացը կարգավորող համապատասխան օրենքի միջոցով: Որպես այլընտրանք, պայմանագրային և ոլորտին վերաբերող կանոնակարգերի նպատակները կարող են ապահովվել ներգրավված կողմերի միջև հարաբերությունները սահմանող ծառայությունների մատուցման պայմանագրերի միջոցով:

1.3 Հիմնական թերությունները

Ներկայումս կիրառվող օրենքները և իրավական այլ ակտեր թույլ չեն տալիս իրականացնելու ՀՄՀ վերը նկարագրված սցենարը: Կան մի շարք խնդիրներ, որոնցից առավել կարևորներն են.

- (ա) **Հաշիվների վճարումը.** Եթե քաղաքապետարանը որոշում է թափոնների հավաքման գործընթացը իրականացնել ոչ թե սեփական ուժերով, այլ համապատասխան մասնագիտացված կազմակերպության միջոցով, ապա թափոնների հավաքման ծառայություններ մատուցող այդ կազմակերպությունը պետք է յուրաքանչյուր սպասարկվողի հետ կնքի անհատական պայմանագիր: Որպես հետևանք, ծառայություններ մատուցողը բնակիչներին կարող է հաշիվներ ներկայացնել միայն հիշատակված պայմանագրերի հիման վրա և համապատասխան գումարների հարկադիր գանձումն ապահովել դատական կարգով (ըստ ընդդատության):
- (բ) **Թույլտվությունների ստացումը.** Ներկայումս գոյություն չունի թույլտվությունների տրման կամ լիցենզավորման համապատասխան համակարգ՝ առնվազն ՔԿԹ-ին վերաբերող գործունեության կարևոր շղթայի մասով: Թերևս, անհրաժեշտություն չկա բնագավառում ներգրավվող գործունեության բոլոր տեսակները դարձնել «լիցենզավորման» առարկա, սակայն որոշ տիպի թույլտվությունների ստացումը կամ գրանցումը պարտադիր է: Դա անհրաժեշտ է համապատասխան ծառայությունների մատուցման, դրանց պատշաճ որակի և ներդրողների կողմից կատարված ներդրումների շահութաբերության երաշխավորման համար:

- (գ) «Թափոններ» հասկացության սահմանումը. Ներկայումս չկա ՔԿԹ հստակ և համաձայնեցված սահմանում, ինչպես նաև ՔԿԹ հստակ տարանջատում վտանգավոր թափոնների կատեգորիաներից: Սակագների որոշման և տարբեր սակագնային ռեժիմների կիրառման նպատակով անհրաժեշտ է ՔԿԹ-ն տարանջատել «կենցաղային թափոններ» և «արտադրության թափոններ» կատեգորիաներից:

Ներկայումս պոտենցիալ ներդրողը կարող է հայտնվել մի միջավայրում, որտեղ մատուցված ծառայությունները փոխհատուցվում են հավաքագրված վճարների միջոցով, որոնք պետք է հիմնված լինեն ծառայությունից յուրաքանչյուր օգտվողի հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի վրա: Գոյություն չունեն նաև ծառայության մատուցման երաշխավորված (բացառիկ) տարածքներ և, հետևաբար, երաշխավորված չեն այն եկամուտները, որոնք կստացվեն ծառայությունից օգտվող խոշոր առևտրային կամ զակերպություններից: ՔԿԹ-ի հստակ սահմանման բացակայության և թափոնների համապատասխան կատեգորիաների բաժանման բացակայության պայմաններում, պոտենցիալ արտասահմանյան ներդրողը չի կարող լիարժեք մատուցել ծառայությունները:

Երևանի ՔԿԹ բնագավառը պոտենցիալ ներդրողների համար գրավիչ դարձնելու նպատակով վերը հիշատակված սցենարը պետք է էապես փոփոխվի:

1.4 Առաջարկություններ

Ներդրողի և ՀՄՀ-ի համար այս միջավայրը բարենպաստ դարձնելու նպատակով, գործող օրենսդրության մեջ անհրաժեշտ է կատարել երկու փոփոխություն: Փոփոխությունները պետք է կատարվեն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում և «Թափոնների մասին» ՀՀ օրենքում:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվող փոփոխությունների նպատակն է թափոնների հավաքման ծառայությունների դիմաց վճարումները դարձնել պարտադիր: Հետևաբար, այլևս չի պահանջվի կնքել անհատական պայմանագրեր:

Հաջորդ փոփոխությունը կկատարվի «Թափոնների մասին» ՀՀ օրենքում, ուր կներառվեն կենցաղային և արտադրության (առևտրային) թափոնների հստակ և պարզ սահմանումները: Սա անհրաժեշտ է ծառայություններից օգտվող համապատասխան խմբերի համար տարբեր ռեժիմների կիրառման համար (սակագների և թափոնների կատեգորիաներից ու ծավալներից կախված՝ պարտավորությունների կատարման մասով): Միևնույն ժամանակ, «Թափոնների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է վերանայել թույլտվությունների ստացման համակարգը, որպեսզի ապահովվի թափոնների հավաքման (և սանիտարական մաքրման) ակնկալվող ծառայությունների մատուցման հստակ սահմանում:

Քաղաքականության առումով, Երևանի քաղաքապետարանը պետք է պարզաբանի մոնիտորինգի և վերահսկման իրավասությունները ու չափանիշները, որոնց մանրամասները ժամանակավորապես

կկարգավորվեն ծառայությունների մատուցման պայմանագրերով: Մասնավոր սեկտորի մասնակցության կողմնակցությունը ցուցադրող և ՀՄՀ ակնկալվող ապագա միջավայրի հիմնական սկզբունքները ուրվագծող Երևանի քաղաքապետարանի քաղաքական դիրքորոշումը (հայտարարությունը) մասնավոր սեկտորին թույլ կտա իր հաշվարկներում որպես հիմք ընդունել ծառայությունների մատուցման տասնամյա հաշվարկային ժամանակահատվածը:

Սակագների որոշումը և վճարների հավաքագրումը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի կողմից: Թափոնների հավաքման գործընթացում համատիրությունների կողմից ցուցաբերված աջակցությունը կարող է փոխհատուցվել սակագնում համապատասխան լրացուցիչ գործակից ներառելու միջոցով, համատիրությունների համար զեղչերի համակարգերի կիրառմամբ կամ համատիրություններին լրացուցիչ փոխհատուցում տրամադրելու միջոցով:

1.5 Հետագա քայլերը և ճանապարհային քարտեզը

Հաշվի առնելով պետական վարչակազմի և քաղաքապետարանի հավակնոտ նպատակը, մրցույթը մեկնարկել 2009թ. օգոստոս կամ սեպտեմբեր ամիսներին և (առաջին) պայմանագրերը կնքել մինչև 2009թ. վերջը: Առաջանում է դիտարկել սույն նպատակի իրականացմանն ուղղված ճանապարհային քարտեզի (ուղեցույցի) մշակման անհրաժեշտությունը, ինչը բավականին բարդ խնդիր է:

Ցանկացած ժամանակացույց կապված է մի շարք հանգամանքների հետ, որոնք փոփոխական են: Դա հիմնականում կապված է օրենքում պահանջվող փոփոխությունների կատարման տևողության հետ: Կառավարության կողմից ստացված տեղեկատվության համաձայն այդ գործընթացը կարող է տևել 2-ից մինչև 5 ամիս:

Այնուհետև, այդ գործընթացի իրականացման ընթացքում կառաջանա մի շարք որոշումներ ընդունելու անհրաժեշտություն, որոնք կընդունվեն ըստ որոշակի ժամանակացույցի:

Ի վերջո, անհրաժեշտ է ցուցաբերել ընթացիկ տեխնիկական աջակցություն ՀՄՀ մանրամասն սխեմայի նախագծման, մրցութային փաստաթղթերի և ծառայության մատուցման պայմանագրերի մշակման, ինչպես նաև մրցույթի և բանակցությունների անցկացման գործընթացում:

Հիշատակված գործողություններից որևէ մեկի իրականացման հետ կապված զգալի ուշացումն անմիջականորեն կանդրադառնա մնացած գործողությունների իրականացման ժամանակացույցի վրա:

Ուստի, ելնելով այս հանգամանքներից, ներկա պահին նպատակահարմար չէ ներկայացնել գործողությունների իրականացման ժամանակացույցը:

2 Հաշվետվության նախադրյալներն ու առարկան

2.1 Ծրագրի հիմնավորումը

Երևանի քաղաքային կոշտ թափոնների գործածության (ՔԿԹ) գործող համակարգը մատուցում է ՔԿԹ-ի հավաքման և հեռացման ցածրորակ ծառայություններ: Տարբեր պատճառներով և, հիմնականում, թերֆինանսավորման պատճառով քայքայված վիճակում են հայտնվել Երևանի 12 թաղային համայնքներից 11-ի համակարգերը: Բացառությամբ Կենտրոն համայնքի, ավտոպարկի նորացման ուղղությամբ վերջին 10 տարվա ընթացքում ներդրումներ գրեթե չեն կատարվել և շահագործվող մեքենաների մոտ 64%-ը (բացառությամբ Կենտրոն համայնքի) թողարկվել են առնվազն 17 և ավելի տարի առաջ: Ներկայումս իրավիճակն այնպիսին է, որ պահանջվում են անհապաղ բարելավումներ և արդիականացում:

Երևանի քաղաքապետարանը փորձում է բարելավել առկա իրավիճակը մասնավոր հատվածի ներգրավման միջոցով: Հանդես գալով ՀՀ կառավարության անունից, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, գործընթացին աջակցելու նպատակով դիմել էր Համաշխարհային բանկին խորհրդատվության ու օժանդակության խնդրանքով: Համաշխարհային բանկն արձագանքել և, հայտարարել էր Հանրային-մասնավոր ենթակառուցվածքների խորհրդատվական կառույցի (ՀՄԵԽԿ) դրամաշնորհով ֆինանսավորվող ուսումնասիրության մրցույթ, որի արդյունքում գերմանական «Ֆիխտներ» ընկերությունն ընտրվել է իրականացնելու:

«Երևան քաղաքում մասնավոր հատվածի մասնակցությամբ կոշտ թափոնների կառավարման համակարգի զարգացման վերաբերյալ խորհրդատվական ուսումնասիրություն»:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է խորհրդատվական ուսումնասիրության 9 փոխկապակցված առաջադրանքներից 6-րդը: Այն նպատակ ունի աջակցելու կառավարությանը և քաղաքային իշխանություններին նոր և/կամ փոփոխված օրենսդրության մշակման գործընթացում, ինչը կաջակցի ԿԿԹ գործածության համակարգում համապատասխան բարեփոխումների իրականացմանը և կնպաստի այդ բարեփոխումների իրականացման ընթացքում հանրային-մասնավոր համագործակցության մեխանիզմի կիրառմանը, ի բարօրություն քաղաքի և նրա բնակիչների:

2.2 Ընդհանուր և առանձնահատուկ նպատակները

Ծրագրի ընդհանուր նպատակն է՝

- բարելավել Երևան քաղաքի ՔԿԹ գործածությունը և
- գնահատել այդ նպատակին հասնելու համար մասնավոր հատվածի ներգրավումը:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

- Երևանում ՔԿԹԳ-ի ներկա իրավիճակի գնահատումը՝ հիմք ընդունելով առկա և պահանջվող ուսումնասիրությունները և թարմացվող տեղեկատվությունը
- Բնապահպանական ու հիգիենիկ պաշտպանության, մատչելիության, կարողության և տեղական պահանջների խելամիտ չափանիշերին բավարարող քաղաքային կոշտ թափոնների հավաքման ծառայության ընդունելի մակարդակը սահմանող աշխատանքային սպեցիֆիկացիայի (մասնագիր) մշակումը, ինչպես նաև հավաքման ծառայության հիմնական մակարդակի հանդեպ սպասարկման հետագա բարելավումների նույնականացումը, որոնք հնարավոր է հաշվի առնել
- Քաղաքային կոշտ թափոնների հեռացման ապագա միջոցների համար զարգացման առավել նպաստավոր մոտեցումների սահմանումը՝ ներառելով բնապահպանական և շահագործման ընդունելի չափանիշերին համապատասխանեցնելու նպատակով թափոնների կուտակման առկա վայրերի արդիականացման տեխնիկատնտեսական իրագործելիությունը
- Սակագների մակարդակների և պարբերաբար դրանց վերանայման ու հավաքագրման մեխանիզմների գնահատումը, հաշվի առնելով անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված այն առաջարկությունները, որոնք առնչվում են ՔԿԹԳ համակարգի աշխատանքային հիմնական մակարդակների ու բնապահպանական տեսանկյունից թափոնների հեռացման պատշաճ կարողությունների ապահովմանը, ինչպես նաև ՔԿԹԳ համակարգի հնարավոր հետագա բարելավման գնահատումը.
- Երևանի ՔԿԹԳ համակարգի ընդհանուր կառուցվածքային նախագծի մշակման գործընթացում դրա փաստաթղթավորումը և հիմնավորումը
- Կարգավորող օրենսդրության վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը, որը սակագնային բարեփոխումների, քաղաքային կառուցվածքում պատասխանատվությունների համապատասխան բաշխման և ՔԿԹԳ համակարգի ֆինանսավորման ու շահագործման հարցերում կրնձեռի հանրային-մասնավոր համագործակցության ապահովման հնարավորություն
- Երևան քաղաքում ՔԿԹԳ ծառայությունները մրցույթով տրամադրելու համար առևտրային ռազմավարության մշակումը, որը կօպտիմալացնի անհրաժեշտ բարելավումների ֆինանսավորումը, առավելագույնին կհասցնի ծախսերի արդյունավետությունը քաղաքի և նրա բնակչության համար, կապահովի արդար ու թափանցիկ գործընթաց, այդ ամենը համաձայնեցնելով քաղաքը ներկայացնող շահագրգիռ կողմերի հետ
- Պահանջվող խորհրդատվության և օժանդակության իրականացումը հանրային-մասնավոր համագործակցության ապահովման նախապատրաստման գործընթացում:

2.3 Ծրագրի առաջադրանքները

Ուսումնասիրությունը բաժանված է մի շարք առաջադրանքների, այդ թվում՝

- Առաջադրանք 1. Կոշտ թափոնների գործածության գործող համակարգի գնահատում
- Առաջադրանք 2. ՔԿԹԳ հավաքման համակարգի կատարողականի հիմնական պահանջների մշակում

- Առաջադրանք 3. Թափոնների հեռացման կարճաժամկետ և երկարաժամկետ տարբերակների գնահատում
- Առաջադրանք 4. ՔԿԹ համակարգին աջակցելու ֆինանսական միջոցների գնահատում և դրանց բարելավում
- Առաջադրանք 5. Երևան քաղաքում առաջարկվող ՔԿԹ համակարգի կառուցվածքային նախագծի փաստաթղթավորում
- Առաջադրանք 6. Օրենսդրության և իրավական այլ ակտերով ընդունված կանոնակարգերի կիրարկման վերաբերյալ խորհրդատվություն և օժանդակություն**
- Առաջադրանք 7. ՔԿԹ համակարգի ֆինանսավորման ու շահագործման գծով մասնավոր հատվածի մասնակցության տարբերակների նույնականացում և ՔԿԹ հիմնական ծառայությունների մատուցման ու ֆինանսավորման բիզնես ռազմավարության մշակում
- Առաջադրանք 8. Օժանդակություն ՀԱՀ մեխանիզմների իրականացմանը
- Առաջադրանք 9. Հանրության և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություն:

2.4 Սույն հաշվետվության առարկան

Սույն հաշվետվության նպատակն է աջակցել կառավարությանը և քաղաքային իշխանություններին գոյություն ունեցող օրենսդրական դաշտի ուսումնասիրության և նոր իրավական ակտերի և/կամ գործող իրավական ակտերի փոփոխությունների (լրացումների) մշակման գործընթացում, ինչը կաջակցի առաջարկվող կառուցվածքային պլանի (Առաջադրանք 5) համատեքստում ՔԿԹ համակարգում համապատասխան բարեփոխումների իրականացմանը, ինչպես նաև կնպաստի այդ պլանի իրականացման ընթացքում հանրային-մասնավոր համագործակցության մեխանիզմի կիրառմանը, ի բարօրություն քաղաքի և նրա բնակիչների:

2.5 Իրականացված գործողությունները

Սույն առաջադրանքի շրջանակում կատարված կոնկրետ գործողություններն ու ստացված արդյունքները ներառում են.

- Թափոնների գործածությանը, քաղաքային իշխանությունների լիազորություններին, կոմունալ ծառայությունների մատուցմանը, թափոնների գործածության բնագավառում գործող օպերատորների լիցենզավորման և թույլտվությունների տրամադրմանը, այդ կոմունալ ծառայությունների համար վճարների և սակագների սահմանմանն առնչվող գործող համապատասխան օրենսդրության և առաջարկվող փոփոխությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը, և
- Վերոհիշյալի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, մասնավորապես, մրցութային հիմունքներով մասնավոր հատվածի կողմից ՔԿԹ ծառայությունների մատուցման և այդ ծառայությունների շահավետ ֆինանսավորման նպատակով

հանրային-մասնավոր համագործակցության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման առումով:

3 Կիրառվող օրենսդրական և կարգավորման դաշտի քննադատական վերլուծությունը

Սույն փաստաթղթի հետագա գլուխներում «Հողված» կամ «Մաս» հասկացությունների օգտագործման դեպքում այդ հղումներն անմիջապես վերաբերում են սույն գլխում քննարկվող տվյալ օրենքին կամ իրավական ակտին, եթե այլ հղում չկա:

3.1 Երևանի ՔԿԹ բնագավառի համար ՀՄՀ նախատեսվող տարրերակը

Երևանում քաղաքային կոշտ թափոնների բնագավառի համար ՀՄՀ առաջարկվող միջավայրը (համակարգը) հանդիսանում է սույն 6-րդ առաջադրանքի իրականացման շրջանակներում ստացված նախնական տվյալների, հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ քաղաքաշինության նախարարության, Երևանի քաղաքապետի և բարձրաստիճան պաշտոնյաների հետ անցկացված մի շարք քննարկումների, ինչպես նաև աղբահանող ընկերությունների, թաղային համայնքների և մի շարք ՈԿԿ-երի մասնակցությամբ 2009թ. մարտի 11-ին անցկացված կլոր սեղանի շրջանակներում կայացած քննարկումների արդյունք է:

ՀՄՀ իդեալական սցենարը պետք է լինի շոշափելի, հակառակ դեպքում կիրառվող օրենսդրական և կարգավորող նորմատիվ դաշտի քննադատական վերլուծությունը չի ընդգրկի իրական խնդիրները, ինչի հետևանքով անհնար կլինի ներկայացնել օրենսդրության կիրարկումն ապահովող հիմնավորված և իմաստալի առաջարկություններ:

Այդ իսկ պատճառով, (նախապես համաձայնեցված) ՀՄՀ սցենարի առավելագույն ապահովումը ենթադրում է Երևան քաղաքի թափոնների հավաքման ծառայությունների մատուցման երկու (բացառիկ) շրջանների (գոտիների) բաժանում, և Նուբարաշենում թափոնների տեղադրման համար աղբավայրի կառուցում և շահագործում: Սա նշանակում է, որ կընտրվի երեք մասնակից (թափոնների հավաքման երկու ծառայություն մատուցողներ և աղբավայրի մեկ օպերատոր):

Պոտենցիալ ներդրողների կոնսորցիումը պետք է կարողանա վերադարձնել իր ներդրումները: Քննադատական վերլուծության արդյունքում անհրաժեշտ է պատասխանել հետևյալ (պարզ) հարցերին.

- Ա. Արդյոք, Երևանի ՔԿԹ գործող համակարգը (բնագավառը) թույլ է տալիս հանրային-մասնավոր համագործակցություն/մասնավոր հատվածի մասնակցություն.
- Բ. Արդյոք, Երևանի ՔԿԹ բնագավառին առնչվող և ներկայումս գործող իրավական ակտերը (կանոնները, կարգերը, կանոնակարգերը և այլն) բարենպաստ են ներդրողների համար:

Գ. Արդյոք, կա՞ն մասնավոր հատվածի ներդրումների վերադարձունն ապահովող երաշխիքներ կամ պաշտպանության մեխանիզմներ (բացի պետական երաշխիքներից):

Եթե երևանի ՔԿԹ բնագավառում մասնավոր հատվածի ներդրումները և ներգրավումը ՀՄՀ ռեժիմի ներքո ցանկալի են, ապա բոլոր վերը նշված հարցերին անհրաժեշտ է տալ ստույգ դրական «այո» պատասխան: Քննադատական վերլուծությունը կպատասխանի այս հարցերին և թույլ կտա բացահայտելու համապատասխան խնդիրները և թերությունները:

3.2 Իրավական ակտերի ստորադասությունը

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) իրավական ակտերի ստորադասությունը համապատասխանում է Կենտրոնական Եվրոպայի, այսպես կոչված, “բուրգային մոդելին”: Ըստ էության, դա նախատեսված է Սահմանադրության 6-րդ հոդվածով և հստակ սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում (Գլուխ 2, «Իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը»): Հայաստանում «իրավական ակտերի ստորադասության բուրգի» սխեմատիկ մոդելը բերված է Հավելված Բ-ում:

Համաձայն 6-րդ հոդվածի, ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքներն ընդունվում են (և փոփոխվում) ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից, կամ հանրաքվեի միջոցով:

ՀՀ Նախագահն ընդունում է «հրամանագրեր և կարգադրություններ»: ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ միայն ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում: ՀՀ կառավարության որոշումներով կարգավորման ենթակա է օրենքով չկարգավորված ցանկացած հարաբերություն (իրավական խնդիր), եթե այդ հարաբերությունը ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքով կամ ՀՀ Նախագահի հրամանագրով ու կարգադրությամբ չպետք է կարգավորվի իրավական այլ ակտերով: Բոլոր վերոհիշյալ իրավական ակտերը կարող են ընդունվել միայն որպես անհատական կամ նորմատիվ իրավական ակտեր և չպետք է հակասեն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

ՀՀ վարչապետը նորմատիվ որոշումներ ընդունում է միայն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով ուղղակի իրեն վերապահված լիազորությունների շրջանակում: Կարգավորող հանձնաժողովներն ընդունում են որոշումներ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև հրահանգներ, միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում և սահմաններում: ՀՀ նախարարներն ընդունում են հրամաններ, իսկ մարզպետները³ և երևանի ավագանին ու երևանի քաղաքապետը՝ որոշումներ և կարգադրություններ, միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: Համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը

³ Մարզը Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավոր է: Մարզերում պետական կառավարումն իրականացվում է մարզպետների կողմից՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

որոշումներ ընդունում են միայն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: Բոլոր վերոհիշյալ իրավական ակտերը կարող են ընդունվել միայն որպես անհատական կամ նորմատիվ իրավական ակտեր և չպետք է հակասեն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին⁴:

Պետական այլ մարմիններն ընդունում են միայն անհատական կամ ներքին իրավական ակտեր՝ իրավական ակտերով կամ իրենց կանոնադրություններով սահմանված լիազորությունների շրջանակում: Այդ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը չպետք է հակասեն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Գոյություն ունեն ցանկ այլ տեսակի իրավական ակտեր, որոնք, սակայն, մասամբ են առնչվում սույն հաշվետվությանը և ըստ էության ներկայացված են Հավելված Գ-ում:

3.3 Օրենքների և իրավական ակտերի ընդունումը, ուժի մեջ մտնելը, ուժը կորցնելը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (ԱԺ) (ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդված, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդված): Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և Կառավարությանը, որոնք կարող են Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել օրենքների նախագծեր:

Օրենքի ընդունման, օրենքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու համար անհրաժեշտ (միջին) ժամանակահատվածը, համապատասխան օրենսդրական նախաձեռնության մեկնարկի պահից մինչև պաշտոնական հրապարակումը, տևում է երկուսից՝ հինգ ամիս⁵: Ավելի մանրամասն տեղեկատվություն օրենքի ընդունման և փոփոխության գործընթացի մասին բերված է Հավելված Գ-ում:

3.4 Օրենսդրություն

Սույն գլխում բերված է տեղեկատվություն ՀՀ Սահմանադրության և բոլոր այն օրենքների ու իրավական ակտերի համապատասխան մասերի վերաբերյալ, որոնք ունեն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն, կամ ազդեցության ներուժ, ՔԿԹ բնագավառի և ՀՄՀ նախատեսվող սցենարի վրա:

⁴ Դատարանի դատական ակտերն ընդունվում են միայն ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված դեպքերում և սահմաններում: Դատարանի դատական ակտերը չպետք է հակասեն գործող օրենսդրությանը, գերատեսչական նորմատիվ ակտերին և ՀՀ Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերին:

⁵ Նշվածի համար հիմք են հանդիսացել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հայտարարությունները:

3.4.1 Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը

ՀՀ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն և օրենքները չպետք է հակասեն Սահմանադրությանը: Հետևաբար, ստորև ներկայացված հոդվածները և դրույթները վերաբերում են Հայաստանի Հանրապետությունում ՔԿԹ բնագավառին և ուրվագծում են Հայաստանում ՔԿԹ բնագավառի ապագա համապարփակ կարգավորող իրավական դաշտի պարտադիր սահմանները:

ՀՀ Սահմանադրությունում բացակայում է ուղղակի հղում «թափոններ»-ին: Սակայն առկա են թափոնների գործածությանը վերաբերող դրույթներ: Մասնավորապես, առկա են դրույթներ, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի պահպանությանը և բնակչության առողջությանը:

Աղյուսակ 1-ում ամփոփված են ՔԿԹ բնագավառին վերաբերող ՀՀ Սահմանադրության համապատասխան Հոդվածները և դրույթները:

Աղյուսակ 1. ՀՀ Սահմանադրության վերլուծությունը և մեկնաբանությունը

ՀՀ Սահմանադրություն	Մեկնաբանություն
Հոդված 10-ը երաշխավորում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների բանական օգտագործումը:	Թափոնների անօրինական տեղադրումը (թույլատրելի) հակասում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ այն խախտում է շրջակա միջավայրի պահպանության դրույթը: Շրջակա միջավայրի պահպանության համար խրախուսվում է նախազգուշացման (կանխարգելիչ) մոտեցումը:
Հոդված 33.2-ը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքը՝ ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:	Այս դրույթը յուրաքանչյուրի համար ՀՀ-ում նախատեսում է հիմնարար իրավունք և վիճարկելու հնարավորություն տալիս է այն դեպքում, եթե թափոնների հետ կապված չլուծված խնդիրները բացասաբար ազդեն յուրաքանչյուրի առողջության և/կամ բարեկեցության վրա:
Հոդված 33.2-ն այնուհետև երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:	Այս դրույթը բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց (ինչպես նաև բոլոր պետական հիմնարկներին) պարտավորեցնում է պահպանել շրջակա միջավայրը: Ուստի թափոնների անօրինական տեղադրումը պետք է փաստացի օրենքից դուրս ճանաչվի (ապահովվի օրինականությունը):
Հոդված 48-ը երաշխավորում է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից մեկն է իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն:	Սա բնապահպանական քաղաքականության մասին ընդհանուր ծրագրային հայտարարություն է և, այսպես կոչված, «սերունդների պայմանագիր», որը ենթադրում է, որ այսօրվա սերունդը պարտավոր է իրականացնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված բնապահպանական տեսանկյունից նպատակահարմար և կայուն ու շարունակական միջոցառումներ, այսինքն, պետք բացառվի «չկշռադատված» լուծումների ընդունումը:

ՀՀ Սահմանադրություն	Մեկնաբանություն
<p>Հոդված 48-ն այնուհետև երաշխավորում է, որ պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության իրականացման համար:</p>	<p>Այս դրույթը որոշ չափով սահմանափակում է վերը հիշատակված պարտավորությունը (իր հնարավորությունների և իրավագործությունների) շրջանակներում): Սակայն, այն չի կարող ծառայել որպես անգործության արդարացում :</p>
<p>Հոդված 89-ը երաշխավորում է, որ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, [...] առողջապահության, [...] և բնության պահպանության բնագավառներում:</p>	<p>Սա ևս մեկ դրական պայման է բարձրաստիճան պաշտոնյաների (քաղաքականություն իրականացնողների) համար՝ ՀՀ-ում բնապահպանական քաղաքականության կայուն և արդյունավետ համակարգերի ներդրման համար:</p>

Շրջակա միջավայրի և բնակչության առողջությանը (և, ըստ էության, ի թիվս այլոց, թափոնների գործածությանը) վերաբերող վերը հիշատակված դրույթները և երաշխիքները կիրարկվում են տարբեր հաստատությունների կողմից՝ մի շարք միջոցառումների իրականացման գործընթացներում:

ՀՀ Սահմանադրությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության գործում պահանջում է բազմաթիվ կողմերի (ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատների) համաձայնեցված մասնակցություն:

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը: Սակայն ՀՀ Սահմանադրությունը չի սահմանում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների մանրամասները: Ի հավելումն և, մասնավորապես, համաձայն ՀՀ Սահմանադրության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (Հոդված 5): Դա նշանակում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ունակ լինեն իրականացնելու իրենց իրավասությունների «աշխատանքային ծրագիրը»:

Համաձայն 106-րդ հոդվածի, ինքնակառավարման մարմինները (համայնքները) սահմանում են տեղական հարկեր և տուրքեր, ինչպես նաև վճարներ՝ իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց: Այն, թե ՔԿԹ գործածությունն արդյո՞ք (և որքանո՞վ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող «ծառայություններից» մեկն է, և այդ ծառայության մատուցման իրավասությունը որքանո՞վ կարելի է փոխանցել մասնավոր հատվածին, կվերլուծվի հաջորդ ենթագլուխներում:

Համաձայն 45-րդ հոդվածի, յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Սա նշանակում է, որ «պարտադիր վճարները» ենթակա են վճարման:

3.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենքը

2004 թվականին ընդունված «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (տես Հավելված Դ) ի թիվս այլոց, կարգավորում է, թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման գործընթացները: Օրենքի հիմնական խնդիրներն են (Հոդված 5՝

ա) թափոնների գործածության ոլորտում պետական միասնական քաղաքականության հիմնական սկզբունքների սահմանումը

բ) թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության վերաբերյալ հիմնական պայմանների, պահանջների և կանոնների, ինչպես նաև ռեսուրսախնայողության համար տնտեսական խթանման միջոցների սահմանումը

գ) թափոնների նվազագույն քանակությամբ գոյացման ապահովումը, տնտեսական գործունեության մեջ դրանց օգտագործման ընդլայնումը, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների վտանգավոր ներգործության նվազեցումը

դ) թափոնների գործածության ոլորտին վերաբերող հարաբերությունների իրավական կարգավորումը:

Վերը հիշատակված խնդիրների և սկզբունքների իրականացման համար, «Թափոնների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է իրավական այլ ակտերի (ենթաօրենսդրական ակտերի) ընդունում: Մի շարք նման իրավական ակտեր արդեն իսկ ընդունվել են և բերված են Հավելված Ե-ում:

Օրենքի կարևոր հոդվածներից մեկը Հոդված 4-ն է: Այն «թափոններ», հասկացությունը սահմանում է որպես արտադրության և սպառողական թափոններ, որոնք արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ են, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: Այնուհետև թափոնների տեսակները հիշատակվում են ՀՀ կառավարության երկու որոշումներում և ՀՀ բնապահպանության նախարարության երեք հրամաններում, որոնց ամփոփումը բերված է Հավելված Ե-ում:

ՔԿԹ ընդհանուր հասկացությունն ուրվագծված է ՀՀ կառավարության «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» N1161-Ն որոշման մեջ, որը, սակայն, չի բացատրում ՔԿԹ էությունը:

Համաձայն Օրենքի 4-րդ Հոդվածի, «թափոնների գործածություն» են համարվում թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասագերծմանը և թաղմանը (որպես թափոնների տեղադրման տարբերակ) ուղղված գործողությունները:

Դա նշանակում է, որ ցանկացած իրավական ակտում «թափոնների գործածության»-ը հղում կատարելիս ենթադրվելու են բոլոր վերը նշված գործողությունները, կամ, այլ կերպ ասած, թե՛ կենցաղային, և թե՛ արտադրության / առևտրային թափոնների գործածությունը:

Թափոնների հավաքումը ներառում է թափոնների հեռացման, տեսակավորման և տեղադրման հետ կապված գործողություններ: Թափոնների տեղափոխումը սահմանվում է թե՛ որպես տեղափոխում, և թե՛ որպես տեղափոխում ու պահում (տեսակավորման, օգտահանման և տեղադրման համար նախատեսված վայրերում):

Թափոնների տեղադրումը սահմանում է դրանց հետ «վարվելու հատուկ մեթոդներ»՝ վտանգավոր նյութերի տարածումը բացառելու համար, իսկ «թաղումը» սահմանված է որպես թափոնների տեղադրում՝ այլ տեսակի թափոնների համար:

«Հատուկ առանձնացված վայրերը» այն վայրերն են, որտեղ թափոնները կարող են տեղադրվել և թաղվել: Թափոնների տեղադրման (թաղման) գործունեության համար պահանջվում է թույլտվություն: Աղբավայրերը որակվում են որպես «արտոնագրված աղբավայրեր», ինչը նշանակում է որ տրվում է «թույլտվություն», բայց ոչ լիցենզիա, քանի որ չկա լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում, որը բերված է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում:

Թափոնները (սահմանված իմաստով) այնուհետև դասակարգվում են «թափոնների դասակարգման համակարգի» միջոցով և կարող են բացահայտվել թափոնների անձնագրերի միջոցով:

Հոդված 6-ը թափոնների գործածության ոլորտում սահմանում է պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները. մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությունը (տես նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պահանջները) և թափոնների գործածության ոլորտում բնապահպանական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցումը: Այդ զուգակցումը կարող է հիմք հանդիսանալ թափոնների համար ցանկացած սակագնի սահմանման համար:

Հոդված 7-ը սահմանում է թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության համակարգումը, որպես Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններ:

Հոդված 8-ը (վերաբերում է ՀՀ բնապահպանության նախարարությանը) սահմանում է թափոնների գործածության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները, որոնք, ի թիվս այլոց, թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության ձևավորմանը մասնակցությունն է, թափոնների գործածության օբյեկտների (այն է՝ թափոնների գործածության համար անհրաժեշտ ցանկացած օբյեկտների) տեղադրման վայրերի վերաբերյալ համաձայնություն տալը, թափոնների պետական հաշվառման իրականացումը, վտանգավոր և արգելված թափոնների ցանկի կազմումը, թափոնների անձնագրերի համաձայնեցումը, թափոնների պետական կադաստրի վարումը,

թափոնների գործածության ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակումը և իր իրավասության սահմաններում գերատեսչական իրավական ակտերի ընդունումը:

Յոթված 24-ը սահմանում է թափոնների գործածության նկատմամբ վերահսկողությունը՝ ՀՀ կառավարության լիազորված պետական մարմնի կողմից: Համաձայն ՀՀ կառավարության «Թափոնների գործածության ոլորտում լիազոր մարմին ճանաչելու մասին» 19.05.2005թ. թիվ 599-Ն որոշման, այդպիսի լիազորված մարմին է ճանաչվել ՀՀ բնապահպանության նախարարությունը:

Յոթված 9-ը (վերաբերում է ՀՀ առողջապահության նախարարությանը) պահանջում է, որ համաձայնեցվեն թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերը և ընդունվեն ու արդիականացվեն մարդու առողջությանն առնչվող համապատասխան ստանդարտներն ու նորմերը:

Յոթված 10-ը սահմանում է թափոնների գործածության ոլորտում տարածքային կառավարման մարմինների (մարզերի) իրավասությունները, որոնք, ի թիվս այլոց, թափոնների գործածության ոլորտում ծրագրերի նախապատրաստումը, մշակումը և դրանց իրականացման նկատմամբ հսկողության իրականացումն է, ինչպես նաև իրենց վարչական սահմաններում թափոնների տեղադրման վայրերի լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված թույլտվություններ տալը (Յոթված 10, կետ «դ»): Այդ մարմինները նույնպես կազմում են սանիտարական մաքրման սխեմաներ, իրականացնում են հսկողություն աղբահանության նկատմամբ և կատարում են թափոնների գործածության հետ առնչվող գործողությունների հաշվառում: Նրանք կարող են վերացնել (լիկվիդացնել) իրենց վարչական տարածքի սահմաններում չարտոնագրված աղբավայրերը և կազմակերպել բնակչության ներգրավումը թափոնների հավաքման գործընթացում: Դրանք տիպիկ կարգավորող գործառույթներ են, որոնք, հնարավոր է որ, անհրաժեշտ լինի որոշ չափով փոխանցել կարգավորող մարմնին:

Յոթված 11-ը նկարագրում է թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները աղբահանության նկատմամբ հսկողության իրականացման, տարածքների սանիտարական մաքրման (փողոցների մաքրում, ձյան հեռացում) սխեմաներ կազմելու, չհսկվող և չարտոնագրված աղբավայրերը վերացնելու և թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցությունը կազմակերպելու մասով:

Յոթված 12-ը և 13-ը նշում են մասնավոր և օտարերկրյա ընկերությունների ներգրավումը թափոնների գործածության բնագավառում: Սա թափոնների գործածության բնագավառում մասնավոր հատվածի մասնակցության դրական (նորմատիվ) դրույթ է, որը հնարավոր է դարձնում ՀՄՀ կիրառումը թափոնների գործածության բոլոր գործընթացներում: Յոթված 13-ում հղում է կատարվում (Կառավարության կողմից մշակված) թափոնների անձնագրավորման համակարգին: Այդ (անձնագրավորման) գործընթացն այնուհետև կարգավորվում է Յոթված 14, 15 և 16-ով:

Յոթված 17-ը սահմանում է *թափոնների հեռացման վայրերում* լիազորված պետական մարմնի կողմից պարբերական մոնիտորինգի իրականացման պարտավորությունը: Օրենքում նման հասկացություն բերված չէ, սակայն ենթադրաբար այն վերաբերում է աղբավայրերին: Դա

նշանակում է, որ աղբավայրերի մոնիտորինգն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Հոդված 19-ի «գ» կետը սահմանում է, որ թափոնների գործածության ոլորտում (գործող) իրավաբանական անձինք արտոնություններ (ենթադրաբար ստորև բերված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի համաձայն) ստանալու իրավունք ունեն:

Հոդված 20-ը սահմանում է իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց հիմնական պարտավորությունը՝ միայն հատուկ հատկացված տեղերում թափոնները տեղաբաշխելու մասով:

Հոդված 21-ը սահմանում է բնապահպանական վճարի դրույթ, որի նպատակը թափոնների օգտահանման և դրանց գոյացման նվազեցումն է:

3.4.3 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002 թվականի մայիսի 7-ին և, ի թիվս այլոց, սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և լիազորությունները: Օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր բնութագիրը և տարանջատում ինքնակառավարման մարմինների սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները: Սեփական լիազորությունները բաժանվում են պարտադիր և կամավոր լիազորությունների: Պարտադիր և պետության պատվիրակված լիազորությունները համայնքի կողմից ենթակա են առաջնահերթությամբ կատարման:

Պարտադիր և պետության պատվիրակված լիազորությունների կատարումը պարտադիր է: Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և ավագանու սահմանած կարգով: Այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորություններ վերապահող օրենքի յուրաքանչյուր հոդված բնորոշում է այդ լիազորությունների տեսակը :

Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և ավագանու սահմանած կարգով: Օրենքում թվարկված կամավոր լիազորությունները սպառիչ չեն: Տեղական ինքնակառավարման մարմիններին կարող են վերապահվել (այլ օրենքներով) նաև լրացուցիչ լիազորություններ:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված): Մասնավոր և / կամ առևտրային կազմակերպություններն այդ դրույթում հիշատակված չեն:

ՔԿԹ գործածության բնագավառի ուսումնասիրության շրջանակներում ուշադրության են արժանի տեղական ինքնակառավարման մարմինների հետևյալ լիազորությունները.

Աղյուսակ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը

Համայնքի ղեկավարը	Համայնքի ավագանին (Հոդված 16)
Կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը (կամավոր, Հոդված 37):	Հաստատում է համայնքի բյուջեն:
Կազմակերպում է աղբահանությունը (պարտադիր, Հոդված 37):	
Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը (պարտադիր, Հոդված 34):	Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:
Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը (պարտադիր, Հոդված 32):	Օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին:

Հոդված 49-ը սահմանում է, որ համայնքի պարտադիր լիազորություններն իրականացվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Բյուջետային հիմնարկները դրանք իրենց հիմնական գործունեության իրականացման համար հատկացված բյուջեով ներքին ստորաբաժանումներ են, որոնք, հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություններ, դասակարգվում են որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական / համայնքային մարմիններ:

Համայնքը կարող է ներգրավվել նույնպես շահույթ հետապնդող գործունեության մեջ: Այդ նպատակով համայնքը, իր լիազորությունների իրականացման շրջանակներում, համայնքի ավագանու որոշմամբ կարող է ստեղծել առևտրային կազմակերպություններ և լինել այդ կազմակերպությունների բաժնետեր:

Քանի որ աղբահանությունը, որպես այդպիսին, (ի տարբերություն աղբահանության կազմակերպմանը) չի հանդիսանում համայնքի պարտադիր լիազորություններից մեկը, ապա համայնքն աղբահանությունը կարող է դիտարկել որպես հիմնական մատուցվող ծառայություն: Հետևաբար, աղբահանության ծառայությունը կարող է մատուցվել համայնքի բյուջետային հիմնարկների կողմից (Հոդված 60):

Եթե աղբահանության ծառայությունները մատուցվում են մասնավոր ընկերության կամ (նույնիսկ պետական կամ համայնքային) առևտրային կազմակերպությունների կողմից, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի

պահանջներին համաձայն համայնքը պետք է անցկացնի մրցույթ: Համաձայն Հոդված 60-ի, մրցույթի պայմաններից (այն է՝ ֆինանսական փոփոխականներից) մեկը պետք է լինի «համայնքի առաջարկած սպասարկման վճարի առավելագույն չափը»: Այս ձևակերպումը պետք է նշանակի, որ ֆինանսական փոփոխականներից մեկը պետք է նպատակ ունենա նվազեցնել բեռը հասարակության համար:

Հոդված 60-ը սահմանում է, որ համայնքի սեփականություն համարվող առևտրային կազմակերպության կողմից մրցույթը շահելու դեպքում ծառայությունների իրականացման համար վճարները գանձում է տվյալ կազմակերպությունը: Իսկ 5-րդ պարբերությունը սահմանում է, որ այն դեպքում, եթե մրցույթի հաղթող ճանաչվում է համայնքի սեփականություն չհամարվող այլ կազմակերպություն, ապա հաղթող կազմակերպության հետ համայնքը կնքում է պայմանագիր, որում, ելնելով մրցույթի արդյունքներից, ամրագրվում են ծառայության իրականացման պայմանները, դրանց դիմաց գանձվող վճարները, որոնք գանձում է տվյալ կազմակերպությունը:

Այնուհետև, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը սահմանում է, որ աղբահանության ծառայությունների իրականացման համար վճարները սահմանվում են համայնքի կողմից: «Թափոնների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ թափոնների հեռացումը (աղբահանությունը) դա թափոնների հետ կապված գործողություններ են, որոնք չեն հանգեցնում դրանց օգտահանմանը: Սա նշանակում է, որ թափոնների հեռացման տակ կարելի է հասկանալ թափոնների գործածության ներքո բոլոր գործողությունները, բացառությամբ թափոնների օգտահանումից: Թափոնների հեռացման այս գործողությունների համար համայնքի ավագանին հաստատում վճարներ (աղբահանության ծառայությունների մատուցման համար):

Աղյուսակ 2. Վճարների հավաքագրման ակնարկ

Թափոնների հավաքման ծառայություն մատուցող ընկերությունը	Վճարների հավաքագրման իրավունքի ծագումը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածն է:	Իրավական հիմքերը
Համայնքի բյուջետային հիմնարկ	60 (2-րդ պարբերություն)	Ուղղակի պայմանագիր թափոններ գոյացնողների հետ
Համայնքի սեփականություն համարվող կազմակերպությունը	60 (4-րդ պարբերություն)	Ուղղակի պայմանագիր թափոններ գոյացնողների հետ
Մասնավոր կազմակերպություն (համայնքի սեփականություն չհամարվող)	60 (5-րդ պարբերություն)	«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն կնքված պայմանագիր համայնքի հետ և ուղղակի պայմանագիր՝ թափոններ գոյացնողների հետ

Անհրաժեշտ է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասով Երևանում՝ կիրառվում է ի

լրումն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի: Այս երկու օրենքների դրույթների միջև համընկնման կամ հակասությունների ծագման դեպքում գերակայությունը տրվում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին:

Հոդված 82-ը⁶ սահմանում է, որ Երևանի քաղաքապետը Երևանի Խորհրդին է ներկայացնում Երևան քաղաքի համար օրենքով (օրինակ՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը) սահմանված աղբյուրներից ձևավորվող եկամուտների սահմաններում ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև այն թույլտվությունների կարգը, որոնց համար օրենքով (օրինակ՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը) նախատեսված է տեղական տուրքի (և վճարների) գանձում: Խորհուրդը հաստատում է ներկայացված կարգերը:

3.4.4 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը

2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը վավերացվել և պաշտոնապես հրապարակվել է: Օրենքն ամբողջությամբ ուժի մեջ կմտնի Երևանի ավագանու (այսուհետ՝ Ավագանի)⁷ ընտրություններից հետո, որի անցկացման օրը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ (և որը կարող է անցկացվել ապրիլի 1-ից ոչ շուտ և 2009 թվականի դեկտեմբերի 6-ից ոչ ուշ): Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Երևանը կդառնա մեկ համայնք:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և եթե առկա են Երևանում տեղական ինքնակառավարման հետ կապված այդ օրենքով չկարգավորվող հարաբերություններ, ապա դրանք կարգավորվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով այնքանով, որքանով դրանք չեն հակասում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին:

Ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմինն է: Այն վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ, ներառյալ աղբահանության կազմակերպման վերաբերյալ (Հոդված 11 և Հոդված 55, 1-ին մաս, 11-րդ կետ):

⁶Նշված դրույթի կապակցությամբ տես 3.4.4 («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) ենթագլխի 2-րդ պարբերությունը:

⁷ Արդեն ուժի մեջ են մտել հետևյալ դրույթները.

1. 29 հոդվածի 1-ին մաս. նորընտիր Ավագանու առաջին նիստը գումարելու մասով
2. Հոդված 108. Երևանի թաղային համայնքների ներկա ղեկավարների և ավագանու լիազորությունների իրականացման մասով
3. Հոդված 109. Ավագանու առաջին ընտրության անցկացման օրվա մասով
4. Հոդված 110. Երևանին փոխանցվող սեփականության և Երևանի ֆինանսավորման մասով

Օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում Ավագանին սահմանում է տեղական հարկեր և տուրքեր, համայնքի (Երևան) մատուցած ծառայությունների դիմաց սահմանում է վճարներ: Նշված լիազորության իրականացման ընթացքում Ավագանին կարող է առաջ-նորդել գոտիավորման սկզբունքով, ընդ որում՝ տարբեր հարկերի, տուրքերի, վճարների համար կարող են սահմանվել տարբեր գոտիա-վորումներ (Հոդված 12, 1-ին մաս, 6-րդ կետ):

«Երևանի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով Երևանի մատուցած ծառայությունների» համար Ավագանին սահմանում է վճարներ, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայու-թյունների սակագները հաստատում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Ծառայությունների դիմաց գանձվող գումարներն ուղղվում են Երևանի բյուջե (Հոդված 85):

Թափոնների գործածության ծառայությունների փաստացի մատուցումը («աղբահանության կազմակերպումը») քաղաքապետի լիազորությունն է, որը ՔԿԹ գործածության ծառայությունների մատուցումը կարող է կազմակերպել հետևյալ կազմակերպությունների միջոցով.

- Քաղաքապետարանի կողմից կառավարվող կազմակեր-պություններ
- Երրորդ անձանց միջոցով, որոնք կընտրվեն մրցութային հիմունքներով համաձայն «Գնումների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների պահանջների⁸:

Ավագանին թափոնների գործածության ծառայությունների մատուցման պայմանագրերը կարող է «ճանաչել» որպես Երևանի համար էական նշանակություն ունեցող պայմանագրեր: Եթե Ավագանին այդպիսի որոշում կայացնի, ապա ցանկացած նման պայմանագիր կհանդիսանա Ավագանու պաշտոնական հաստատման առարկա (Հոդված 24, 1-ին մաս, 1-ին կետ):

Ավագանին նաև սահմանում է ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը: Սա նշանակում է, որ Ավագանու կողմից են որոշվում համապատասխան վայրերը, կանոնակարգերը, ինչպես նաև տեխնիկական միջոցների ստանդարտները (Հոդված 12, 1-ին մաս, 8-րդ կետ):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ (թափոնների գործածության մասով) Ավագանին՝

- կարող է սահմանել քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի իրականացման լրացուցիչ պայմաններ (Հոդված 12, 1-ին մաս, 13-րդ կետ), որոնք կներառեն թափոնների գործածությունը քաղաքաշինության ոլորտում (դա կարող է վերաբերվել աղբամուղների հետ կապված խնդիրներին, դրանց վերանորոգման ու սպասարկման հետ կապված ֆինանսական միջոցների պակասությանը),

⁸ Սակագների սահմանման և վճարների գանձման առանձնահատկությունները բերված են 3.4.11 (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք), 3.4.3 («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) և 3.5.2 (Վճարների սահմանում և վճարների գանձում) ենթադրույթներում:

- ի լրումն առևտրի հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների կարող է սահմանել Երևանում այդ կանոնների կիրառման լրացուցիչ պայմաններ, ինչպես նաև լրացուցիչ կանոններ (Հոդված 12, 1-ին մաս, 24-րդ կետ),
- կարող է սահմանել առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներ ու շնորհման կարգ:

Թափոնների գործածության բնագավառում Ավագանին կարող է հասնել իր նպատակներին, իրականացնելով իր լիազորությունները համայնքի ենթակայության այն կազմակերպությունների / ընկերությունների միջոցով, որոնք ներգրավված են (կամ կարող են ներգրավվել) թափոնների գործածության գործընթացում (Հոդված 12, 1-ին մաս, 10-րդ կետ)⁹:

Վերջապես, Ավագանին կարող է կարգավորել թափոնների գործածությունը, այն ներառելով Երևանի զարգացման միանյա, քառանյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերում (Հոդված 12, 1-ին մաս, 11-րդ կետ): Երևանի զարգացման այդ ծրագրերը / նախագծերը ներկայացնում է Երևանի քաղաքապետը (Հոդված 53, 1-ին մաս, 3-րդ կետ): Այսպիսով, թափոնների գործածության շրջանակները կարող են ներառվել անմիջապես Երևան քաղաքի զարգացման ծրագրերում:

Երևանի զարգացման ծրագրերին վերաբերող Հոդված 83-ը նկարագրում է զարգացման նման ծրագրերի բովանդակությունը և ուղղությունները, ինչպես նաև Երևանի քաղաքապետի համապատասխան պարտավորությունների շրջանակները:

Ջարգացման ծրագրերը և նախագծերը հաստատվում են Ավագանու կողմից, իրականացվում են գործադիր մարմնի կողմից՝ Ավագանու (որպես Երևանի տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին) վերահսկողության ներքո, որի իրականացմանը ներգրավվում են նաև գործադիր մարմնի տարածաշրջանային միավորները (վարչական շրջանների միավորները) իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Երևանի քաղաքապետը, որպես գործադիր մարմին, ի թիվս այլոց, իրականացնում է նաև հետևյալ լիազորությունները:

- իրականացնում է վերահսկողություն վարչական շրջանի ղեկավարի գործունեության նկատմամբ և պատասխանատու է նրանց լիազորությունների պատշաճ իրականացման համար (Հոդված 52, 1-ին մաս, 11-րդ կետ).
- օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի և տուրքերի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց վճարների գանձումը (Հոդված 54, 1-ին մաս, 4-րդ կետ).

⁹ Ավագանին կարող է նաև անուղղակի կարգավորել թափոնների գործածությունը, որոշում ընդունելով Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնների վերաբերյալ (Հոդված 12, 1-ին մաս, 30-րդ կետ), ինչը ոչ միայն բնապահպանական, այլ նաև թափոնների գործածության խնդիր է:

- ավագանուն է ներկայացնում վարչական շրջանի ղեկավարի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանման նպատակով պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափը (Հոդված 55, 1-ին մաս, 3-րդ կետ)։
- իրականացնում է վերահսկողություն Երևանի տարածքում գտնվող շենքերի, շինությունների նպատակային օգտագործման և պահպանման նկատմամբ (Հոդված 55, 1-ին մաս, 7-րդ կետ), ինչը ներառում է նաև թափոնների գործածությունը, և
- կազմակերպում է աղբահանությունը, քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, այգիների և փողոցների մաքրումը (Հոդված 55, 1-ին մաս, 11-րդ կետ)։

Երևանում արդյունավետ տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում իրականացնելու համար, Երևան քաղաքը բաժանվում է 12 վարչական շրջանների¹⁰։ Յուրաքանչյուր շրջանում ղեկավարությունն իրականացվում է Երևանի քաղաքապետի կողմից նշանակվող վարչական շրջանի ղեկավարի (ՎՇՂ) կողմից։ ՎՇՂ-ն կազմում է վարչական շրջանի զարգացման ծրագիրը և այն ներկայացնում քաղաքապետին (Հոդված 91, 1-ին մաս, 2-րդ կետ)։ Հանդիսանալով Երևանի զարգացման ծրագրի առանձին բաժին, ցանկացած նման զարգացման ծրագիր (Հոդված 83), հաստատվում է Ավագանու կողմից և հրապարակվում է։

Ավագանին սահմանում է վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը (Հոդված 91, 2-րդ մաս)։

ՎՇՂ-ն, ի թիվս այլոց, իրականացնում է ավագանու որոշումներով սահմանված լիազորությունները և իրականացնում վարչական շրջանի ղեկավարումը (որպես վարչակազմի ղեկավար)։ ՎՇՂ-ն ունի ՔԿԹ գործածության առնչվող հետևյալ լիազորությունները.

- իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ և կարգադրություններ (Հոդված 91, 1-ին մաս, 8-րդ կետ)։
- մասնակցում է Երևանի բյուջեի (և վարչական շրջանի) բյուջեի ձևավորմանը, և
- կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանությունը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից (Հոդված 94, 1-ին մաս, 8-րդ կետ)։

3.4.5 «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 26-ին։ Օրենքն, ի թիվս այլոց, սահմանում է.

- (ա) տեղական տուրքերի և վճարների բնույթը
- (բ) տեղական տուրք և վճար՝ վճարողների
- (գ) տեղական տուրքերի և վճարների սահմանումը, դրանց գանձման կարգը և պայմանները։

¹⁰ Վարչական շրջաններն են. Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ - Զեյթուն

Օրենքը սահմանում է համայնքի բյուջե գանձվող պարտադիր տեղական տուրքեր և վճարներ վճարողներին, և տուրքերի ու վճարների տեսակները (Գլուխ 2 և 3): Ի հավելումն, սահմանված է նաև, որ Օրենքով չսահմանված վճարները գանձվում են տեղական ինքնակառավարման մարմինների և (կամ) նրանց հիմնադրած ձեռնարկությունների կողմից՝ համապատասխան քաղաքացիական պայմանագրերի շրջանակներում՝ համաձայն ՀՀ օրենքների և իրավական այլ ակտերի (Հոդված 1, 2-րդ կետ):

Հոդված 8-ը, որն ունի սպառիչ բնույթ, սահմանում է պարտադիր հանդիսացող վճարների ցանկը: Դրանք այն վճարներն են, որոնք ենթակա են վճարման որոշակի գործողությունների դիմաց, կամ, այլ կերպ ասած, այս վճարները ենթակա են պարտադիր վճարման: Աղբահանության ծառայություններն այստեղ հիշատակված չեն: Աղբահանության ծառայությունների մատուցման դեպքում՝ ինչպես ցանկացած այլ վճարների գանձման համար, քաղաքացիաիրավական պայմանագրի առկայությունն անհրաժեշտ է:

3.4.6 «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքը

«Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին: Օրենքը կարգավորում է բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման հարաբերությունները և սահմանում է բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման կարգը, կառավարման ձևերը, շենքի կառավարման մարմինների իրավասությունները, դրանց կազմավորման, գործունեության, գործունեության դադարեցման կարգը (Հոդված 1):

ՔԿԹ առումով այդպիսի ընդհանուր բաժնային սեփականություն են հանդիսանում (բազմաբնակարան շենքերի մեծամասնությունում առկա) աղբամուղերը և գետնի մակարդակի վրա տեղակայված աղբախցերը, ինչպես նաև, հավանաբար, աղբարկղները և կոնտեյներները, որոնք կօգտագործվեն աղբախցից աղբի հավաքման համար (հետագայում) կամ, հակառակ դեպքում, կտեղադրվեն այնպես, որպեսզի օգտագործվեն շենքի բնակիչների կողմից (սակայն, ոչ թափոնների նախնական հավաքման կետերում):

Ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է: Ժողովի լիազորություններից է կոմունալ (այդ թվում նաև աղբահանության) ծառայություններ մատուցողների հետ պայմանագրերի կնքումը (Հոդված 11):

Համաձայն Հոդված 17-ի, ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրականացվել հետևյալ ձևերով,.

- ա) շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի՝ համատիրության միջոցով
- բ) լիազորագրային կառավարչի (ներկայացուցչության) միջոցով
- գ) հավատարմագրային կառավարչի միջոցով:

Իրենց լիազորություններն իրականացնելիս վերոհիշյալ մարմինները պայմանագրեր են կնքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (Հոդվածներ 18, 19 և 20) սահմանված կարգով:

Հիշատակված մարմինների հիմնական գործառույթներից մեկը ՀՀ կառավարության 04.10.2007թ «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» N1161-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր նորմերի» կատարումն է: Այս որոշումն, ի թիվս այլոց, սահմանում է, որ բազմաբնակարան շենքերում սպառման թափոնների հեռացումը պետք է իրականացվի (առնվազն) երեք օրը մեկ անգամ: Այսպիսով, ՔԿԹ հեռացման (աղբահանության) կազմակերպումը բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների պարտականությունն է:

3.4.7 «Համատիրության մասին» ՀՀ օրենքը

«Համատիրության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին: Օրենքը սահմանում է համատիրության իրավական կարգավիճակը, համատիրության ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգը:

Համատիրությունը «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված մարմիններից մեկն է, որի միջոցով իրականացվում է շենքի կառավարումը: Համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է (Հոդված 3):

Հոդված 5-ը սահմանում է համատիրության հիմնական նպատակները.

- ա) օրենքով սահմանված կարգով իրականացնել բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը
- բ) օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնել և պաշտպանել շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր շահերը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական և այլ իրավասու մարմիններում
- գ) իրականացնել այլ խնդիրներ, այդ թվում՝ կոմունալ ծառայություններ մատուցողների հետ շենքի կառավարման մարմնի կողմից կնքել պայմանագրեր, որոնք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Քանի որ ՀՀ կառավարության 04.10.2007թ «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» N1161-Ն որոշումը պարտադիր է նաև համատիրությունների համար, ապա ՔԿԹ (առնվազն երեք օրը մեկ անգամ) հեռացման պայմանը պետք է ապահովվի թափոնների հեռացման (աղբահանության) ծառայություններ մատուցող ընկերության հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագրի կնքման միջոցով:

3.4.8 «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2001թ. մայիսի 30-ին, ի թիվս այլոց, սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, լիցենզավորման ընթացակարգերը (պարզ և բարդ): Գլուխ 7-ում սահմանված են (սպառիչ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները: Ռադիոակտիվ և վտանգավոր թափոնների մասով գործունեության տեսակները թվարկված են Հոդված 43-ում:

ՔԿԹ և աղբավայրերի կառուցումը և շահագործումը հիշատակված չեն, ինչը նշանակում է, որ գործունեության այդ տեսակները լիցենզավորման առարկա չեն:

3.4.9 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1995թ. նոյեմբերի 20-ին: Օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Օրենքի համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեության տեսակներից են նաև թափոնների գործածության ոլորտում վտանգավոր և այլ թափոնների հեռացման կամ այդ նպատակով մշակման, ինչպես նաև թափոնների հեռացման օբյեկտները: Փորձաքննության բացասական եզրակացության դեպքում նախատեսվող գործունեության իրականացումն արգելված է:

Ռա նշանակում է, որ աղբավայրերին վերաբերող ցանկացած գործունեություն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պարտադիր առարկա է, մինչդեռ ՔԿԹ հավաքման և տեղափոխման հետ կապված գործունեությունն այդ Օրենքով չի կարգավորվում:

3.4.10 «Գնումների մասին» ՀՀ օրենքը

«Գնումների մասին» ՀՀ օրենքն, ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 6-ին: Օրենքը կարգավորում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության և համայնքների կազմակերպությունների և հիմնարկների (ներառյալ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունները) և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

Ի տարբերություն բազմաթիվ այլ օրենքների, այդ օրենքում չկա հայտերի շրջանակը սահմանափակող բացասական այնպիսի դրույթ, ինչպիսին է, օրինակ, ՀՄՀ կամ կոնցեսիոն տիպի գործարքների բացառումը: Ուստի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն ՀՄՀ-ն, թափոնների գործածության բնագավառում, մրցույթի առարկա է:

Գնումների ձևերը հետևյալներն են.

- ա. բաց մրցույթ
- բ. սահմանափակ մրցույթ
- գ. գնանշման հարցում
- դ. մրցակցային բանակցություններ (համանման է ԵՄ մրցակցային երկխոսությանը)
- ե. գնումներ մեկ անձից (կիրառվում է սահմանափակ դեպքերում):

Չնայած պետական գնումների գործակալության ստեղծմանը, փորձը ցույց է տալիս, որ քաղաքապետարանները և ինքնակառավարման մարմինները իրենք են կազմակերպում և անցկացնում իրենց գնումները՝ համայնքի ավագանու վերահսկողության (այսինքն կառավարման) ներքո:

Համաձայն ստացված տեղեկատվության¹¹, հայտնի է, որ ենթակառուցվածքային այլ բնագավառներում, ինչպիսիք են էլեկտրամատակարարման և երկաթգծային փոխադրումների բնագավառները, գործում են բնագավառին հատուկ գնումների ընթացակարգեր, որոնք *lex specialis* սկզբունքի կիրառման պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի նկատմամբ ստանում են գերակայություն:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ «Թափոնների մասին» ՀՀ օրենքում բացակայում են նման վերապահում նախատեսող դրույթ և գնումների անցկացման յուրահատուկ ռեժիմ, ինչը նշանակում է, որ իրավաբանական տեսանկյունից, ՀԱՀ տարբերակների գնումները պետք է իրականացվեն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների:

3.4.11 ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է 1998թ.: Օրենսգիրքն, ի թիվս այլոց, կանոնակարգում է գույքային իրավունքները: Սա կարևոր է քանի որ Օրենսգիրքը կարգավորում է ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) միջև իրավահարաբերությունները (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, երկրորդ բաժին, Հոդվածներ 20, 50, 128 և 129):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում թվարկված են համայնքների պարտադիր լիազորությունները, որոնցից մեկը աղբահանության կազմակերպումն է: Համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, թափոնների հավաքումը ներառում է թափոնների հեռացման, տեսակավորման և հատուկ հատկացված վայրերում տեղադրման հետ կապված գործունեությունը: Այսպիսով, թափոնների հավաքումը կարող է իրականացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ բաժնի 39-րդ գլխով սահմանված ծառայությունների մատուցման պայմանագրերի համաձայն:

Հետևաբար, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն՝ պարտա-

¹¹ Տեղեկատվությունը ստացվել է Համաշխարհային բանկից՝ հաշվետվության առաջին և վերանայված վերջնական տարբերակների վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունների տեսքով:

վորվում է վճարել այդ ծառայությունների համար: Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը պետք է կնքվի գրավոր: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում այս խնդրին առնչվող հոդվածներից են 289, 290, 296, 298 և 777 հոդվածները:

3.4.12 «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը

Օտարերկրյա ներդրումների մասին ցանկացած օրենք պետք է պոտենցիալ ներդրողների համար գործի որպես յուրահատուկ այցեքարտ: Այն պետք է լինի հակիրճ, ստույգ, ազատ բյուրոկրատական խոչընդոտներից, պաշտպանի ապագա ներդրողներին և նրանց ներդրումները, ինչպես նաև պարունակի տվյալ երկրում ներդրումներ կատարելու առավելություններն ապահովող համապատասխան դրույթներ:

Օրենքի անգլերեն տարբերակը պետք է թարգմանված լինի մասնագիտորեն և, հնարավորության սահմաններում, տեղական լեզվով տարբերակի (բնօրինակի) հետ հակասության դեպքում պետք է գերակա ուժ ունենա: Այլ կերպ ասած, պոտենցիալ ներդրողները պետք է հավանեն «այն, ինչ իրենք տեսնում են» և ընդունակ լինեն հիմնվել օրենքի վրա: Ներդրումներ կատարելու մասին որոշումները ընդունվում են գործադիր խորհրդի կողմից (արտասահմանում) և խորհրդի անդամները, նման որոշումներ կայացնելիս, համապատասխան երկրներում մանրամասն ուսումնասիրում են ներդրումային ռեժիմները:

Ոչ հստակ ձևակերպման օրինակ է Օրենքի 18-րդ հոդվածը, որը սահմանում է արտոնություններ օտարերկրյա ներդրումներով այն ձեռնարկությունների համար, որոնցում այդ ներդրումները հիմնադրման պահին կազմում են առնվազն երեսուն տոկոս: Այս դրույթը պարզաբանման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե խոսքն ընկերության կապիտալացման (ընկերության շրջանառության մեջ գտնվող բոլոր արժեթղթերի գումարային արժեքն՝ արտահայտված ընթացիկ գներով) մասին է, թե՞ (ծրագրի իրականացման համար) անհրաժեշտ ֆինանսական միջոցների 30%-ի մասին:

Ի վերջո, ներդրումների մասին օրենքն ընդունվում է ներդրողների համար որոշակի արտոնությունների տրամադրման նպատակով և, հետևաբար, պետք է պարունակի բարենպաստ և արդյունավետ ներդրումային պայմաններ ապահովող դրույթներ: Այդ տեսանկյունից, օրենքը կարող է կատարելագործվել: Ավելի մանրամասն վերլուծություն բերված է Հավելված Զ-ում:

3.5 Թափոնների գործածության բնագավառի առանձնահատկությունները

3.5.1 Թույլտվությունների տրամադրում և լիցենզավորում

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի անգլերեն թարգմանված տարբերակում խոսվում է լիցենզավորման ռեժիմի առկայության մասին: Օրենքի 4-րդ հոդվածում նշված են «լիցենզավորված աղբավայրերը», որոնց գործունեության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է թույլտվություն տրվի: «Արտոնագրված աղբավայրերի»

թարգմանությունը պետք է լինի «սերտիֆիկացված աղբավայրեր»:
Օրենքում սահմանված չէ աղբավայրերի արտոնագրման կամ
թույլտվությունների տրման ընթացակարգը:

Հոդված 4-ը սահմանում է, որ թափոնների տեղաբաշխման համար
նախատեսված «հատուկ հատկացված տեղերի» (օրինակ՝ աղբավայր-
երի) օգտագործման համար պահանջվում է «թափոնների հեռացման»
կամ դրանց հետ այլ գործողություններ կատարելու թույլտվություն: Սա
միակ ակնարկն է այն մասին, որ թափոնների հավաքման
ծառայությունների մատուցման համար պահանջվում է թույլտվություն:
Այնուհետև, Օրենքում, թույլտվությունների տրման (լիցենզավորման)
կապակցությամբ հիշատակվում են միայն աղբավայրերը և վտանգավոր
թափոնները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, պահանջում է, որպեսզի
ՀՀ կառավարությունը լիցենզավորման կարգ սահմանի վտանգավոր
թափոնների համար:

Հոդված 8-ի «ը» կետը և Հոդված 9-ի «գ» կետը սահմանում են, որ ՀՀ
բնապահպանության և ՀՀ առողջապահության նախարարությունները
պետք է տան իրենց համաձայնությունը թափոնների գործածության
օբյեկտների տեղադրման վայրերի վերաբերյալ:

Հոդված 10-ի «դ» կետը սահմանում է, որ տարածքային կառավարման
մարմինները տրամադրում են թույլտվություն իրենց վարչական
սահմաններում «թափոնների տեղադրման» համար: Թափոնների
թաղումը դա «թափոնների վերջնական տեղադրումն է հատուկ
առանձնացված տեղերում» (Հոդված 4):

Հոդված 10-ի «ը» կետը և Հոդված 11-ի «գ» կետը տարածքային
կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին
լիազորում են վերացնել (լիկվիդացնել) չհսկվող և չարտոնագրված
աղբավայրերը¹²:

Տեղական ինքնակառավարման մարմինները լիազորված են
իրականացնելու հսկողություն և կիրառել հարկադրման միջոցներ:
«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը լիազորում է տեղական
ինքնակառավարման մարմիններին աղբահանության նկատմամբ
իրականացնել հսկողություն և վերացնել (լիկվիդացնել) չհսկվող և
չարտոնագրված աղբավայրերը:

ՀՀ բնապահպանության նախարարությունն ունի վերահսկողություն
իրականացնելու լիազորություն («Թափոնների մասին» ՀՀ օրենքի 24-րդ
հոդված): Այդ լիազորությունը, հիմնականում, վերաբերում է վտանգավոր
թափոնների հետ կապված գործունեությանը¹³: Ի հավելումն, համաձայն
Հոդված 8-ի «ը» կետի, ՀՀ բնապահպանության նախարարությունն ունի
«համաձայնության տալու» իրավասություն, որը կարող է օգտագործվել
թափոնների գործածության (ապագա) ազգային պլանի կիրառման
գործընթացում:

¹² Գիշտ թարգմանությունը պետք է լինի «չսերտիֆիկացված աղբավայրեր»:

¹³ Նշվել է ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչների կողմից
2009թ. մարտի 9-ին անցկացված հարցազրույցի ընթացքում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, համայնքներն ունեն աղբահանության կազմակերպման վերահսկման լիազորություն և կարող են վճարներ սահմանել աղբահանության ծառայությունների իրականացման համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի Հոդված 37-ի 12-րդ կետը համայնքի ղեկավարին օժտում է աղբահանության կազմակերպման պարտադիր լիազորությամբ: Հոդված 82-ը¹⁴ Երևանի քաղաքապետին թույլ է տալիս Խորհրդին ներկայացնել մատուցված ծառայությունների ծախսային նախահաշիվները և այդ ծառայությունների մատուցման թույլտվությունների կարգը:

Սրանք են ՔԿԹ բնագավառը կարգավորող վարչական լիազորությունները:

3.5.2 Վճարների սահմանումը և գանձումը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա դրությամբ, տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի դրույթները չեն տարածվում ՔԿԹ բնագավառում մատուցվելու ծառայությունների վրա, համապատասխան վճարների սահմանման վերաբերյալ նախագիծ (առաջարկությունը) կարող է ներկայացվել.

- համայնքի ղեկավարի կողմից («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 60)
- ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարությամբ («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 7-ի 9-րդ մաս, Հոդված 27-ի 3-րդ մաս և Հոդված 27-ի 4-րդ մաս).
- ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից՝ իրենց նախաձեռնությամբ («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 7-ի 9-րդ մաս, Հոդված 27-ի 5-րդ մաս)

Վճարների սահմանման մասին բոլոր առաջարկությունները ներկայացվում են համայնքի ավագանուն «որոշման նախագծերի» տեսքով: Նախագծին կարող են կցվել նաև իրավական ակտի մշակման համար հիմք դարձած ֆինանսատնտեսական հաշվարկները, վիճակագրական տվյալները, այլ փաստաթղթեր, ինչպես նաև ներկայացվող նախագծի հիմնավորման համար անհրաժեշտ այլ տվյալներ («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 28-ի 2-րդ մաս և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 12):

Վճարների չափը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 16-ի կետ 19-ը և Հոդված 60): Որոշման նախագծերը կարող են հրապարակվել մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև կարող են դառնալ համաժողովրդական քննարկման առարկա («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 29-ի 3-րդ մաս):

¹⁴ Նշված դրույթի կապակցությամբ տես 3.4.4 («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) ենթազխի 2-րդ պարբերությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի վճարների գանձումը իրականացվում է հետևյալ կազմակերպությունների կողմից.

- Համայնքի բյուջետային հիմնարկներ (կազմակերպություններ)
- Համայնքի սեփականություն հանդիսացող բյուջետային կազմակերպություններ
- Մասնավոր առևտրային կազմակերպություններ:

Քանի որ խոսվում է մասնավոր և համայնքի սեփականություն հանդիսացող կազմակերպությունների մասին, ապա վճարների գանձումն իրականացվում է թափոնների հավաքման ծառայություններ մատուցող կազմակերպության և ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջև կնքվող ծառայությունների մատուցման անհատական պայմանագրերի հիման վրա («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, Հոդված 1-ի 2-րդ մաս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 60 և ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 777): Մրցույթի միջոցով կնքված պայմանագրերի գործողության ժամկետը երկարաձգվում է տարին մեկ անգամ: Պայմանագրի կատարումն, անհրաժեշտության դեպքում, կարող է ապահովվել դատական կարգով և համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխով սահմանված դրույթների:

3.6 Քննադատական վերլուծության եզրակացությունները

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պարտադրում է Կառավարությանն (իր իրավասությունների շրջանակներում) իրականացնել բնության պահպանությանը և յուրաքանչյուրի առողջության պահպանմանը և բարեկեցության ապահովմանն ուղղված արդյունավետ և կայուն քաղաքականություն (և այդ կապակցությամբ ընդունել համապատասխան իրավական ակտեր կամ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ): ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարում մի շարք չհստակեցված պաշտոնական լիազորությունների իրականացման համար:

Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել (համայնքի) շրջակա միջավայրի պահպանությունը և բնակչության բարեկեցության բարելավումը: Այդ կապակցությամբ տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի բնակչությանը կմատուցեն ծառայություններ, որոնց դիմաց բնակչությունից կգանձվեն համապատասխան վճարներ, որոնք, իրենց հերթին, նախատեսված կլինեն համայնքի կողմից շրջակա միջավայրի պահպանության (անվտանգության) և բնակչության բարեկեցության ապահովմանն ուղղված (սահմանադրական) լիազորությունների իրականացման համար:

Այդ ոլորտի առանձնահատկությունները պետք է կանոնակարգվեն «օրենքով»: Այդ նպատակով գործում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը և այլ օրենքներ: Եթե «ծառայությունները» մատուցված են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ապա կարող են (և պետք է) գանձվել համապատասխան վճարներ (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 106) և այդ

վճարները կարող են լինել «պարտադիր վճարներ» (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 45):

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը թափոնները սահմանում է որպես «արտադրության և սպառման թափոններ»: Օրենքը «թափոնը» տարանջատում է մի շարք (բայց ոչ բոլոր) վտանգավոր թափոններից: Այդ առումով Օրենքը կարող է կատարելագործվել: Նախ և առաջ, գոյություն ունեն թափոնների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են, օրինակ, աղտոտված հողերը, կենդանիների լեշը և այլն, որոնք հիշատակված չեն Օրենքում: Երկրորդ, թափոնների յուրաքանչյուր դասի համար գործածության առանձին, յուրահատուկ ռեժիմի կիրառման նպատակով անհրաժեշտ է տարանջատել արտադրության և սպառման (կենցաղային) թափոնները: Օրինակ, համաձայն Օրենքի թե՛ արտադրության (առևտրային), և թե՛ սպառման թափոնները անձնագրավորման առարկա են, ինչն անտրամաբանական է կենցաղային թափոններ գոյացնողների դեպքում: Այսպիսով, քաղաքային կոշտ թափոնները պետք է սահմանվեն որպես ոչ վտանգավոր թափոններ և տարանջատվեն «առևտրային» և «կենցաղային» թափոնների: Հիմք ընդունելով նշվածը, պետք է կիրառվեն վճարների սահմանման և թափոնների հաշվառման համապատասխան կարգեր:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (ըստ էության) չի կարգավորում սակագների կամ վճարների որոշման գործընթացը: Առկա են միայն անորոշ հղումներ թափոնների տեղադրման համար վճարների գանձման և հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցման սկզբունքին:

Օրենքը հղում է կատարում վտանգավոր թափոնների վերանշակման, վնասագերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորմանը: Բացի դրանից, Օրենքում հղում է արված աղբավայրերի և թափոնների հեռացման (Երևանի Նուբարաշենի գործող աղբավայր) արտոնագրման համակարգին: Ընդհանուր առմամբ, թույլտվությունների տրամադրման համակարգն ավելի շատ հիմնված է փաստացի փորձի, քան Օրենքի դրույթների վրա:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, որպես տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին, Երևանի Ավագանին իրականացնում է վերահսկողություն, այդ թվում նաև թափոնների գործածության կազմակերպման (ինչն ի սկզբանե Երևանի քաղաքապետի լիազորությունն է) հետ կապված գործունեության նկատմամբ: Ավագանին կարող է հայտարարել, որ թափոնների գործածությունը / աղբահանությունը Երևանի համար ունեն էական նշանակություն և, հետևաբար, այդ ծառայությունների մատուցման պայմանագրերը Ավագանու հաստատման առարկա կհանդիսանան:

Երևանի քաղաքապետը, որպես տեղական ինքնակառավարման մարմին, կազմակերպում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարների գանձումը և կազմակերպում է աղբահանությունը և փողոցների մաքրումը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքն օգտագործում է «վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունները և դրանց իրականացումը վերագրում է տարբեր մարմիններին: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նույնպես լիազորություններ է սահմանում, կիրառելով «վերահսկողություն» հասկացությունը: Սակայն,

միևնույն ժամանակ, բացակայում են «վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունների սահմանումները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի ՀՀ բնապահպանության նախարարությունը ևս վերահսկողություն իրականացնելու լիզորություն ունի: Քանի որ թափոնների գործածությունը ներառում է թափոնների հավաքումը, տեղափոխումը և պահումը, ապա պետք է համապատասխանաբար լինեն «վերահսկող» երեք մարմիններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նպատակներից է ՀՀ Սահմանադրության համաձայն սահմանել լիազորություններ և իրավասություններ տեղական ինքնակառավարման մակարդակով: Աղբահանության կազմակերպումը համայնքի ղեկավարի (տվյալ դեպքում՝ Երևանի քաղաքապետի) պարտադիր լիազորությունն է:

Հիմք ընդունելով «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» և «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքների դրույթները, սահմանված է, որ աղբահանությունը պետք է իրականացվի առնվազն երեք օրը մեկ անգամ: Համապատասխան նշանակված մարմինները ներկայացնում են շենքի սեփականատերերին/բնակիչներին և կարող են իրենց անունից համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքել:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է պարտադիր «տեղական վճարներ»: Եթե վճարը պարտադիր է, ապա հասարակությունը, համաձայն օրենսդրության, պարտավոր է վճարել այդ ծառայությունների համար: Սա նշանակում է, որ քաղաքացիական պայմանագրերի կնքման կարիք չի լինի և վճարում չիրականացնելը կհանգեցնի վարչական տույժի: ՔԿԹ գործածությունը Հոդված 8-ում չի հիշատակվում: Հետևաբար, թափոնների հավաքման (աղբահանության) ծառայությունների մատուցման համար վճարման հետ կապված իրավահարաբերությունը «փոխանցվում է» ՀՀ քաղաքացիական օրենսգրքին:

Աղբահանության ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպության և ծառայությունից օգտվողի միջև պայմանագրային իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում: Սա նշանակում է, որ (աղբահանության) ծառայություններ մատուցող կազմակերպության և (աղբահանության) ծառայություններից օգտվողների (իրավաբանական կամ ֆիզիկական անձինք) միջև պետք է կնքվեն գրավոր պայմանագրեր: Մատուցված (աղբահանության) ծառայությունների համար ներկայացված հաշիվների չվճարումը մասնավոր իրավունքի կանոնակարգման առարկա է:

ՀԱՀ-ն կարգավորող հատուկ օրենքի, ինչպես նաև «Թափոնների մասին» ՀՀ օրենքում համապատասխան դրույթի (և ոլորտին հատուկ գնումների համապատասխան կարգի) բացակայության պայմաններում, թափոնների գործածության բնագավառում մասնավոր հատվածի / ՀԱՀ հետ կապված ցանկացած պոտենցիալ գործարքների դեպքում կիրառվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ի տարբերություն ընդհանուր հիմունքներով անցկացվող (ավանդական) պետական գնումների, ՀԱՀ մրցույթների անցկացման համար ՀԱՀ գնումները պահանջում են տարբեր բնագավառներում որակավորում և

փորձաքննություն, որի արդյունքում շատ երկրներ ընդունել են ՀՄՀ մրցույթը կարգավորող հատուկ օրենք:

Հավանաբար գոյություն ունեցող ՀՄՀ տիպի ծրագրերի համար մրցույթներն անց են կացվել բնագավառներին հատուկ օրենքներին համապատասխան (էլեկտրամատակարարում և երկաթգծային փոխադրումներ): Առայժմ այս խնդիրը լիովին չի ուսումնասիրվել (քանի որ նման ուսումնասիրությունը չի հանդիսանում սույն ծրագրի տեխնիկական առաջադրանքի մաս), սակայն այն ուրվագծում է որոշակի քաղաքական ուղղություն, որը որդեգրվում է Հայաստանի Հանրապետության կողմից: Այլ կերպ, տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանը ի հակակշռություն ավելի սահմանափակ և կենտրոնացված համակարգի, նախընտրությունը տալիս է բնագավառին հատուկ ՀՄՀ քաղաքականությանը (գնումների ընթացակարգ և նորմատիվ դաշտ):

Այդ երկու տարբերակներն էլ ունեն առավելություններ և թերություններ: ՀՄՀ տիպի գնումների անցկացումը պահանջում է յուրահատուկ հմտություններ և ունակություններ, որոնք ձեռք են բերվում ժամանակի ընթացքում: Եթե ՀՄՀ տիպի գնումները իրականացվում են մի շարք նախարարությունների կողմից և բնագավառին հատուկ օրենքի համաձայն, ապա ՀՄՀ պլանավորման, անհրաժեշտ ֆինանսական վերլուծության և ՀՄՀ գնումների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ ջանքերը պետք է բազմապատկվեն համապատասխան բնագավառների թվով: Հաշվի առնելով Հայաստանի չափերը, հավանաբար ավելի նպատակահարմար է ջանքերի կենտրոնացումը:

Մյուս կողմից, հաշվի առնելով Հայաստանի չափերը և ներուժը, միատեսակ գնումների անցկացումը և կարգավորման գործակալությունը կարող են լինել ֆինանսապես ոչ կենսունակ և *չափազանց մեծ*՝ հաշվի առնելով իր հարաբերական ներուժը և գրավչությունը: Բնագավառին յուրահատուկ մոտեցմամբ գնումների անցկացումը և (պայմանագրերի միջոցով) իրավահարաբերությունների կարգավորումը իրավական տեսանկյունից թերի տարբերակ է, քանի որ այդ դեպքում միշտ տեղի են ունենում անհարկի հակասություններ այլ օրենքների և նորմատիվ ակտերի հետ: Ոլորտը կանոնակարգող օրենքներից մեկում կատարվելիք ցանկացած փոփոխություն (օրինակ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, «Շրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենքում և այլն) ամենայն հավանականությամբ կհանգեցնի համապատասխան մյուս օրենքներում փոփոխությունների կատարմանը կամ իրավական այլ ակտերի ընդունմանը (կամ փոփոխմանը) (տես նաև գլուխ 5.1-ը):

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը հակիրճ է, սակայն օրենքի անգլերեն տարբերակը ստույգ և պարզ չէ: Հավանաբար հնարավոր է հասույթի արտահանում (էքսպատրիացիա) ինչպես նաև հնարավոր է ազատվել ներմուծման մաքսատուրքից: Պարզ չէ, թե ինչպիսին է հարկերից ազատման (և այլ արտոնությունների) աստիճանը: Օրենքը հնարավորություն է ընձեռում օտարերկրյա ներդրումների հետ կապված վեճերը քննել նաև արտասահմանում՝ արբիտրաժային տրիբունալներում: Օրենքի համաձայն օտարերկրյա ներդրումները Հայաստանի Հանրապետությունում ազգայնացման ենթակա չեն: Ներդրումների առգրավումը, որպես բացառիկ միջոց, թույլատրվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ: Սակայն,

հաշվի առնելով, որ դատական պրոցեսը անց է կացվում Հայաստանի դատարաններում, վճիռը կարող է արագ և աղերսվատ չլինել: Պահանջվում է պարզաբանում Օրենքի 18-րդ հոդվածում հիշատակված օտարերկրյա ներդրումով ձեռնարկությունների համար սահմանվող արտոնությունների տարածման (30% կապիտալացման) չափանիշների համար:

Երևանում ՔԿԹ գործածության բնագավառում ՀՄՀ կիրառումը իրավաբանական տեսանկյունից հնարավոր է, քանի որ Քաղաքապետարանը «կազմակերպում է» աղբահանությունը, և ծառայությունները կարող են մատուցվել մասնավոր ընկերության կողմից: Սակայն, ցանկացած նման ՀՄՀ կենսունակ չի լինի, քանի որ գոյություն չունի ծառայությունների մատուցման շրջանների սահմանում, բացակայում է ծառայությունների մատուցման (որպես այդպիսին) ստույգ սահմանումը, ՔԿԹ ծառայություններից օգտվողների համար սահմանված չէ մատուցված ծառայությունների համար համապատասխան վճարների կատարման պարտավորությունը և, այսպիսով, առանձին պայմանագիր պետք է կնքվի ծառայություն մատուցողի և յուրաքանչյուր բաժանորդի միջև: Չվճարումը պայմանագրի խախտում և դատարանների (մասնավոր իրավունքի) քննության առարկա է:

Չնայած «Թափոնների մասին», «Տեղական վճարների և տուրքերի մասին» ՀՀ օրենքների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում ներդրողների և ՀՄՀ անբարենպաստ միջավայրին, այնուամենայնիվ կարելի է ասել, որ Երևանում ՔԿԹ բնագավառում ՀՄՀ կիրառումը հնարավոր է: Սակայն, կիրառվող իրավական ռեժիմը բարենպաստ չէ ներդրողի համար: Ինչպես երևում է, բացակայում են մասնավոր սեկտորի ներդրումների փոխհատուցման համապատասխան երաշխիքները և անվտանգության ապահովման մեխանիզմները:

Այսպիսով չափազանց անհավանական է, որ նկարագրված օրենսդրական դաշտի, ինչպես նաև գլոբալ ֆինանսական ճգնաժամի պայմաններում Հայաստանի և / կամ Երևանի ՔԿԹ բնագավառը գրավի միջազգային խոշոր ներդրողներին՝ ՀՄՀ շրջանակներում ներդրումներ կատարելու համար:

4 Թերությունների վերլուծությունը և խոչընդոտների բացահայտումը

4.1 Քաղաքականության նպատակը

Թափոնների գործածության բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքականության նպատակները և սկզբունքները արտացոլված են «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներում:

Ռազմավարական տեսանկյունից քաղաքային կոշտ թափոնների ինտեգրված գործածության կազմակերպումը նախատեսվում է այն դեպքում, երբ թափոնների հավաքումը (տեսակավորումը, օգտահանումը) և պատշաճ ձևով տեղադրումը, սպասարկվող բնակչության կենսապայմանները բարելավելով, իրականացնում են աղբահանության ծառայություններ մատուցող սահմանափակ թվով կազմակերպություններ: Սակայն դա երկարաժամկետ մոտեցում է: Մինչդեռ ավելի հրատապ և միջնաժամկետ քաղաքականությունը պետք է ուղղված լինի «նաքրմանը», հիմք ընդունելով «շրջակա միջավայրի պահպանության» մոտեցումը, որը ներկայացվել և քննարկվել է 2009 թվականի մարտի 11-ին Երևանում անցկացված հասարակական լսումների ընթացքում:

Թափոնների հավաքման առկա համակարգը և ՔԿԹ գործածության կազմակերպումը բավական չեն այս բնագավառում ՀՀ կառավարության կողմից որդեգրված քաղաքականության իրագործման համար: Հետևաբար, այս իրավիճակը պետք է շտկվի և թե՛ հանրային, և թե՛ մասնավոր հատվածի համագործակցության (ՀՄՀ) համար ստեղծվի բարենպաստ միջավայր: Թափանցիկ և անկողմնակալ մրցույթի միջոցով մասնավոր հատվածը կարող է ներդրում կատարել և կրել ֆինանսական, տեխնիկական և շահագործման հետ կապված ռիսկերի մեծ մասը, որի փոխարեն պետք է ստանա սահմանված շրջանում (տարածքում) ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք, ինչպես նաև մատուցված պատշաճ ծառայությունների դիմաց ստանա շահույթ համապատասխան գանձումներ կատարելով ծառայություններից օգտվողներից կամ հանրությունից:

Նման միջավայր ստեղծելու և «կյանքի կոչելու» նպատակով իրականացված թերությունների վերլուծությունը թույլ տվեց առկա օրենսդրական դաշտը համեմատել «իդեալական» սցենարի հետ, և արդյունքում բացահայտել այն «օրենսդրական» բացթողումները, որոնք խոչընդոտում են նախատեսված սցենարի իրագործմանը: Բացահայտված խոչընդոտներն այնուհետև ենթարկվեցին, այսպես կոչված, տարբերակված վերլուծության: Տարբերակված վերլուծությունն, իր հերթին, թույլ կտա բացահայտելու իդեալական իրավիճակի ստեղծման խոչընդոտների վերացման տարբերակներից յուրաքանչյուրի առավելությունները և թերությունները, ինչպես նաև ներկայացնելու առաջարկությունն առավել նպատակահարմար տարբերակի և հետագա քայլերի վերաբերյալ:

4.2 Թերությունների վերլուծությունը և խոչընդոտների բացահայտումը

4.2.1 ՀՄՀ նախատեսված տարբերակը

Վերը հիշատակված քննադատական վերլուծության, սույն ծրագրի շրջանակներում ստացված եզրակացությունների, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում բացահայտվեց ՀՄՀ հետևյալ «իդեալական» տարբերակը:

Երևան քաղաքը կբաժանվի թափոնների հավաքման և հեռացման (ներառյալ փողոցների մաքրման) ծառայությունների մատուցման երկու, մոտավորապես հավասար, շրջանի: Այդ շրջաններից յուրաքանչյուրի համար կընտրվի թափոնների հավաքման ծառայություններ մատուցող մեկ համատեղ ձեռնարկություն կազմակերպություն: Այդ համատեղ ձեռնարկության կազմում պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ միջազգային և մեկ տեղական կազմակերպություն՝ թափոնների գործածության բնագավառից (Օպերատոր): Աղբավայրի կառուցումը և շահագործումը կիրականացնի մեկ այլ ընկերություն (որը չի կարող լինել վերոհիշյալ Օպերատորներից որևիցե մեկը): Միևնույն ժամանակ, Երևանում թափոնների հավաքման ծառայություններ մատուցող երկու համատեղ ձեռնարկությունները (օպերատորները) չեն կարող նույնը լինել, իսկ դրանցից մեկի մասնակից կազմակերպությունը չի կարող միաժամանակ մյուսի մասնակիցը լինել:

Աղբավայրը շահագործող օպերատորը չպետք է փոխկապակցված լինի թափոնների հավաքման ծառայություններ մատուցող օպերատորներից որևէ մեկի հետ, քանի որ դա կարող է հանգեցնել որոշակի չարաշահումների և ստեղծել բարենպաստ պայման օպերատորներից որևէ մեկի համար: Հակառակ դեպքում առաջարկվող հորիզոնական տարանջատումը դառնում է անիմաստ:

Գնային առաջարկների ներկայացման գործընթացն առաջարկվում է մեկնարկել ծառայությունների մատուցման շրջաններից որևէ մեկից (առավել կարևորից), իսկ երկրորդ շրջանի համար այդ գործընթացը նպատակահարմար է մեկնարկել այն պահից, երբ կիրառարակվի առաջին մրցույթի շրջանակներում ձևավորված և մրցույթի հաջորդ փուլին մասնակցելու հնարավորություն ստացած համատեղ ձեռնարկությունների վերջնական ցուցակը: Այդ պարագայում, «արդեն իսկ մասնակցող» համատեղ ձեռնարկությունների (կամ դրանց մասնակցի) մասնակցությունը մյուս շրջանի գնային առաջարկների ներկայացման գործընթացին ինքնաբերաբար կբացառվի: Եթե նման մոտեցումը հանգեցնի անցանկալի իրավիճակի (օրինակ՝ գնային առաջարկների ներկայացման երկրորդ շրջանի մասնակիցների քանակը կլինի անբավարար), ապա հիշատակված կազմակերպությունները կամ համատեղ ձեռնարկությունները կստորագրեն համապատասխան փաստաթուղթ, առ այն, որ եթե իրենք հանդիսանան նախորդ մրցույթում շահած համատեղ ձեռնարկություն (կամ դրա մասնակից), ապա կիրառվեն մասնակցել տվյալ (մյուս շրջանի) մրցույթին կամ, հակառակ դեպքում՝ կգրկվեն մասնակցության իրավունքից (կորակազրկվեն):

Այլ կերպ ասած, կազմակերպությունները կարող են մասնակցել ըլուր մրցույթներին, սակայն նրանք պետք է հրաժարվեն իրենց մասնակցությունից կամ կզրկվեն մրցույթում մասնակցելու իրավունքից այն դեպքում, եթե նույն կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկությունը, կամ համատեղ ձեռնարկության մասնակիցը նախորդ (մյուս շրջանի մասով) անցկացված մրցույթի հաղթող է ճանաչվել:

Սա անհրաժեշտ է ՀՄՀ համար նախատեսված իդելական միջավայր ստեղծելու նպատակով, որտեղ.

1. Ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության երկրորդ փուլում (5-րդ տարվանից մինչև 10-րդ տարին) թափոնների հեռացման ծառայություններ մատուցող երկու օպերատորների համար ստեղծվում են մրցակցային պայմաններ (խոշոր) առևտրային կազմակերպություններին սպասարկման մասով
2. Երկու տարբեր օպերատորներից ստացված և գնահատված տվյալները (աշխատանքային ցուցանիշները) կարող են համեմատվել միմյանց, ինչպես նաև լավագույն միջազգային չափանիշների հետ (կատարողականի գնահատում, հատուցման չափի որոշում)
3. Աղբավայրի օպերատորը պետք է օբյեկտիվ և թափանցիկ ձևով համագործակցի թափոնների հավաքման ծառայություններ մատուցող երկու օպերատորների հետ և այդ օպերատորներին իր ծառայությունները մատուցի հավասար պայմաններով: Եթե աղբավայրի օպերատորը փոխկապակցված է կամ այլ կախվածություն ունի թափոններ հեռացնող օպերատորներից որևէ մեկից, ապա անհրաժեշտ է կիրառել այդ օպերատորների փոխհարաբերությունների օբյեկտիվությունը և թափանցիկությունը երաշխավորող համապատասխան մեխանիզմներ (օրինակ, այդ օպերատորների գործունեության հանրային մոնիտորինգ և կարգավորում):

Մրցույթի արդյունքում օպերատորներից յուրաքանչյուրը կստանա թափոնների հավաքման, փոխադրման և տեղադրման համապատասխան «թույլտվություն»: Այս թույլտվությունը կերաշխավորի համապատասխան շրջանում թափոնների հավաքման ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք պայմանագրի գործողության առաջին 5 տարիների ընթացքում և սահմանափակ բացառիկ իրավունք՝ պայմանագրի գործողության երկրորդ 5 տարիների ընթացքում: Պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում (երկրորդ հնգամյակը) օպերատորներից յուրաքանչյուրը կարող է պայմանագիր կնքել մյուս օպերատորի ծառայությունների մատուցման շրջանում գտնվող առևտրային կազմակերպությունների հետ: Սա արվում է մրցակցության խթանման և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով:

Օպերատորը ծառայությունների մատուցման պայմանագիր կկնքի Երևանի քաղաքապետարանի հետ: Այդ պայմանագիրը կկարգավորի և կսահմանի ծառայությունների մատուցման գործընթացը, որն իր մեջ կներառի թափոնների հավաքումը, փոխադրումը (անհրաժեշտության դեպքում՝ նաև պահումը) և տեղադրումը, ինչպես նաև սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը (փողոցների մաքրում և ձյան հեռացում): Այս գործընթացի շրջանակներում օպերատորը (համատեղ ձեռնարկությունը) կկատարի ներդրումներ և կապահովի

համապատասխան մեքենաների (մեխանիզմների) պարկի և կոնտեյներների առկայությունը Երևանում:

Սանիտարական մաքրումը կարևոր ծառայություն է, քանի որ այն գործ ունի կոնտեյներներից դուրս գտնվող թափոնների, ինչպես նաև փողոցների վրա գտնվող այլ «անցանկալի» նյութերի հետ (ավազ, փոշի և այլն): Սա առավել ևս կարևոր է, քանի որ մասնավոր օպերատորը թափոնների հավաքումն իրականացնում է ճանապարհների և փողոցների եզրերից (եզրաքարերից): Փորձը ցույց է տալիս, որ ծառայությունների մատուցման բարձր մակարդակ կարելի ապահովել միայն այն դեպքում, եթե թափոնների հավաքման և փողոցների մաքրման աշխատանքներն իրականացվում են միևնույն կազմակերպության (օպերատորի) կողմից: Հակառակ դեպքում երկու օպերատորներ կարող են միմյանց մեղադրել ծառայությունների մատուցման անբավարար մակարդակի համար: Այնուամենայնիվ, այդ հարցի վերաբերյալ վերջնական որոշում կարելի է կայացնել շուկայի ուսումնասիրության ավարտից հետո, որը մրցույթի նախապատրաստման փուլում կիրականացնի գործարքի կնքման խորհրդատուն:

Թափոնների հավաքումը կսկսվի ճանապարհային եզրերից և կավարտվի աղբավայրում (Նուբարաշենում): Դա նշանակում է, որ ծառայություններից օգտվողների համար օպերատորը կապահովի հարմար կոնտեյներներ: Ծառայությունից օգտվողները (օրինակ՝ բնակիչները), իրենց հերթին, կոնտեյներները ճանապարհների եզրերին պետք է տեղադրեն ամեն օր, երբ օպերատորն իրականացնում է թափոնների հավաքումը: Դա ենթադրում է, որ համատիրությունները պատասխանատու են, որ թափոնները տեղադրվեն կոնտեյներներում և որ կոնտեյներները պատրաստ լինեն բեռնաթափման համար (այսինքն յուրաքանչյուր հավաքման օր տեղադրված լինեն ճանապարհների եզրերին): Այդ ծառայության համար համատիրությունները կարող են պահանջել որոշակի փոխհատուցում: Փոխհատուցումը կարող է ապահովվել քաղաքապետարանի կողմից տրվող զեղչի կամ ֆինանսավորման այլ մոտեցման միջոցով:

Կսահմանվեն ծառայությունների մատուցման թիրախային չափանիշները, որոնց ապահովման հիման վրա Երևանի քաղաքապետարանը որոշում կընդունի օպերատորին՝ վերջինիս մատուցած ծառայությունների դիմաց, համապատասխանաբար հատուցելու վերաբերյալ: Թափոնների հավաքման ծառայությունների համար հաշիվների ներկայացումը և համապատասխան վճարների գանձումն իրականացնում է Երևանի քաղաքապետարանը: Մատուցված ծառայությունների դիմաց հատուցման ենթակա վճարի մեծությունը, որը Օպերատորը կգանձի Երևանի քաղաքապետարանից, մրցույթի ընթացքում դիտարկվող ֆինանսական փոփոխականն է: Այդ կապակցությամբ, ծառայությունների դիմաց վճարի նվազագույն առաջարկվող մեծությունը մրցույթի ընթացքում կարժանանա առավելագույն գնահատականի, ինչի վերջնական նպատակն է նվազեցնել հանրության (Երևան քաղաքի) վճարման բեռը:

Թափոնների հավաքման ծառայությունների մատուցման յուրաքանչյուր պայմանագրի գործողության ժամկետը կկազմի 7-ից 10-ը տարի, ինչը թույլ կտա ապահովել համապատասխան ներդրումների լրիվ մարումը (ամորտիզացիան) և շահույթի գրավիչ մակարդակը (այն պահից սկսած, երբ ներդրումներն ամբողջովին փոխհատուցվել են): Պայմանագրի

առաջարկվող գործողության ժամանակահատվածը ֆինանսական վերլուծության արդյունք է, ինչի մասին հղում է արված սույն ծրագրի ներքո պատրաստված համապատասխան հաշվետվությանը (Առաջադրանք 4-ի հաշվետվություն)¹⁵: Երևանի քաղաքապետարանը օրենքի և օպերատորին տրված թույլտվության հիման վրա կունենա հանրային մոնիտորինգի անցկացման (վերահսկման) օրինական իրավասություն, իսկ, ծառայությունների մատուցման պայմանագրերով՝ նաև օպերատորների ստանձնած պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովող իրավասություն:

Աղբավայրի օպերատորը կկառուցի և կշահագործի աղբավայրի որոշ հատվածները, ինչի համար նույնպես կպահանջվի համապատասխան թույլտվություն:

¹⁵ Թափոնների գործածության բնագավառում ներդրումների խթանման և, հետևաբար, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով պայմանագրի գործողությունը կերկարաձգվի մինչև 7-10 տարի ժամանակահատվածով (1 տարվա փոխարեն): Պայմանագրի գործողության վերջնական ժամանակահատվածը կարող է որոշվել մրցույթի նախապատրաստման ընթացքում: Ժամանակահատվածը որոշելիս պետք հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որոնցից մեկը սարքավորումների ձեռքբերման հետ կապված ներդրումների մարումն է: Պայմանագրի ավելի երկար գործողության ժամանակահատվածը հնարավորություն կտա նվազեցնել ծախսերը, ներդրումները բաշխելով «թափոնների ավելի մեծ ծավալների» մասով ծառայությունների մատուցման համար: Միևնույն ժամանակ, ավելի երկարաժամկետ պայմանագիրը կարող է խոչընդոտել ամբողջ համակարգի հետագա զարգացմանը, ինչը հնարավոր է ապահովել ծառայությունների մատուցման նոր (հերթական) մրցույթի անցկացման պարագայում:

4.2.2 Թերությունների վերլուծությունը

Վերը նկարագրված ՀՄՀ նախատեսված սցենարն այժմ կհամեմատվի Հայաստանում առկա օրենսդրական և կարգավորող դաշտի հետ, ինչի արդյունքում կբացահայտվեն թերությունները և կգհանատվեն այդ թերությունների հնարավոր ազդեցությունները:

Աղյուսակ. Թերությունների վերլուծությունը

No.	Իդեալական իրավիճակը	Թերությունների ցուցիչը *	Ներկայիս իրավիճակը
1	ՔԿԹ գործածության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտը ստույգ է և պարզ:	4	ՔԿԹ գործածության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտն առկա է, սակայն այն ստույգ սահմանված չէ, իսկ ՔԿԹ տարանջատված չեն թափոնների այլ կատեգորիաներից:
2	Թափոնների հավաքման (և սանիտարական նաքրման) ակնկալվող ծառայությունների մատուցումը սահմանված է օրենքով:	1	«Թափոնների հավաքման կազմակերպումը» սահմանված է «Թափոնների մասին» ՀՀ օրենքով: Թափոնների հավաքման ծառայությունները կարող են մատուցվել տարբեր (հանրային և մասնավոր) կազմակերպությունների կողմից: Քանի որ սրանք պարտադիր լիազորություններ չեն, ապա կարող են փոխանցվել մասնավոր հատվածին, որի հետ կարող են կնքվել համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրեր:
3	Թափոնների հեռացման ծառայությունները մատուցվում են սահմանափակ քանակի կազմակերպությունների կողմից:	3	Գոյություն չունի թափոնների հավաքման ծառայություններ մատուցողների քանակի օրենսդրական սահմանափակում: Թափոնների հավաքման ծառայությունների մատուցման գործող պայմանագրերի գործողությունը պետք է դադարեցվեն կամ դրանց գործողության ժամկետները լրանալուց հետո չպետք է երկարաձգվեն:
4	Յուրաքանչյուրն (օպերատորը) իր սպասարկման շրջանում ունի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք:	4	Բացառիկության իրավունքն օրենսդրությամբ չի սահմանված, սակայն կարող է կարգավորվել թույլտվության, և երաշխավորվել պայմանագրի միջոցով:
5	Ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվում են	4	Փորձը ցույց է տալիս, որ աղբահանության վերաբերյալ ոչ բոլոր

No.	Իդեալական իրավիճակը	Թերությունների ցուցիչը *	Ներկայիս իրավիճակը
	մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպությունների հետ:		պայմանագրերն են կնքվել մրցութային կարգով:
6	Թափոնների հավաքման և աղբավայրի շահագործման հետ կապված գործունեությունն իրականացվում է համապատասխան թույլտվության առկայության դեպքում:	5	Գոյություն չունի թույլտվությունների տրման սահմանված համակարգ: Աղբավայրերը «արտոնագրված են» և, հետևաբար, դրանց շահագործումը թույլատրված է խորհրդի որոշմամբ:
7	Ծառայությունների մատուցման որակը վերահսկվում է:	4	Թափոնների հավաքման ծառայությունների մատուցման գործընթացը պատշաճ ձևով չի վերահսկվում: Օգտագործվում են ստույգ սահմանում չունեցող մի շարք հասկացություններ. վերահսկում, հսկողություն և կիրարկման ապահովում :
8	Օպերատորի կողմից մատուցված ծառայությունների փոխհատուցման մեխանիզմը պարզ է և թույլ է տալիս ապահովել շահութաբերության խելամիտ մակարդակ:	5	Սա իրականությանը չի համապատասխանում: Վճարումը կախված է պայմանագրի կնքումից:
9	Սակագների (վճարների) սահմանումը և ծառայություններ մատուցողի վարձատրությունը կախված է ծառայությունների մատուցման որակից (կատարողականից):	4	Ներկայումս գոյություն չունի որևէ վկայություն, որ թափոնների հավաքման ծառայություններ մատուցողների գործունեության արդյունքները վերահսկման առարկա են և որ այդ վերահսկման արդյունքները կարող են ազդել վճարման գործընթացի վրա: Սակագների որոշումը քաղաքական համաձայնության առարկա է:
10	Ծառայություններից օգտվողների կողմից պարտադիր վճարումներ կատարելու պարտականությունը սահմանված է օրենքով:	5	Թափոնների հավաքման բնագավառում ծառայություններից օգտվողների համար պարտադիր վճարման պարտականություն չի սահմանված:
11	Հանրությունը ստանձնում է հավաքագրման հետ կապված ռիսկը, այսինքն	5	Հանրությունը ստանձնում է հավաքագրման ռիսկը միայն այն դեպքում , եթե թափոնների հավաքման

No.	Իդեալական իրավիճակը	Թերությունների ցուցիչը *	Ներկայիս իրավիճակը
	հանրությունն ինքն է իրականացնում հավաքագրումը:		ծառայությունները մատուցվում են բյուջետային հիմարկների և / կամ ամբողջությամբ (100%) համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից:
12	Ծառայությունների մատուցման պայմանագիրը և մրցույթը հիմնված են ներդաշնակ, հասկանալի և համապատասխան օրենսդրության վրա:	4	Գործում են «Գնումների մասին» և «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքները: ՀՄՀ համար չի սահմանված հատուկ ռեժիմ`:
13	Ծառայություններ մատուցողը կարող է ազատորեն արտահանել ստացված շահույթը և օգտվել ուղղակի ներդրումների համար ստեղծված բարենպաստ պայմաններից:	1	Օտարերկրյա ներդրումներն ապահովող օրենքը երաշխավորում է շահույթի ազատորեն արտահանման իրավունքը և սահմանում է բարենպաստ ռեժիմ ներդրողների համար: Սակայն այս օրենքի անգլերեն թարգմանությունը պարունակում է որոշ անորոշություններ:

* Թերությունների ցուցիչներն իրենցից ներկայացնում են 1-5 գնահատականների սանդղակ (1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 5-ը՝ առավելագույնը)

Աղյուսակում բերված ոչ բոլոր թերություններն են պարտադիր խոչընդոտում թափոնների հավաքման բնագավառում ՀՄՀ ռեժիմի արդյունավետ իրագործմանը: Հաշվետվության 4-րդ գլխում քննարկվում են առավել կարևոր թերությունները:

4.2.3 Խոչընդոտների բացահայտումը

Թերությունների վերլուծության արդյունքում բացահայտվեցին հետևյալ հիմնական խոչընդոտները.

1. Թափոնների սահմանումը (Հղումներ No: 1 և 2):
Եթե ՔԿԹ (ի վերջո ինտեգրված) գործածության համար նպատակ է հետապնդվում սահմանել բարենպաստ ռեժիմ, ապա անհրաժեշտ է տալ թափոնների (հոսքերի) սահմանումը և թափոնները դասակարգել ելնելով միջազգային լավագույն փորձից: Թափոնների իմաստավոր դասակարգման նպատակով թափոնների գործածությունը կարող է

սահմանվել այնպես, ինչպես դա արված է ԵՄ «Թափոների մասին շրջանակային դիրեկտիվի» 9-րդ Հոդվածում¹⁶.

«[...] հավաքում, փոխադրում, օգտագործում և տեղադրում, ներառյալ այդ գործողությունների վերահսկումը և թափոների տեղադրման վայրերի հետագա խնամքը, [և ներառյալ այն գործողությունները, որոնք իրականացվում են միջնորդի կամ բրոքերի կարգավիճակով]»:

Այդ տեսանկյունից, «Թափոների մասին» ՀՀ օրենքը (Հոդված 4) հիմնականում արտահայտում է ԵՄ դոկտրինան, անտեսելով սակայն հետագա խնամքի սկզբունքը:

ՔԿԹ գործածությունը կարող է ներառել թափոների գործածության հիշատակված բոլոր ստորադասված սկզբունքները: Սա կախված է թափոների տեղադրման համար համապատասխան (պիտանի) տեղական վայրի առկայությունից: Եթե չկա նման հարմար վայր, ապա քաղաքապետարանի պարտականությունն է թափոները տեղափոխել քաղաքի սահմաններից դուրս և թափոների գործածության ազգային պլանի համաձայն այդ թափոները տեղադրել դրա համար նախատեսված համապատասխան վայրում:

«Թափոների մասին» ՀՀ օրենքը թափոները սահմանում է որպես արտադրության և սպառման (կենցաղային) թափոներ: Օրենքում կան վտանգավոր թափոների վերաբերող դրույթներ, որոնք բավական չեն: «Թափոների մասին» ՀՀ օրենքը պետք է տարածվի թափոների բոլոր այն հոսքերի վրա, որոնք չեն պատկանում «ավանդական» թափոների դասին, օրինակ՝ օգտագործված յուղեր, կենդանական թափոներ, կղանքներ, պայթուցիկ նյութեր և այլն: Շատ հավանական է, որ արտասահմանյան պոտենցիալ ներդրողը այս խնդիրների պարզաբանման կարիքն կունենա, և եթե նույնիսկ այդ պարզաբանումները լինեն տեսական (թղթի վրա), միևնույն է դա օգտակար կլինի թափոների գործածության ծառայությունների անհրաժեշտ շրջանակները սահմանելու համար:

Ի հավելումն, տարբեր թափոներ գոյացնողների նկատմամբ պետք է կիրառվեն համապատասխան (տարբեր) ռեժիմներ: Սովորական կենցաղային թափոների նկատմամբ չի կարող կիրառվել միևնույն ռեժիմը, որը կիրառվում է առևտրային և արդյունաբերական թափոների նկատմամբ: Սա վերաբերում է թափոների անձնագրերին, սակագներին և թափոների օգտագործման ու օգտահանման հետ կապված պարտավորություններին, որոնք կարող են սահմանվել թափոների յուրաքանչյուր դասի համար (և պետք է տարբերվեն՝ կախված թափոների դասից):

Հետագայում. պետք է, որ ենթաօրենսդրական մակարդակով կանոնակարգվի չոր և թաց թափոների հոսքերի տարանջատումը՝ թափոների արդյունավետ տեսակավորումը և օգտահանումն ապահովելու նպատակով:

¹⁶ Դիրեկտիվ 2008/98

2. Վճարման պարտավորությունը (Հղումներ No 8, 9 և 10):

Այն հանգամանքը, որ վճարների հավաքագրման և, հետևաբար, վճարման ռիսկը ներկայումս ամբողջովին ստանձնում է թափոնների հավաքման ծառայություններ մատուցողը, հակասում է միջազգային լավագույն փորձին: Ներկայումս, գործող ռեժիմի պայմաններում, թափոնների հավաքման ծառայություններ մատուցողը պետք է ինքնուրույն ապահովի գանձումների հավաքագրումը՝ (թափոնների հավաքման և փոխադրման) ծառայությունների օգտվողներից, անհատական քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա: Սա նշանակում է, որ հանրությունը չունի մատուցված ծառայությունների համար վճարման պարտավորություն: Եթե այս իրավիճակն անփոփոխ մնա, ապա դա լուրջ կանխարգելիչ գործոն կլինի պոտենցիալ (մասնավոր) ներդրումների համար:

3. Մոնիտորինգ (Հղում No 7):

Պետք է սահմանվեն մոնիտորինգի (հսկողության, վերահսկման, հաստատման և այլն) լիազորությունները և իրավասությունները, այնպես, որպեսզի ՔԿԹ գործածության բնագավառ ընդգրկվող մասնավոր հատվածի ներկայացուցիչները ցանկացած պահին կարողանան հստակ պատկերացնել և գնահատել, թե «ո՞վ» է իրավասու անցկացնել մոնիտորինգ, և թե «ի՞նչն» է հանդիսանում մոնիտորինգի առարկա: Ներկա պարագայում նման հստակություն չկա:

Գոյություն ունեն մի շարք սկզբունքային լիազորություններ, որոնք պետք է կարգավորվեն: Դրանք են.

- (ա) Սակագների սահմանումը, վերանայումը և համաձայնեցումը.
- (բ) Վճարների գանձումը, վճարման պարտավորեցումը (ապահովումը) կամ չվճարողների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը.
- (գ) Կատարողականի մոնիտորինգը (վերահսկողություն, հսկողություն, հաստատում).
- (դ) Թափոնների հավաքման, փոխադրման և տեղադրման/օգտահանման համար թույլտվություններ տալը:

Ընդ որում, (ա) և (բ) խնդիրները կարող են լուծվել միջնաժամկետ հեռանկարում, իսկ (գ) և (դ) խնդիրները՝ հրատապ լուծման կարիք ունեն:

4. Սակագների սահմանումը (Հղումներ No 9):

Սակագների որոշումը և սահմանումը ամենայն հավանականությամբ կմնա հանրության իրավասությունների շրջանակներում: Հաշվի առնելով ՀՄՀ նախատեսվող սցենարը, , սակագների սահմանումը, հաշիվների ներկայացումը և վճարների գանձումը կիրականացվի հանրության (Երևան քաղաքապետարանի) կողմից: Սակագների որոշումը, որպես այդպիսին, ուղղակիորեն չի վերաբերում ՔԿԹ գործածության բնագավառում ՀՄՀ միջոցով ծառայությունների մատուցմանը, քանի որ օպերատորները մատուցված ծառայությունների համար կվարձատրվեն Երևանի քաղաքապետարանի կողմից, անկախ սակագնի չափից և վճարների հավաքագրման տոկոսից: Քաղաքապետարանն ընտրություն կատարելու հնարավորություն ունի և կարող է սակագինը սահմանել ինքնաձայնաստանդարտի սկզբունքի հիման վրա, ինչը թույլ կտա փոխհատուցել կատարված բոլոր (կամ հիմնական) ծախսերը (օպերատորի/ների կողմից մատուցված ծառայությունների վարձատրում), կամ սակագները պահել ցածր մակարդակի վրա,

կիրառելով խաչաձև սուբսիդավորման մախանիզմը: Այս առումով որևէ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Քաղաքապետարանը կարող է նաև սակագնում ներառել որոշակի մի գումար, որը կփոխանցվի համատիրությունների կառավարման մարմիններին թափոնների հավաքման գործընթացում իրենց մասնակցության (թափոնների կոնտեյներներում տեղադրման ապահովում, թափոնների հավաքման օրը կոնտեյներների տեղադրում ճանապարհի եզրերին և այլն) փոխհատուցման համար: Սակայն, սա կնշանակի, որ (համատիրությունների կազմում չընդգրկված) մասնավոր տնային տնտեսությունները սուբսիդավորում են համատիրություններին: Եթե նման երևույթը ցանկալի չէ, ապա համատիրությունների համար կարելի է սահմանել որոշակի զեղչ, ինչը հնարավորություն կտա բնակիչներից բոլոր վճարների հավաքագրման դեպքում զանձված գումարի մի մասն օգտագործել համատիրության կողմից հիշատակված ծառայությունների փոխհատուցման համար:

Սակայն, քանի որ առաջարկվող սցենարի համաձայն առևտրային հատվածի դեպքում նախատեսվում է մասնակիորեն հանել ծառայությունների մատուցման բացառիկության հետ կապված սահմանափակումը և ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում ստեղծել մրցակցային պայմաններ, ապա առևտրային կազմակերպությունների համար սակագների սահմանման մոտեցումը պետք է վերանայվի մինչև հիշյալ երկրորդ ժամանակահատվածի սկիզբը:

Առաջին հերթին օպերատորը պետք է հնարավորություն ունենա անմիջականորեն պայմանագիր կնքել առևտրային կազմակերպության հետ, առաջարկելով կամ ավելի բարձր որակի ծառայություններ (թափոնների հեռացման ավելի մեծ հաճախականություն), կամ ավելի ցածր սակագին: Սա իրագործելի է միայն այն դեպքում, եթե սահմանված է առավելագույն մակարդակի սակագին, այսինքն հնարավոր է կիրառել ավելի ցածր սակագին: Երկրորդը, առևտրային կազմակերպությունների մատուցված ծառայությունների դիմաց վճարումները պետք է դուրս հանվեն (կամ հնարավորություն լինի դրանք հետագայում դուրս հանել) պարտադիր վճարման շրջանակներից (տես ստորև): Միայն այդ դեպքում (մյուս շրջան ներթափանցող) օպերատորը կկարողանա անմիջականորեն պայմանագիր կնքել նոր առևտրային կազմակերպության հետ և զանձել (ավելի ցածր) վճար: Հետևաբար, հաճախորդ կորցնող օպերատորի մատուցած ծառայությունների դիմաց վճարները ևս պետք է վերանայվեն (կարգաբերվեն):

5. Վճարների հավաքագրումը (Հղումներ No 10 և 11):

Եթե թափոնների հավաքումը և դրա հետ առնչվող ծառայությունների մատուցման դիմաց վճարների հավաքագրումն իրականացվում է մասնավոր կազմակերպության կողմից, ապա դրանք իրականացվում են ծառայություններից օգտվողների յուրաքանչյուրի հետ կնքված քաղաքացիական պայմանագրերի հիման վրա: Դա չափազանց անարդյունավետ մոտեցում է: Համեմատականներն այնպիսի համանման հանրային ծառայությունների հետ, ինչպիսիք են էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը, և գազամատակարարումը, օրինաչափ չեն, քանի որ ոչ բարեխիղճ բաժանորդների նկատմամբ նշված ծառայություններ մատուցողներն

ուներն հզոր կանխարգելիչ (զսպող) միջոց կիրառելու հնարավորություն, այն է կոդարեցվեն մատակարարումները: Թափոնների հավաքման աշխատանքների դադարեցումը չի կարող դիտարկվել, որպես նույն կատեգորիայի կանխարգելիչ միջոց:

Ավելին, եթե էլեկտրամատակարարումը դադարեցվում է, մատակարարը չի «վտանգում շրջակա միջավայրը» և հավանաբար չի «վտանգում մարդկանց բարեկեցությունը»: Սակայն նույնը չի կարելի ասել թափոնների հավաքման բնագավառի համար: Գործնականում, թափոնների հավաքումն ինքնին շրջակա միջավայրի և բնակչության առողջության պաշտպանության միջոց է: Եթե թափոնների հավաքման ծառայություններ մատուցողը չվճարումների պատճառով դադարեցնի մատուցել ծառայությունները, ապա կարող է դրանով խախտել վարչական օրենսդրության և իրավական այլ ակտերի մի շարք դրույթներ: Թափոնների հավաքման ծառայությունների մատուցման վերաբերյալ համայնքի հետ կնքված պայմանագրով կարող է սահմանվել թափոնների հավաքման հաճախականությունը: Միաժամանակ կսահմանվի հատուկ համակարգ (ռեժիմ), որը կորոշի չվճարման պարագայում ծառայություններ մատուցողի և համայնքի համապատասխան պարտավորությունները:

Եթե վճարների հավաքագրումը և, հետևաբար, հավաքագրման և վճարման ռիսկերը ամբողջովին կրում է մասնավոր հատվածն առանց համայնքի կողմից որևէ փոխադարձ երաշխիքների, ապա նման իրավիճակն էապես կխոչընդոտի թափոնների հավաքման բնագավառ մասնավոր հատվածի ներգրավմանը:

Չետևաբար, ՉՄՅ ցանկացած սցենար նպատակ կունենա հավաքագրման ռիսկը (բեռը) դնել հանրության վրա, որը վճարների հավաքագրման համար ունի շատ ավելի արդյունավետ միջոցներ, քան մասնավոր հատվածը: Փաստորեն, կարելի է ասել, որ եթե մասնավոր հատվածը պետք է հավաքագրի վճարները և փոխհատուցի իր կողմից կատարված ներդրումներն այդ հավաքագրված միջոցներից, ապա նման պայմաններում առանց լրացուցիչ երաշխիքների առկայության ՉՄՅ ցանկացած սցենար կլինի ֆինանսապես ոչ կենսունակ (միայն դատական ծախսերը կգերակշռեն փոխհատուցվող գումարները):

6. Թույլտվությունների տրման կարգը (Չղումներ No 4 և 6):

Թույլտվությունների տրման համակարգը (ռեժիմը), որպես կանոն, պետք է տարածվի նաև մրցույթով նախատեսված գործունեությունների վրա, որոնք են (Երևանի դեպքում). թափոնների հավաքումը, փոխադրումը և տեղադրումը, ինչպես նաև աղբավայրի շահագործումը: Այս եզրակացությունը բխում է «Թափոնների մասին» ՀՀ օրենքից, որը սահմանում է իրենց վարչական տարածքի սահմաններում չարտոնագրված աղբավայրերը վերացնելու համապատասխան մարմինների իրավունքը: «Հատուկ հատկացված վայրերում թափոնների տեղադրման» համար պահանջվում է թույլտվություն: Ենթադրվում է, որ այդ «թույլտվությունը» վերաբերում է թափոնների տեղադրման վայրերին: Սակայն դա ինքնըստինքյան չի վերաբերում թափոնների հավաքման իրավունքին (բացառությամբ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում հիշատակված «հատուկ հատկացված տեղեր» սահմանման մեջ պարունակվող ակնարկը):

Թափոնների հավաքման և փոխադրման համար թույլտվությունների տրման ռեժիմի սահմանումը հետապնդում է 4 հիմնական նպատակ: Առաջին նպատակն է՝ երաշխավորել, որ ծառայություններ մատուցողն ունենա ծառայությունների մատուցման համար համապատասխան որակավորում (և տեխնիկական միջոցներ), երկրորդ նպատակն է՝ սահմանել պարբերական ստուգումներ, որոնց ընթացքում ծառայությունների մատուցման որակը կհանդիսանա թույլտվության ժամկետի երկարաձգման հիմնական պայմանը, և երրորդը՝ կարգավորել շուկան և սահմանափակել մատչելիությունը դեպի ազատ շուկա: Վերջապես չորրորդ նպատակն է հանրությանը տալ օպերատորի հետ «բանակցելու» ևս մեկ գործիք: Ծառայությունների մատուցման յուրաքանչյուր շրջանում պետք է լինի միայն մեկ ծառայություն մատուցող: Սա նշանակում է, որ թափոնների հավաքման ծառայություն մատուցողն իր սպասարկման շրջանի ներքո կօգտվի բացառիկության իրավունքից (և պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում՝ սահմանափակ բացառիկության իրավունքից): Թույլտվությունների տրման ներկայումս գործող ռեժիմը նման պայմաններ չի ապահովում:

Վերը հիշատակված գործընթացները կարգավորող օրենսդրական միջոցների բացակայության պայմաններում, «հատուկ հատկացված վայրերում թափոնների տեղադրման» համար թույլտվությունը և աղբավայրերի շահագործման համար անհրաժեշտ թույլտվությունը բավարար չեն և խոչընդոտ կհանդիսանան մասնավոր հատվածի՝ ներդրողների համար:

7. Կատարողականի մոնիտորինգի / կանոնակարգող համակարգի բացակայությունը (Հղումներ No 7 և 9):

Չնայած, որ համայնքների ավագանիները և ՀՀ բնապահպանության նախարարությունը օժտված են վերահսկողության լիազորություններով, պարզ չէ, թե որքանով են այդ վերահսկողության լիազորությունները և իրավասությունները համակարգվում և կիրարկվում: Պարզ չէ նաև, թե վերահսկման ինչպիսի՞ իրավասությունների մասին է խոսվում: Դա կարող է լինել (որպես փաստարկ) ավագանու կողմից համայնքի ղեկավարի գործունեության վերահսկում, որի նպատակն է գնահատել, թե արդյոք (և որքանով) համայնքի ղեկավարը կազմակերպում է թափոնների հավաքման (աղբահանության) գործընթացը:

Չկա որևէ դրույթ, որը կշաղկապի թափոնների հավաքման ծառայություններ մատուցող օպերատորի փաստացի կատարողականը (ծառայությունների մատուցման որակը) սակագնի կամ այլ տեսակի հատուցման հետ: Անշուշտ, մասնավոր հատվածի կողմից մատուցված ծառայությունների փոխհատուցումը, սովորաբար, կարգավորվում է ծառայությունների մատուցման պայմանագրի համապատասխան դրույթներով: Սակայն կատարողականի մոնիտորինգի իրականացման սկզբունքը պետք է օրենսդրությամբ սահմանվի այնպես, ինչպես դա արվել է «թափոնների հեռացման վայրերի մոնիտորինգի» դեպքում («Թափոնների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված):

8. ՀԱՀ համապատասխան միջավայրի բացակայությունը (Հղումներ No 5, 8, 12 և 13):

Շատ երկրներում ՀԱՀ համար սահմանված են գնումների իրականացման հատուկ ռեժիմներ: Դա պահանջում է, որպեսզի պետական գնումների ավանդական ընթացակարգերի փոխարեն կիրառվեն նոր

ընթացակարգեր: Անհրաժեշտություն կառաջանա կատարելու համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որի արդյունքում ՀԱՀ մասով գնումը պետական գնումների մասին համապատասխան օրենքի կանոնակարգման առարկա չի լինի և խնդրին լուծում կտրվի ՀԱՀ օրենսդրության (օրենքի) շրջանակներում: Այս մոտեցումը ապացուցել է իր արդյունավետությունը, քանի որ ՀԱՀ նախապատրաստման և մրցույթի անցկացման ընթացքում պետական պաշտոնյաներից և գործադիր մարմիններից պահանջվող գիտելիքների և ունակությունների ամբողջությունը տարբերվում է այն գիտելիքներից և ունակություններից, որոնք անհրաժեշտ են սարքավորումների (օրինակ՝ գրասենյակի համար) գնումների կազմակերպման ընթացքում: Ներկայումս, ՀԱՀ-ն մնացած տեսակի մրցույթների (մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պես սովորական «մրցույթ» է:

Նախատեսվող ՀԱՀ մասին օրենքը սովորաբար լրացվում է օտարերկրյա ներդրումների մասին օրենքով: Երկու օրենքն էլ սահմանում են անհրաժեշտ պայմաններ ժամանակակից և արդյունավետ մրցույթի համար, ինչպես նաև բարենպաստ միջավայր՝ մրցույթից հետո: ՀԱՀ մասին օրենքը թույլ է տալիս ընտրել համապատասխան պահանջներին բավարարող կազմակերպություն, իսկ օտարերկրյա ներդրումների մասին համապատասխան օրենքը ստեղծում է բարենպաստ պայմաններ այդ կազմակերպության գործունեության համար: Այդ պատճառով, երկու օրենքն էլ պետք է համակարգված կիրարկվեն, հաշվի առնելով ՀԱՀ կազմակերպման վրա դրանց ազդեցությունը: ՀԱՀ նախապատրաստումը (պլանավորումը) պետք է համապատասխանի օտարերկրյա ներդրումների մասին համապատասխան օրենքի պահանջներին, իսկ օտարերկրյա ներդրումների մասին օրենքը պետք է համապատասխան պայմաններ ստեղծի ՀԱՀ մասին օրենքի «արդյունքի» համար, այսինքն մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպության կողմից ՀԱՀ ծրագրի կիրարկման համար:

Ներկայումս Հայաստանում ընդունված չէ ՀԱՀ մասին օրենք: Բացակայում է նաև «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնումների իրականացման հատուկ կարգը: «Օտարերկրյա գնումների մասին» ՀՀ օրենքի անգլերեն տարբերակը պարունակում է մի շարք անորոշ դրույթներ:

Դա նշանակում է, որ պոտենցիալ ներդրողի կողմից անցկացվող ցանկացած փորձագիտական ուսումնասիրություն անխուսափելիորեն կբացահայտի և այս թերությունները կներկայացնի արտասահմանում գտնվող (եթե ՀԱՀ հիմնական մասնակիցն ուղղակի արտասահմանյան ներդրող է) ներդրողի գործադիր խորհրդի ուշադրությանը: Հետևաբար, ներդրումների կատարման վերաբերյալ գործադիր խորհրդի «դրական» որոշումը քիչ հավանական է: Այսպիսով, ՀԱՀ համար համապատասխան ընթացակարգերի և իրավական հիմքերի բացակայությունը խոչընդոտում է մասնավոր հատվածի մասնակցությանը:

4.3 Տարբերակների վերլուծությունը / խոչընդոտների հաղթահարումը

Այս գլխում կամփոփվեն և, հնարավորություն դեպքում, կմիավորվեն նախորդ գլխում բացահայտված խոչընդոտները, որոնք այսուհետև կլինեն տարբերակների վերլուծության առարկա: Եզրակացությունները

կտրվեն յուրաքանչյուր խոչընդոտի հաղթահարման առավել նպատակահարմար տարբերակների վերաբերյալ:

Նախորդ գլխում բացահայտված խոչընդոտներն են.

1. Թափոնների դասակարգումը
2. Վճարման պարտավորությունը
3. Մոնիտորինգը
4. Սակագների սահմանումը
5. Վճարների գանձումը
6. Թույլտվությունների տրման կանոնակարգը
7. Կատարողականի մոնիտորինգի / կանոնակարգող համակարգի բացակայությունը
8. ՀՄՀ համար համապատասխան միջավայրի բացակայությունը:

Հիշատակված խոչընդոտները կարող են միավորվել հետևյալ խմբերում.

- Ա. Թափոնների դասակարգում
- Բ. Վճարման պարտավորություն
- Գ. Իրավասություններ
- Դ. ՀՄՀ միջավայր:

Քանի որ օրենքում կատարվող փոփոխությունը կարող է ազդել գործող այլ օրենքների վրա, ապա նման փոփոխությունը պետք է կատարվի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, օրենքում փոփոխություններ կատարելու մասին ցանկացած առաջարկություն պետք է արվի զգուշությամբ:

4.3.1 «Ա» խմբի (Թափոնների դասակարգում) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակ

Թափոնների սահմանումը կարևոր է մասնավոր (կամ հանրային) հատվածի կողմից մատուցվող ծառայությունների սահմանման տեսանկյունից: Արտադրության և կենցաղային թափոնները դիտարկվում են նույն և մեկ «արշինով» և հստակ տարանջատված չեն վտանգավոր թափոններից:

Չնայած թափոնների դասակարգումն ըստ թափոնների հոսքերի, սովորաբար, ենթաօրենսդրական կարգավորման խնդիր է, թափոնների սահմանումը պետք է կարգավորվի համանման օրենսդրության պես (օրինակ ԵՍ «Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվին» համանման): Թափոնի սահմանումը կարևոր իրավական սկզբունք է, որը պետք է դրանից բխող դասակարգումների համար հանդիսանա անկյունաքար: Այլ ենթաօրենսդրական ակտերը կարող են հեշտությամբ փոփոխվել և լրացվել:

Հետևաբար «Թափոնների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ: Արդյունաբերական/առևտրային թափոնները պետք է տարանջատվեն տնային տնտեսությունների (կենցաղային) թափոններից: Դա անհրաժեշտ է թափոնների տարբեր հոսքերի դեպքում տարբեր ռեժիմների կիրառման համար (օրինակ՝ անձնագրավորման համակարգի կիրառումը՝ արտադրության/առևտրային թափոնների համար, սակագների սահմանումը և արտադրության/առևտրային թափոնների

հնարավոր հանունը պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկից): Հիշատակված երկու տեսակի թափոնները պետք է հստակորեն տարանջատվեն վտանգավոր թափոններից:

Այս իմաստով, «Թափոնների մասին» ՀՀ օրենքը փոփոխության կարիք ունի:

4.3.2 «B» խմբի (Վճարման պարտավորություն) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակներ

Ինչպես արդեն նշվեց, ՔԿԹ գործածության բնագավառում մատուցված ծառայությունների համար վճարման պարտավորության և վճարների գանձման ներկայումս գործող կարգը միանշանակ վճարների հավաքագրման ռիսկը դնում է թափոնների հավաքման ծառայություններ մատուցող (մասնավոր) կազմակերպության վրա: Այս իրավիճակն անընդունելի է, քանի որ այն խոչընդոտում է արտասահմանյան ներդրողների և պոտենցիալ մասնակիցների ներգրավմանը՝ ՔԿԹ գործածության բնագավառ՝ ՀՄՀ շրջանակներում:

Վիճակի շտկման համար կարելի է առաջարկել հետևյալ տարբերակները.

Առաջին տարբերակ. Փոփոխություններ կատարել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, թափոնների հավաքման ծառայությունները պետք է ներառվեն Օրենքի 8-րդ հոդվածում՝ պարտադիր վճարների ցանկում:

Երկրորդ տարբերակ. Թափոնների հավաքման ծառայությունների համար վճարները միավորել էլեկտրաէներգիայի սպառման վճարների հետ և գանձել այդ վճարների հետ միասին (պոտենցիալ չվճարումների պարագայում ունենալով այնպիսի հզոր կանխարգելիչ (զսպող) միջոց, ինչպիսին հոսանքազրկումն է): Սակայն, բանակցությունները էլեկտրաէներգիա մատակարարող կազմակերպությունների հետ խոստումնալից չեն և մինչ այժմ բոլոր մեծ առաջակությունները նրանց կողմից մերժվել են: Չկա գումարների գանձման այլ (կամ նմանատիպ) համակարգ, քանի որ ջրամատակարարման ծառայությունների համար վճարների հավաքագրման ցուցանիշները գրավում են երկրորդ տեղը էլեկտրամատակարարման ծառայությունների համար վճարումների հավաքագրման ցուցանիշներից հետո:

Երրորդ տարբերակ. Օպերատորներին ֆինանսական երաշխիքների տրամադրում: Մասնավորապես, Օպերատորին կարելի է տալ որոշակի նվազագույն եկամուտի ստացման երաշխիք: Սա կարող է հանդես գալ որպես մրցույթի ընթացքում կիրառվող ֆինանսական առաջարկի փոփոխական: Եթե օպերատորի կողմից հաշիվների ներկայացման և համապատասխան վճարների գանձման արդյունքում ստացված ընդհանուր գումարը ավելի քիչ է, քան երաշխավորված նվազագույն եկամտին համապատասխանող գումարը, ապա օպերատորը կարող է երևանի քաղաքապետարանից ստանալ համապատասխան սուբսիդիա՝ չբավարարող գումարի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրորդ տարբերակն իրատեսական չէ, ստորև դիտարկվում են առաջին և երրորդ տարբերակները: Երրորդ տարբերակը կհանդիսանա Երևանի քաղաքապետարանի շարունակական պայմանական

պարտավորությունը, քանի որ պահանջվող երաշխիքն, ամենայն հավանականությամբ, կլինի հարաբերական արստրակտ երաշխիք, որը պայմանավորված կլինի նրանով, թե արդյոք օպերատորը հաշիվներ ներկայացրե՞լ է ծառայությունից օգտվողներին և փորձե՞լ է հավաքագրել այդ վճարները, թե՞ ոչ: Առաջին տարբերակը պարտադիր չէ, որ հանդիսանա ֆինանսական պարտավորություն, քանի որ այն երևանի քաղաքապետարանին հնարավորություն է տալիս ծառայությունների դիմաց վարձատրությունները գանձել ծառայություններից օգտվողներից: Այսպիսով, առաջարկվում է օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ: Փոփոխությունների կատարումն արդարացված է, քանի որ դա զգալիորեն կնպաստի ներդրողների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը և, միևնույն ժամանակ, չի հանդիսանա չնտածված որոշում:

Օրենքում փոփոխություններ կատարելու հիմնավորումները սկիզբ են առնում ՀՀ Սահմանադրությունից: ՀՀ Սահմանադրությունը պահանջում է, որպեսզի ապահովվի շրջակա միջավայրի պահպանությունը և մարդու բարեկեցությունը: Այդ նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ծառայություններ մատուցեն և իրավունք ունեն այդ ծառայությունների մատուցման համար վճարներ գանձել:

Պարզ է, որ ոչ բոլոր հանրային ծառայություններն են նպաստում ՀՀ Սահմանադրության այս երկու հիմնական նպատակների իրականացմանը: Հարց է առաջանում, թե ո՞ր ծառայությունները պետք է մատուցվեն: Համենայն դեպս, դրանք պետք է լինեն այն ծառայությունները, որոնք ունեն (դրական կամ բացասական) ազդեցություն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Թափոնների գործածության հետ կապված ծառայություններն ազդեցություն ունեն ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ մարդու առողջության վրա, քանի որ այդ ծառայությունների բացակայությունը (թափոնները կուտակվում են և չեն հավաքվում) կբերի շրջակա միջավայրի աղտոտմանը և կարող է նպաստել հիվանդությունների տարածմանը: Մյուս կողմից, էլեկտրամատակարարումը միևնույն ձևով ուղղակիորեն չի ազդում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, այնպես, ինչպես կարող է ազդել թափոնների հեռացման ծառայությունների բացակայությունը: Եթե էլեկտրամատակարարումը դադարեցվում է, ապա այդ հանգամանքը ինքնըստինքյան քիչ ազդեցություն ունի հիշատակված գործոնների վրա: Միայն անուղղակի ազդեցությունը կարող է վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի և մարդկանց բարեկեցության համար, ինչպես, օրինակ, հիվանդանոցի հոսանքազրկման դեպքում: Այսպիսով, իրադարձության և հնարավոր ազդեցության միջև չկա ուղղակի փոխկապվածություն: Թափոնների գործածության դեպքում այդպիսի ուղղակի կապ կա, հետևաբար թափոնների գործածության ծառայությունների մատուցումը սահմանադրական պարտավորություն է:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով «կատարել պարտադիր վճարումներ»: Քանի որ թափոնների գործածության ծառայությունների մատուցումը ներառված է ՀՀ Սահմանադրության նպատակների շրջանակներում, ապա դա նշանակում է, որ գոյություն ունի նաև այդ ծառայությունների վճարման սահմանադրական պարտավորություն: Այդ պարտավորությունը տարածվում է

ծառայություններից օգտվողների վրա, կամ նրա վրա, ով վճարում է
ծառայություններից օգտվողների անունից:

Քանի որ ՀՀ Սահմանադրությամբ նշվում է, որ «վճարումները
կատարվում են օրենքով սահմանված կարգով» և, հաշվի առնելով
թափոնների հավաքման ծառայությունների վճարումը կարգավորող
«օրենքի» բացակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ
Սահմանադրության հիմնական հասցեատերը հանրությունն է, ապա
անհրաժեշտություն է առաջանում ընդունել այս գործընթացը
կարգավորող օրենք, կամ համապատասխան փոփոխություններ
կատարել արդեն ընդունված օրենքներում: Քանի որ թափոնների
հավաքման (աղբահանության) կազմակերպումը տեղական
ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություններից մեկն
է, ապա վճարների ապահովումը պետք է կանոնակարգվի «Տեղական
տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով¹⁷:

Այսպիսով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում
պետք է փոփոխություններ կատարվեն, այնպես, որ թափոնների
հավաքման ծառայությունների համար վճարները դառնան պարտադիր (և
այլևս չպահանջվեն քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքում):

4.3.3 «Գ» խմբի (Իրավասություններ) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակներ

Մի շարք իրավասություններ հստակ սահմանված չեն և, որպես
այդպիսիք, պարզ չեն: Դա հիմնականում վերաբերում է մոնիտորինգի և
կառավարման հետ կապված այնպիսի իրավասություններին, ինչպիսիք
են «Թափոնների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ
օրենքներում հիշատակված «հսկողության», «վերահսկման» և
«հավանություն տալու» իրավասություններն են: ՔԿԹ գործածության
բնագավառում պոտենցիալ ներդրողների համար այս երեք
իրավասությունների հստակեցումը ներկայումս կարելի է ապահովել
ենթաօրենսդրական ակտերի կամ նույնիսկ քաղաքական
հայտարարության միջոցով: Միջնաժամկետ հեռանկարում, այս
իրավասությունները կարող են օգտագործվել ՔԿԹ բնագավառը
կարգավորող հատուկ միավորի (մարմնի) ստեղծման համար:

¹⁷ Անըդունելի է այն փաստարկը, համաձայն որի թափոնների հավաքման
ծառայությունների վճարումը կարգավորվում է քաղաքացիական
օրենսդրությամբ և հետևաբար նոր օրենքի ընդունման կարիք չկա: Եթե դա
հնարավոր լիներ, ապա մնացած բոլոր վճարման սահմանադրական
պարտավորությունները նույնպես կարող էին «տեղափոխվել» մասնավոր
իրավունքի կարգավորման դաշտ և հանդիսանալ «պայմանագրերի» առարկա,
ինչ բնորոշ է մասնավոր իրավունքի համար: Այդ իսկ պատճառով գոյություն ունի
հանրային իրավունք, որը կարգավորում է այն, ինչ որ պարտադիր կերպով
պետք է կարգավորվի: Հարկերի հավաքագրումը և պետության եկամուտները
զգալիորեն կնվազեին, եթե հարկերի փաստացի մուծման համար անհրաժեշտ
լիներ պետության և հարկատուների միջև կնքված անհատական
«պայմանագիր»:

Թույլտվություններ.

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում հիշատակված թույլտվությունների տրման իրավասություններն այլ խնդիր են: Ակնհայտ է, որ ՔԿԹ գործածության բնագավառում թույլտվությունների տրման ներկա համակարգը գործնականում պատշաճ չի ապահովում շրջակա միջավայրի և մարդու առողջության (ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պարտադիր պահանջների) հետ անմիջապես առնչվող կարևորագույն գործունեության կարգավորումը:

Թույլտվությունների տրման արդյունավետ համակարգի բացակայություն հետ կապված խնդիրն անհրաժեշտ է լուծել: Պետք է սահմանել թույլտվությունների տրման համապարփակ համակարգ, որը հնարավորություն կտա թույլտվությամբ ուրվագծել ՔԿԹ գործածությանբնագավառում ՀՄՀ ակնկալվող ցանկացած համակարգի անկյունաքարերը: Դրանք են. ծառայությունների մատուցման ժամանակահատվածը, բացառիկության իրավունքը, որակի չափանիշները, պատշաճ մակարդակով ծառայությունների մատուցման դեպքում պայմանագրի երկարաձգման հնարավորությունը և անբավարար ցուցանիշների դեպքում՝ դադարեցման հնարավորությունը: Այս գործընթացը պետք է կարգավորվի «Թափոնների մասին» ՀՀ օրենքով:

Պետք է լինի մեկ տեսակի թույլտվություն՝ թափոնների հավաքման, փոխադրման (պահման) ու տեղադրման համար և մեկ այլ թույլտվություն՝ աղբավայրի շահագործման համար: Այդ կապակցությամբ ԵՄ «Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվը» սահմանում է ցուցումներ և «Թափոնների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ:

Սակագները

Անհրաժեշտ է կիրառել սակագների սահմանման տարբեր համակարգեր առևտրային/ արտադրության և տնային տնտեսությունների (սպառման) թափոնների համար: Դա անհրաժեշտ է, քանի որ թափոնների հավաքման ծառայությունների համար պարտադիր վճարների գանձումը կտարածվի ինչպես կենցաղային, այնպես էլ արտադրության/առևտրային թափոնների վրա:

Դա նշանակում է, որ պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում առևտրային թափոնների հավաքման ծառայությունների մատուցումը, չի կարող հանդիսանալ մրցույթի առարկա: Ուստի, առևտրային սակագները պետք է սահմանվեն որպես «առավելագույն» սակագներ (առնվազն պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում), ինչը օպերատորներին թույլ կտա արդյունավետ մրցակցել կազմակերպություններին ծառայություն մատուցելու համար: Հետևաբար, ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում առևտրային սակագները կսահմանվեն որպես առավելագույն սակագներ: ՀՄՀ նախատեսված սցենարի ներքո պայմանագրի գործողության առաջին 5 տարիների ընթացքում անհրաժեշտություն չկա փոխել առևտրային սակագների սահմանման ներկայումս գործող կարգը, քանի որ այդ ընթացքում օպերատորների միջև մրցակցություն չի լինելու (այլ կերպ ասած, Երևանի քաղաքապետարանը, ցանկության դեպքում, կարող է շարունակել ներկայումս կիրառվող պրակտիկան):

«Թափոնների մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներում նախատեսվող փոփոխությունները կբավարարեն այս պայմաններին: Երևանի քաղաքապետարանը կարող է հետևել վերը նկարագրված մոտեցմանը և պատրաստել համապատասխան ուղեցույց ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածի համար:

Մոնիտորինգ

Անհրաժեշտ է հստակեցնել համայնքի ղեկավարի, ավագանու և պետական կառավարման մարմինների իրավասությունները («վերահսկում», «հսկողություն» և «հավանություն տալ»): Ներկայումս առաջարկվում է այդ իրավասությունները հստակեցնել ոչ ֆորմալ մակարդակով: Օրինակ, ծանոթագրության միջոցով, որը պոտենցիալ ներդրողին թույլ կտա պատկերացում կազմել այն մասին, թե ի՞նչ են իրենցից ներկայացնում մոնիտորինգի (և հսկողության) այս իրավասությունները, և ինչպիսի՞ պարագաներում և ե՞րբ են այդ իրավասությունները կիրառվում:

Մեկ այլ լուծում կարող է հանդիսանալ համապատասխան ենթաօրենսդրական ակտի ընդունումը: Սակայն դա կարող է վտանգել հետագայում ՔԿԹ բնագավառում բարեփոխումների իրականացման և ավելի համապարփակ կարգավորման դաշտի ստեղծման միջնաժամկետ նպատակը:

Այդ պատճառով, Երևանի քաղաքապետարանի կողմից մրցույթի պոտենցիալ մասնակիցների համար պատրաստված բացատրական ծանոթագրությունը համարվում է բավարար լուծում: Ծառայությունների մատուցման պայմանագիրը կներառի այդ ծանոթագրության դրույթները, որոնք հետագայում կսահմանվեն նաև իրավական ակտի տեսքով:

4.3.4 «Դ» խմբի (ՀՄՀ միջավայր) խոչընդոտների մասով առաջարկվող տարբերակներ

ՀՄՀ համար համապատասխան միջավայրի բացակայությունը խոչընդոտում է ՔԿԹ գործածության բնագավառ մասնավոր սեկտորի ներգրավմանը: Կարճաժամկետ հեռանկարում համապատասխան օրենքներում առաջարկվող մի շարք սկզբունքային փոփոխությունները թույլ կտան վերացնել առավել բացահայտ խոչընդոտները:

Ներկայումս, ենթակառուցվածքային որոշ բնագավառներ (երկաթգծային փոխադրումներ և էլեկտրամատակարարում) ստեղծել են ՀՄՀ իրավական և պայմանագրային իրենց սեփական միջավայրը, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանում վարվող ՀՄՀ քաղաքականության արդյունքում ստեղծվում է բազմատեսակ միջավայր:

Պոտենցիալ ներդրողը կարող է նախընտրել աշխատել միատեսակ, և ոչ թե բազմատեսակ միջավայրում, քանի որ ՀՄՀ ընթացքում բազմատեսակ միջավայրում փոփոխությունների հավանականությունն ավելի մեծ է: Ի վերջո, ՀՄՀ-ն երկարատև միջոցառում է և միատեսակ միջավայր, իր ելայամբ, ենթադրում է կայունություն:

Սակայն գոյություն ունեն ՀՄՀ միջավայրի կարգավորման մի քանի տարբերակներ, որոնք առնչվում են ՀՄՀ մեկնարկի, գնումների

իրականացման և ՀՄՀ վերջնական իրականացման հետ: ՀՄՀ գործակալությունը կարող է կատարել բոլոր գործառնությունները, կամ դրանց մի մասը: Կան օրինակներ, երբ ՀՄՀ գործակալությունը պատասխանատու է ինչպես գործընթացի մեկնարկի, այնպես էլ գնումների իրականացման և ՀՄՀ (կատարողականի) մոնիտորինգի համար: Որոշ դեպքերում նախարարությունը սկսում է ՀՄՀ գործընթացը, գնումները կատարվում են ՀՄՀ գործակալության կողմից, իսկ իրականացման/ մոնիտորինգի լիազորությունները պայմանագրային հիմունքներով վերադարձվում են նախարարությանը կամ փոխանցվում բնագավառը կարգավորող հատուկ միավորին (մարմնին):

Առաջարկվող (լավագույն) տարբերակները

Տարբերակ	Մեկնարկում	Գնումների իրականացում	Իրականացում / կարգավորում
1	Նախարարություն / ՀՀ կառավարություն	Գնումների գործակալություն («Գնումների մասին» ՀՀ օրենք)	Նախարարություն (Պայմանագիր և օրենք)
2	Նախարարություն / ՀՀ կառավարություն	ՀՄՀ գործակալություն (ՀՄՀ մասին օրենք)	Նախարարություն (Պայմանագիր և օրենք)
3	Նախարարություն / ՀՀ կառավարություն	ՀՄՀ գործակալություն (ՀՄՀ մասին օրենք)	Բնագավառը կարգավորող (Պայմանագիր)
4	Նախարարություն / ՀՀ կառավարություն (ՀՄՀ գործակալ.)	ՀՄՀ գործակալություն (ՀՄՀ մասին օրենք)	ՀՄՀ գործակալություն (ՀՄՀ օրենք և պայմանագիր)
5	Նախարարություն / ՀՀ կառավարություն	Գնումների գործակալություն («Գնումների մասին» ՀՀ օրենք)	Բնագավառը կարգավորող (Պայմանագիր և օրենք)
6	Նախարարություն / ՀՀ կառավարություն	Գնումների իրականացման հատուկ մարմին (բնագավառը կարգավորող օրենք)	Նախարարություն / բնագավառը կարգավորող (պայմանագիր և օրենք)

Քանի որ Հայաստանի Հանրապետությունն արդեն կիրառել է հիշատակված տարբերակներից մեկը, այն է բնագավառին յուրահատուկ գնումների իրականացումը և (հանրային) կարգավորումը պայմանագրի միջոցով, ապա, հավանաբար, նպատակահարմար է, որ Երևանի ՔԿԹ բնագավառում ՀՄՀ տարբերակները նույնպես իրականացվեն այդ սկզբունքով: Այդ տեսանկյունից, ցանկալի կլիներ, որ ՀՀ կառավարությունը հանդես գար այս իրավիճակը պարզաբանող քաղաքական հայտարարությամբ:

Միջնաժամկետ հեռանկարում ՀՀ կառավարությունը կարող է իրականացնել ՀՄՀ բնագավառի ավելի լայնածավալ բարեփոխումներ և օգուտ քաղել ՀՄՀ տարբեր բաղադրիչների համատեղումից: Օրինակ, պոտենցիալ ՀՄՀ համար «փողի արժեքի» (ֆինանսական ծախսերի արդյունավետության) գնահատումը սկզբունքային նշանակություն ունի ՀՄՀ միջոցով ծրագրի իրականացման ներուժի առկայության և այդ ներուժի գնահատման համար: Եթե ծրագիրը նման ներուժ ունի, ապա ՀՄՀ սխեման պետք է նախագծվի այնպես, որ հնարավոր լինի ապահովել բոլոր անցանկալի ազդեցությունների (ծրագիրը չափից ավել

գրավչություն, կամ բավական գրավչության բացակայություն) հաղթահարման համար անհրաժեշտ ճկունությունը:¹⁸

Այս իրավասությունը պետք է տրվի նախարարությանը և (համապատասխան ուսուցում ստացած) անձնակազմին, կամ համապատասխան կառավարական մարմնին (օրինակ՝ ՀՄՀ գործակալությանը):

Գնումների իրականացման լիազորությունները կարող են փոխանցվել կառավարչական մարմնին (ՀՄՀ գործակալությանը) կամ մնա գոյություն ունեցող կառուցվածքների իրավասությունների շրջանակներում: Մեկ այլ տարբերակ է բնագավառին յուրահատուկ գնումների իրականացման կարգի սահմանումը, որը կհամապատասխանի գնումների իրականացման հիմնական սկզբունքներին և միջազգային լավագույն փորձին:

Իրականացման, մոնիտորինգի և կարգավորման լիազորությունները և գործառույթները կարող են մասնակիորեն տրվել միևնույն կառավարչական մարմնին (տվյալների հավաքագրում և համակարգում, չափանիշների սահմանում և այլն), կամ փոխանցվել բնագավառը կարգավորող գործակալությանը: Որպես այլընտրանք, այս գործառույթները կարող են կատարվել հանրության կողմից ծառայությունների մատուցման կամ նմանատիպ պայմանագրի հիման վրա (պայմանագրային հիմունքներով կարգավորում):

¹⁸ Հաշվի են առնվել 2008թ. ՄԱԶԾ-ի կողմից մշակված «Հարմարային-մասնավոր համագործակցությունը Հայաստանում» փաստաթղթում բերված առաջարկությունները:

5 Օրենսդրության կիրարկման ապահովման առաջարկներ


5.1 Փուլային բարեփոխման հայեցակարգը



Հայաստանում և, մասնավորապես, Երևանում ՔԿԹ բնագավառի բարեփոխումը պետք է տեղի ունենա փուլային կարգով: Այս մասին խոսվել և քննարկվել է Երևանում տեղի ունեցած շահագրգիռ տարբեր կողմերի և ծրագրի ղեկավար կոմիտեի հանդիպումների ժամանակ, որոնցից վերջինը տեղի է ունեցել 2009 թվականի մարտի 11-ին: Բարեփոխման հայեցակարգը տրոհվում է անմիջական (կարճաժամկետ), միջնաժամկետ և երկարաժամկետ մոտեցումների:

1. Մաքրման մոտեցում
2. Բնապահպանական մոտեցում
3. Ինտեգրացված ՔԿԹ:

Ստորև բերված աղյուսակում տրված են այս մոտեցումներից յուրաքանչյուրին համապատասխանող գործառույթները և բնութագրերը:

Պատկեր 1 Փուլային բարեփոխման հայեցակարգ

Մոտեցումը	Ժամկետը (տարի)	Մանրամասնությունները
Մաքրում		<ul style="list-style-type: none"> - Երևանում ՔԿԹ բնագավառում ՀՄՀ կիրարկումն ապահովող օրենսդրության ընդունում. - Թափոնների հավաքման և տեղադրման համար թույլտվության ռեժիմի ապահովում. - Ծառայությունների մատուցման տարածքում բացառիկ իրավունքի ապահովում և ծառայությունների մատուցման որակի մոնիտորինգի իրականացում պայմանագրային հիմունքներով. - Բացառիկ իրավունքի վերացման նախապատրաստում՝ առևտրային հատվածի մասով - Ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում - Թույլտվությունների համակարգի կիրարկում, որպես հարկադրանքի (զսպման) գործիք - Թափոնների գործածության ազգային ծրագրի մշակում:

Շրջակա միջավայր		<ul style="list-style-type: none"> - Բացառիկ իրավունքի վերացում առևտրային հատվածի մասով - Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվի սկզբունքների (հետագա խնամքը, կենսափուլը, տեսակավորումը, վերամշակումը և այլն) ինտեգրում - Սակագների որոշման սկզբունքի վերանայում և «աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրարկում - Թափոնների գործածության ոլորտում կարգավորող մարմնի ստեղծում - Թափոնների գործածության ազգային պլանի կիրարկում - Գործող օրենքների և իրավական այլ ակտերի վերանայում - ՀՄՀ միջավայրի ձևավորում:
Ինտեգրացված ՔԿԹԳ		<ul style="list-style-type: none"> - ՔԿԹ գործածության ժամանակակից ինտեգրված համակարգի ապահովում - Համապատասխան ստանդարտների և նորմերի ներդրում - Թափոնների գործածության բնագավառում ՀՀ օրենքների ամբողջությամբ ներդաշնակեցում՝ Եվրոպական համայնքում գործող օրենքների հետ (<i>UE acquis communautaire</i>) - Որոշակի զարգացած ՀՄՀ միջավայրի առկայություն:

Ծրագրի տեխնիկական առաջադրանքի համաձայն Երևանում ՔԿԹ-ի բնագավառում պահանջվում է ՀՄՀ օրենսդրության կիրարկման ապահովում: Ինչպես արդեն նշվել է, , ցանկացած օրենսդրական փոփոխություններով պայմանավորված օժանդակ ազդեցությունները (այլ օրենքների վրա) պետք է լինեն սահմանափակ: Ավելին, առաջարկվող օրենքի փոփոխությունները և լրացումները չեն կարող վերաբերել զուտ Երևանին և պետք է հաշվի առնեն նրանց ազդեցությունը ամբողջ Հայաստանի տարածքում:

Միջնաժամկետ նպատակի իրագործումը կարելի է ապահովել ճյուղային կամ միջճյուղային ՀՄՀ գործակալության ստեղծման և ՀՄՀ իրավական դաշտի (ներառյալ օրենքների և ենթօրենսդրական ակտերի) ապահովման միջոցով: Սա քաղաքական որոշում է և կախված է լինելու այն ընդհանուր ուղղությունից, որը Հայաստանը ցանկանում է որդեգրել: Դա վերաբերում է ոչ միայն թափոնների գործածության բնագավառին, այլ ՀՄՀ-ին առնչվող բոլոր ենթակառուցվածքային ճյուղերին:

Երկու տարբերակներն էլ կիրառելի են: Հաշվի առնելով Հայաստանի հարաբերական չափերը և դրանով պայմանավորված ՀՄՀ-ի վրա ազդող սահմանափակումները, ճյուղային մոտեցումը կարող է ավելի կենսունակ թվալ: Սա այն մոտեցումն է, որը կիրառվել է մինչ այս պահը:

Բնագավառի կարգավորումը կարող է տեղի ունենալ պայմանագրերի և դրանց հարկադիր կատարումն ապահովող միջոցների կիրառմամբ: Պայմանագրերը ՀՄՀ հարաբերությունների կարգավորման համար ոչ

միայն լավագույն միջոցն են, այլ նաև ամենաթույլ տարբերակն են, քանի որ պայմանագրերը կարող են փոփոխվել բանակցության միջոցով, իսկ նոր օրենքները՝ կարող են փոխել պայմանագրային ռեժիմները: Այս տարբերակը նաև հանգեցնում է ջանքերի բազմապատկման, ինչի արդյունքում Հայաստանը ստիպված կլինի ներգրավել բազմաթիվ ծյուղային մասնագետների, որոնք ստացել են համապատասխան ուսուցում և կարող են իրականացնել կատարողականի վերահսկումը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Հայաստանի հարաբերական չափերը, սա կարող է լինել ամենահարմար և ծախսարդյունավետ տարբերակը:

Կան նաև փաստարկներ, որոնք պաշտպանում են միջճյուղային ՀՄՀ գործակալություն ունենալու տարբերակը: Մասնակի պետական կառույցի օգտին բերվող փաստարկների թվին է պատկանում համակարգվածության արդյունավետությունը, որը կարող է իրագործվել զման նախաձեռնության (ֆինանսական ծախսերի արդյունավետության որոշում, ՀՄՀ մշակում և այլն), զման իրականացման (մրցութային փաստաթղթերի պատրաստում և մրցույթի իրականացում) և մոնիտորինգի (տվյալների համախմբումը, ցուցանիշների մոնիտորինգը) գործընթացում, ինչն, այլ պարագայում՝ ավելի բարդ համակարգ ունենալու պայմաններում, տեղի չի ունենա: Կարողությունների ձևավորման աշխատանքները կարող են կենտրոնանալ մեկ համակարգում, այլ ոչ՝ բազմաթիվ, իսկ օրինաստեղծ / օրենսդրական փոփոխություններին ուղղված աշխատանքները կարող են իրականացվել համապարփակ ՀՄՀ օրենքի «հովանու» ներքո:

Ցանկացած տարբերակ, որը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ցանկանա կամ որոշի կիրառել, պետք է սկսվի և ուղեկցվի ուժեղ քաղաքական ձևակերպումներով, որոնց համաձայն քաղաքական հանձնառությունը փոխանցվելու է մասնավոր հատվածին: Առաջիկայում միակ գոյություն ունեցող տարբերակը պայմանագրային կարգավորումն է: Միջնաժամկետ տարբերակում ՀՄՀ միասեռ դաշտը պետք է [տարաբնույթ] մեկնաբանությունների հնարավորություն չտա: Եթե Երևան քաղաքը (որն անմիջականորեն ներգրավվելու է ՀՄՀ ծրագրերի գործընթացին) որոշի **Հանրային ծառայությունների կարգավորման գործակալությունն օգտագործել օպերատորների նկատմամբ մոնիտորինգի կամ կարգավորման աշխատանքներին օժանդակելու կամ կազմակերպելու համար, ապա նշվածը կախված կլինի ծառայությունների մատուցման մշակվող պայմանագրի բուն էությունից, որի օգնությամբ կսահմանվեն օրենքով չկարգավորված գործառույթների իրականացումը համապատասխան հանրային մարմինների միջոցով: Դա կարող է լինել Երևան քաղաքի վարչական համակարգում գործող աղբահանության կառավարման բաժին կամ կենտրոնական մարմին, որն իրականացնում է փորձի փոխանցում տարածքային/տեղական ինքնակառավարման մարմիններին:**

Վերադառնալով օրենքներին առաջարկվող փոփոխություններին, պետք է նշել, որ դրանք ընդգրկում են ընդամենը երկու օրենք. այն է՝ «Թափոնների մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքները: Առաջարկվող փոփոխությունների և լրացումների կատարումը նպատակահարմար է ոչ միայն Երևանի, այլ նաև այլ քաղաքապետարանների համար: Առաջարկվող փոփոխությունները վերաբերում են ոչ թե թափոնների գործածության բնագավառին վերաբերող ամբողջ օրենսդրությանը, այլ ՀՄՀ կիրարկման ապահովմանը:

5.2 Թափոնների բնագավառում կոնունալ ծառայությունների համար սակագների և վճարների սահմանման վերաբերյալ առաջարկությունները

Սակագների սահմանման համակարգի փոփոխությունները վերաբերում են վճարման պարտավորություններին: Քանի որ հաշիվների պատրաստումը, ներկայացումը և վճարների գանձումը կիրականացվի հանրության կողմից (ի տարբերություն պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում առևտրային հատվածի ծառայությունների մատուցման), սակագների սահմանումը, որպես այդպիսին, կհանդիսանա հանրային քաղաքականության խնդիր: Միջնաժամկետ հեռանկարում (բնապահպանական փուլ) այս մոտեցումը պետք է քննության առնվի, իսկ «մաքրման փուլին» այս խնդիրը շատ քիչ է առնչվում:

Հետևաբար, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

Օրենքի Հոդված 8-ում **ավելացնել** նոր (դ) ենթակետ հետևյալ ձևակերպմամբ. *«թափոնների հավաքման ապահովման և հսկողության իրականացման համար»:*

Հիմնավորում

Այս լրացումն անհրաժեշտ է, որպեսզի առանց անհատական պայմանագրերի հնարավոր լինի թափոնների հավաքման ծառայությունների մատուցման դիմաց գանձել վճարները, քանի որ ծառայությունների մատուցումը, որպես այդպիսին, իրականացվում է մասնավոր ընկերության կողմից:

Հնարավոր հետևանքները

Ենթակառուցվածքային կամ հանրային ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունները կարող են ցանկանալ նույն կերպ վարվել: Սակայն, այս պարագայում հիմնավորումն այն է, որ թափոնների հավաքումն անհիջականորեն վերաբերում է ՀՀ Սահմանադրությամբ (բոլորի համար) նախատեսված շրջակա միջավայրի պահպանության և մարդու բարեկեցության բարելավման պահանջներին: Այնուհետև ՀՀ Սահմանադրությունը մատուցված ծառայությունների համար սահմանում է «պարտադիր վճարներ կատարելու ռեժիմ» : Հետևաբար, առաջարկվող լրացումը և այս տիպի ծառայությունների համար վճարումները պարտադիր դարձնելը ուղղակիորեն փոխկապակցված է ՀՀ Սահմանադրության համապատասխան պահանջների հետ:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում ավելացվում է նոր 2.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «8-րդ հոդվածի (դ) ենթակետի դեպքում իրավաբանական անձանց համար և ելնելով թափոնի դասերից կարող են սահմանվել վճարների տարբեր դրույքաչափեր»

Հիմնավորումը.

Այս լրացումն անհրաժեշտ է, քանի որ Հոդված 11-ը սահմանում է. *«համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր»:* Թափոնների հավաքման դեպքում դա հնարավոր չէ, քանի որ տնային

տնտեսությունների և արտադրության / առևտրային թափոնների հավաքման ծառայությունների համար սահմանվում են տարբեր սակագներ: Բացի այդ, վտանգավոր թափոնների դեպքում պետք է կիրառվի այլ մոտեցում:

Հնարավոր հետևանքները

Առաջարկվող լրացումը կարող է «վտանգել» միատեսակ ռեժիմի կիրարկման սկզբունքը, սակայն դրա համար կա օբյեկտիվ հիմնավորում, այն է՝ «աղտոտողը վճարում է» սկզբունքը, որը դեռևս պետք է ներառվի ՀՀ օրենսդրության մեջ:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում կավելացվի նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքի Հոդված 8-ի (դ) ենթակետով սահմանված վճարների գանձման իրավունքը կարող է փոխանցվել այլ իրավաբանական անձանց, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Հիմնավորումը

Այս լրացումն անհրաժեշտ է նրա համար, որպեսզի ցանկության դեպքում վճարների գանձումը հնարավոր լինի իրականացնել «այլ իրավաբանական անձանց» միջոցով: Միևնույն ժամանակ, այս լրացման շնորհիվ, պայմանագրի գործողության երկրորդ ժամանակահատվածում թափոնների հավաքման ծառայությունների մատուցման համար առևտրային կազմակերպություններից վճարների գանձումը կարող է իրականացվել ծառայություններ մատուցողի կողմից՝ երբ կվերանա ծառայությունների մատուցման բացառիկ իրավունքը:

Հնարավոր հետևանքները

Լրացման կատարումը հիմնավորելու համար անհրաժեշտ է հստակ նշել, որ այս դրույթը չի հակասում Հոդված 8-ի (դ) ենթակետին, այլ լրացնում է այն և քաղաքապետարանին հնարավորություն է տալիս վճարների գանձման համար ներգրավել այլ իրավաբանական անձանց և խթանել մրցակցությունը ՔԿԹ բնագավառում:

Համապատասխան դրույթ պետք է սահմանվի նաև **«Թափոնների մասին» ՀՀ օրենքում:**

Ավելացվում է Հոդված 11-ի 1-ին մասում նոր «ե» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ. «գանձում է թափոնների հավաքման ծառայությունների համար վճարները կամ կազմակերպում է դրանց գանձումը»:

Հիմնավորում

Այս լրացումն անհրաժեշտ է, որպեսզի «Թափոնների մասին» ՀՀ օրենքում քաղաքապետարանի համար սահմանվի վճարների գանձման իրավասությունը (համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ Հոդվածի նոր (դ) ենթակետի և 11-րդ Հոդվածի նոր 2.1 կետի) և քաղաքապետարանին հնարավորություն տալ որոշակի պայմանների բավարարման դեպքում փոխանցել այդ լիազորությունը: Այդպիսի պայման կարող է հանդիսանալ այն, որ օպերատորը քաղաքապետարանին ներկայացնում է օպերատորի և առևտրային կազմակերպության (պատվիրատուի) միջև կնքված պայմանագիրը, (որն իրավաբանական ուժ է ստանում միայն քաղաքապետարանի կողմից հաստատման դեպքում), որում նշված է ավելի ցածր սակագին կամ

միևնույն սակագնի դեպքում երաշխավորվում է ավելի բարձր որակի ծառայությունների մատուցում: Այս դեպքում քաղաքապետարանը պետք է հաստատի պայմանագիրը և, միևնույն ժամանակ, ծառայությունների մատուցման համար գանձվող վճարը պետք է վերանայվի այն օպերատորի համար, որը «հաճախորդ» է կորցնում:

5.3 Թափոնների բնագավառում իրավասությունների սահմանման վերաբերյալ առաջարկությունները

Այս բաժինը նվիրված է «Թափոնների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը ՀԱՀ համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման նպատակով: Այս փուլում հարկ է նշել, որ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը բազմակողմանի վերանայման կարիք ունի, որի արդյունքում օրենքում կարելի է ներառել ԵՄ թափոնների գործածության ժամանակակից սկզբունքները, ստանդարտները և կարգերը: Այդ փոփոխություններն անհրաժեշտ է կատարել բնապահպանական փուլում: «Թափոնների մասին» ՀՀ օրենքում կատարվող փոփոխությունները և լրացումները կունենան սահմանափակ ազդեցություն (կամ ընդհանրապես ազդեցություն չեն ունենա) այլ օրենքների վրա, քանի որ այդ Օրենքը բնագավառին յուրահատուկ օրենք է: Միևնույն ժամանակ, համապատասխան ձևակերպումների ընտրության և լրացումների կատարման տեղերի որոշման ընթացքում փորձ է արվել խուսափել այլ օրենքների (օրինակ՝ «Լիցենզավորման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների) հետ հնարավոր հակասություններից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

ՔԿԹ-ն սահմանել որպես կենցաղային/ սպառման թափոններ և արտադրության / առևտրային թափոններ, տարանջատելով միմյանցից թափոնների այս երկու դասերը: Դա կարելի է իրագործել Օրենքի 4-րդ հոդվածում արտադրության և սպառման թափոնների սահմանումներին ավելացնելով համապատասխան ենթասահմանում:

Սահմանումը կարող է **վերաձևակերպվել** և գրվել հետևյալ խմբագրությամբ. *Քաղաքային կոշտ թափոնները* արտադրության և սպառման թափոններ (այսուհետ՝ թափոններ) են, որոնք *հանդիսանում են* արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: *Սպառման թափոնը ֆիզիկական անձանցից հավաքվող, տնային տնտեսություններում ստեղծվող թափոնն է, իսկ արտադրության թափոնը՝ իրավաբանական անձանցից հավաքվող թափոնն է, որը վտանգավոր կամ այլ հատուկ կանոնակարգման առարկա հանդիսացող թափոնն է:*

Հիմնավորում

Այս փոփոխությունն անհրաժեշտ է, որպեսզի ներդաշնակեցվի վճարման համակարգերի հետ: Միաժամանակ, առևտրային / արտադրության թափոնների մասով, կենցաղային թափոնների համեմատությամբ, սահմանվում են ավելի խիստ պայմաններ (օրինակ՝ անձնագրավորումը

և այլն): Բացի այդ, ՔԿԹ պետք է տարանջատվեն վտանգավոր թափոններից:

Այնուհետև, անհրաժեշտ է վերաձևակերպել նաև «Թափոններ առաջացնող»-ի սահմանումը և գրել հետևյալ խմբագրությամբ. «Թափոններ առաջացնող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի գործունեության ընթացքում գոյանում են ոչ կենցաղային թափոններ»:

Հիմնավորում

Այս փոփոխությունն անհրաժեշտ է, որպեսզի արտադրության / առևտրային թափոններ գոյացնողների նկատմամբ կիրառվեն համապատասխան հաշվետվության և անձնագրավորման ռեժիմներ:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում պետք է ներառվեն դրանում դեռևս չարտացոլված ԵՄ «Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվի» բացասական դրույթները, ինչի շնորհիվ որոշ տիպի թափոններ պետք է դասակարգվեն որպես ոչ կենցաղային/սպառման և ոչ առևտրային/արտադրության թափոններ: Այդ տիպի թափոնների թվին կարող են դասվել օգտագործած յուղերը, աղտոտված հողը, ռադիոակտիվ թափոնները, կենդանիների լեշը և այլն:

Վտանգավոր թափոնների սահմանումը պետք է լրացնել և գրել հետևյալ խմբագրությամբ. «Վտանգավոր թափոններն այն թափոններն են, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով ստեղծում են կամ կարող են ստեղծել վտանգ մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, և պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ: *Վտանգավոր թափոնները պարունակում են Հավելված 1-ում թվարկված նյութերը*»:

Ավելացվում է Հավելված 1, որում թվարկվում են առնվազն հետևյալ նյութերը. *«պայթուցիկ նյութեր, օքսիդիչ նյութեր, ծայրահեղ դյուրավառ նյութեր, դյուրավառ հեղուկներ, գրգռահարույց նյութեր, վնասակար նյութեր, թունավոր նյութեր, քաղցկեղածին նյութեր, քայքայիչ նյութեր, վարակիչ նյութեր, վերարտադրության թունավոր նյութեր, մուտազեն նյութեր, ջրի, օդի կամ թթուների հետ շփվելուց թունավոր և ծայրահեղ թունավոր գազեր արտանետող թափոններ, զգայունարար նյութեր, էկոտոքսիկ նյութեր, թափոնների նստվածքներ և թվարկված նյութերի հատկություններ ունեցող այլ նյութեր»:*

Հիմնավորում

Չնայած թափոնների հոսքերի որոշակի խառնումը մաքրման փուլում կարող է ընդունելի լինել (հանդիսանալով սովորական պրակտիկա), բնապահպանական փուլում, տարբեր դասի թափոնների նկատմամբ պետք է կիրառվեն տարբեր մոտեցումներ: Որոշակի դասի թափոնները չպետք է խառնվեն ՔԿԹ հետ:

Ինչ վերաբերում է թույլտվությունների ստացման համակարգին, ապա «Թափոնների մասին» ՀՀ օրենքում սահմանված է թույլտվությունների տրման հիմքերը: Այդ առումով Օրենքում անհարաժեշտ է կատարել մի շարք լրացումներ:

Օրենքի 4-րդ հոդվածում անհրաժեշտ է ավելացնել թույլտվության սահմանումը հետևյալ բովանդակությամբ. *«Թույլտվությունները տրվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թափոնների*

հավաքման, փոխադրման և տեղադրման և թափոնների տեղադրման վայրերի կառուցման և շահագործման համար»:

Այնուհետև անհրաժեշտ է 11-րդ Հոդվածի 1-ին մասում **ավելացնել** նոր (գ) կետ հետևյալ բովանդակությամբ.

«գ) տրամադրում է թույլտվություն.

(1) թափոնների հավաքման, փոխադրման և տեղադրման համար և յուրաքանչյուր այդպիսի թույլտվությունը առնվազն սահմանում է ծառայությունների մատուցման մակարդակի ստանդարտներ, որոնց պետք է համապատասխանի թափոնների հավաքման ծառայություններ մատուցողը, սահմանում է կիրառվող տեխնոլոգիաները, թույլտվության գործողության ժամանակահատվածը և դադարեցման ու երկարաձգման պայմանները;

(2) թափոնների տեղադրման վայրերի կառուցման, շահագործման և պահպանման համար և յուրաքանչյուր այդպիսի թույլտվությունը առնվազն սահմանում է տեղադրվող թափոնների տիպը և քանակը, շահագործման թույլատրված մեթոդները և տիպերը, անվտանգության և նախազգուշության միջոցառումները, փակման և հետագա խնամքի դրույթները, թույլտվության գործողության ժամանակահատվածը և դադարեցման ու երկարաձգման պայմանները;

Հիմնավորում

Այս լրացումները համապատասխանում են ԵՄ «Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվի» նվազագույն պահանջներին: Միաժամանակ, հիշատակված խնդիրներից մի քանիսը սովորաբար նաև կարգավորվում են ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով և թույլտվություններում առավել կարևոր դրույթների ներառումը ապացուցել է իր արդյունավետությունը: Քաղաքապետարանը կունենա ՔԿԹ բնագավառի վերահսկման և կարգավորման երկու գործիք՝ ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ որպես մասնավոր իրավունքի գործիք և թույլտվությունը՝ որպես հանրային իրավունքի գործիք:

5.4 Գործող դրույթների վերանայումը և ՀՄՀ պայմանների բարելավմանն ուղղված առաջարկությունները

Գոյություն ունի ևս երկու խնդիր: Թաղապետարանի կողմից հայտարարված մրցույթի հաղթողին փաստացի «թույլտվության» տալը պետք է իրականացվի ինքնաբերաբար: Թույլտվության բովանդակությունը պետք է հայտնի լինի նախապես: Ըստ էության, թույլտվությունը տրվում է բոլոր մասնակիցներին և դա համապատասխան ծառայությունների մատուցման մասին պայմանագրի կամ համաձայնագրի հաստատման առարկա է: Սա կարող է պահանջվել բարեխիղճ հայտատուների ցանկացած կոնսորցիումի (համատեղ ձեռնարկության) կողմից և դրական ներգործություն ունի հավասար խաղադաշտի ստեղծման առումով:

Հաջորդ հարցը վերաբերում է բացառիկ իրավունքի վերացմանը և դրան զուգահեռ բնապահպանական մոտեցման որդեգրմանը, աղտոտման վճարների սկզբունքի կիրառմանը, հետագա խնամքի պարտավորություններին և այլն: Սա կարող է պահանջել «Թափոնների մասին» ՀՀ օրենքի համապարփակ վերանայում: Դա պետք է կամ կարող է իրականացվել շուկայի հետագա ազատականացմանը զուգահեռ:

5.5 Շահագրգիռ կողմերի վերլուծությունը

Հանրային ոլորտի ցանկացած բարեփոխման գործընթաց բոլոր շահագրգիռ կողմերից (շահառուներից) պահանջում է պարտավորվածության զգացում և համակրանք: Հիմնական շահագրգիռ կողմերի և բարեփոխման գործընթացում նրանց դերի որոշումը կարևոր է: Հարկ է բացահայտել ՔԿԹ ոլորտում գործող հիմնական շահագրգիռ կողմերին, նրանց հիմնական խնդիրները, ՔԿԹ բարեփոխման գործընթացի հետ նրանց նպատակների համապատասխանության աստիճանը, նրանց հարաբերական դերը բարեփոխման գործընթացում և զարգացումները կասեցնելու և/կամ զարգացմանը խոչընդոտելու նրանց հնարավորությունները:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են այն խրախուսական միջոցառումները, որոնց շնորհիվ պոտենցիալ կարևոր գործընկերները (շահառուները) կսատարեն բարեփոխման գործընթացին: Սա կարևոր նախաձեռնություն է և պահանջում է խորը վերլուծություն և սերտ երկխոսության հաստատում՝ հիմնական շահագրգիռ կողմերի միջև:

Բացահայտվել են հետևյալ հիմնական շահագրգիռ կողմերը (շահառուները).

Շահագրգիռ կողմը	Թափոնների գործածության ոլորտի բարեփոխմանը վերաբերող հիմնական նպատակները	Հանձնառու-թյան մակարդակը	Խրախուսիչ միջոցառումները
Կենտրոնական մակարդակով քաղաքականություն մշակողները (համապատասխան նախարարությունները).	<ul style="list-style-type: none"> • Կենսապայմանների բարելավում • Հաստատված քաղաքականության իրագործում • Եկամուտների և աշխատատեղերի ստեղծում, • Սահմանադրորեն ամրագրված մարդու առողջության և բնապահպանական պարտավորությունների կատարում: 	Կողմ բարձր	<ul style="list-style-type: none"> • Վաղ ներգրավում ռազմավարական որոշումների կայացման և բաց երկխոսության գործընթացում (տարբերակների վերլուծություն) • Ցանկացած (միջնաժամկետ և երկարաժամկետ) գործողություն պետք է ծառայի իրեն բնորոշ կարճաժամկետ նպատակների իրականացմանը:
Տեղական ինքնակառավարման մարմիններ	Տեղական մակարդակով կենսապայմանների, (ներառյալ ՔԿԹ գործարկման) բարելավում:	Կողմ բարձր (եթե համոզվեն)	Տեղական իշխանություններն ուղղակի պատասխանատվություն են կրում աղբահանության կազմակերպման համար: Բարեփոխման գործընթացին և բարեփոխման բերած օգուտներին զուգահեռ պետք է իրականացվի համապարփակ և դյուրըմբռնելի տեղեկատվական արշավ, որի միջոցով կներկայացվեն աղբահանության ճյուղի բարեփոխման նպատակները:


Շահագրգիռ կողմը	Թափոնների գործածության ոլորտի բարեփոխմանը վերաբերող հիմնական նպատակները	Հանձնառության մակարդակը	Խրախուսիչ միջոցառումները
Թափոնների հավաքման (կոմունալ) տեղական բաժիններ (կազմակերպություններ)	Սպասարկվողներին ֆինանսապես և տնտեսապես հավասարակշռված, մատչելի թափոնների հավաքման ծառայությունների մատուցում:	Կողմ՝ ցածրից միջին	Սովորաբար, ցանկացած փոփոխություն (նորություն) կարող է հանդիպել դիմադրության: Այդ բաժինների առումով հարկ է բացատրել, որ տեղի է ունենալու կադրերի վերապատրաստում, ինչը առանցքային նշանակություն է ունենալու ժամանակակից և արդյունավետ աղբահավաքման ծառայությունների կազմակերպման համար:
Տեղական ՓՄՁ-ներ	Շահույթի ստացում	Կողմ՝ միջին	Մասնավոր տեղական կազմակերպությունները պետք է ըմբռնեն բարեփոխման և ենթակառուցվածքային ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը, նույնիսկ եթե դա իր գինն ունի (ավելի բարձր գանձումներ): Կյանքի պայմանների բարելավումը, որը տեղի է ունենում բարելավված աղբահանության արդյունքում, իր հերթին նոր կայուն հնարավորություններ և օգուտներ կստեղծի մասնավոր ձեռնարկությունների համար:
Առկա աղբահանման ծառայություններ մատուցող կազմակերպություն	Գործում է աղբահանության (թափոնների հավաքման) ոլորտում և ստեղծում շահույթ	Դեմ՝ միջին	Գոյություն ունեցող մասնավոր ընկերությունները, որոնք արդեն իսկ աղբահանության ծառայություններ են մատուցում, կարող են փոփոխությունների նկատմամբ դժկամություն ցուցաբերել, քանի որ վատթարագույն դեպքում կարող են կորցնել իրենց գործը: Միևնույն ժամանակ, սա նրանց իրենց տնտեսական գործունեությունը ավելի ամուր հիմքերի վրա դնելու և դրանով իսկ այն ավելի կենսունակ դարձնելու նոր հնարավորություն է ընձեռում:

Հավելվածներ

Հավելված Ա. Հանդիպումներ և հարցազույցներ

6-րդ առաջադրանքի շրջանակներում անցկացված հանդիպումների ակնարկ		Ջ. Զոնտն	Ֆ. Սելմեր	Ա. Պողոսյան	Ս. Յերիցյան	Ա. Խարսեցյան	Մեկնաբանություններ
08.03.09	Ծրագրի փորձագետների հանդիպում	x	x	x	x		Քննադական վերլուծության ավարտ: Ծառայությունների մատուցման սահմանում:
09.03.09	Ա. Գաբրիելյան, ՀՀ ԲՆ շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ	x	x			x	ՔԿԹ գործածության և աղբավայրերի արտոնագրման բնագավառում ՀՀ ԲՆ լիազորությունների զննահատում:
09.03.09	Ս. Սրապյան, ՀՀ ՔՆ կոմունալ բաժնի պետ	x	x			x	ՔԿԹ գործածության և աղբավայրերի արտոնագրման բնագավառում ՀՀ ՔՆ լիազորությունների զննահատում:
09.03.09	Գ. Խաչատրյան, Երևանի քաղաքապետարանի կոմունալ վարչության պետ	x	x		x		Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի քննարկում: Քաղաքապետի լիազորությունների քննարկում:
10.03.09	Յ. Ղալլաբյան, ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական		x		x	x	Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի և օրենքներում փոփոխությունների կատարման ընթացակարգի քննարկում:
10.03.09	Ա. Միրզոյան, ՀՀ ԷՆ արդյունաբերական քաղաքականության բաժնի պետ	x	x			x	Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի քննարկում:
11.03.09	Կլոր սեղան (Ա. Պետրոսյան, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար, Ա. Միրզոյան, ՀՀ ԷՆ արդյունաբերական քաղաք. բաժնի պետ)	x	x	x	x	x	Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի և օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների քննարկում:
11.03.09	Համաշխարհային բանկ (Ա. Բալաբանյան, Ա. Կոչնակյան)	x	x				Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի և օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների քննարկում:
11.03.09	ՀՀ ԷՆ (Ն. Յերիցյան, ՀՀ էկոնոմիկայի նախարար, Հ. Միրզոյան, արդյունաբերության վարչության պետ և Ա. Միրզոյան, արդյունաբերական քաղաք. բաժնի պետ)	x	x			x	Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի և օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների քննարկում:
12.03.09	Ծրագրի փորձագետների հանդիպում	x	x	x	x		Բարեփոխումների հայեցակարգի և կառուցվածքի մշակման ավարտ:
12.03.09	Դ. Թումանյան, Համայնքների ֆինանսիստների միավորում ՈԿԿ	x	x		x		Համագործակցության հնարավորությունների և օրենքներում առաջարկվող փոփոխությունների քննարկում (օրինակ՝ ՈԿԿ-ն պատրաստել է ՏՏԿ մասին օրենքում փոփոխությունների կատարման առաջարկ):
12.03.09	Գ. Բեգլարյան, Երևանի քաղաքապետ և Հ. Միրզոյան, ՀՀ ԷՆ արդյունաբերության վարչության պետ	x	x	x		x	Նախատեսվող փոփոխությունների հայեցակարգի և օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների քննարկում: Քաղաքապետը առաջարկեց մշակել նոր օրենք:
12.03.09	Ն. Յերիցյան, ՀՀ էկոնոմիկայի նախարար	x				x	Քաղաքապետարանում կայացած հանդիպման արդյունքների ներկայացում և քննարկում:

Հավելված Բ. Իրավական ակտերի ստորադասությունը Հայաստանում



Օրենսդրական ակտեր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, Մաս 1)

Գերատեսչական ակտեր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, Մաս 2)

Տեղական ինքնակառավարման մարմինների ակտեր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, Մաս 3)

Միջազգային պայմանագրեր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, Մաս 4)

- կարող են կնքվել Հայաստանի Հանրապետության անունից՝ միջպետական պայմանագիր, ՀՀ Կառավարության անունից՝ միջկառավարական պայմանագիր, ՀՀ նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Գլխավոր դատախազության, ՀՀ կառավարության պետական կառավարման մարմինների անունից՝ միջգերատեսչական պայմանագիր:

Դատական ակտեր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, Մաս 5)

Հավելված 9. Օրենքների և իրավական այլ ակտերի ընդունման ընթացակարգը

Օրենքների ընդունումը, ուժի մեջ մտնելը, ուժի կորցնելը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդված, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդված): Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և Կառավարությանը, որոնք կարող են Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել օրենքների նախագծեր:

Օրենքները կարող են ընդունվել նաև հանրաքվեի միջոցով: Հանրաքվեի նշանակվում է Հայաստանի Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 75, 111 և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4):

Օրենքի նախագծի մշակումը իրականացվում է սահմանված ընթացակարգով և ընթացիկ ծրագրերի համաձայն: Հրատապ դեպքերում օրենքների նախագծերը կարող են մշակվել այդ ընթացիկ ծրագրերի շրջանակներից դուրս: ՀՀ Սահմանադրությանը և այլ իրավական ակտերին օրենքի նախագծի համապատասխանության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը տալիս է եզրակացություն: ՀՀ կառավարությունը հաստատում է նախագծերը, ՀՀ Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-174-Ն հրամանագրի համաձայն:

Այնուհետև օրենքերն ընդունվում են Ազգային ժողովի կողմից (կամ ներկայացվում և հաստատվում են հանրաքվեի միջոցով) և ստորագրվում ու հրապարակվում ՀՀ Նախագահի կողմից (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 55, Կետ 2; «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, Հոդված 48): Օրենքները ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 6):

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի, իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարում է միայն իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Օրենսգրքերում փոփոխություններ կամ լրացումներ կատարվում են օրենքով, ընդ որում օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը ճիշտ նույնն է, ինչ որ օրենքների ընդունման կարգը:

Օրենքը կարող է վերացվել, եթե դադարել է օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների հետագա իրավական կարգավորման անհրաժեշտությունը և եթե այդ օրենքի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտին տրվելու է հետադարձ ուժ: Օրենքները ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 73):

Իրավական այլ ակտերի ընդունումը, ուժի մեջ մտնելը, ուժի կորցնելը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը

Նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունվել մի շարք պետական մարմինների կողմից, համաձայն իրավական (ակտերի) ստորադասության («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդվածներ 12-19, 22 և 22.1): Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են ՀՀ Սահմանադրության և/կամ գործող օրենքների համաձայն: Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց կիրարկումն ապահովելու նպատակով (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 6), ինչը ենթադրում է ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունումը:

Իրավական ակտերը կարող են ընդունվել որպես «օրենսդրական ակտեր» կամ «գերատեսչական ակտեր», հաշվի առնելով իրավական ակտ ընդունող մարմնի ստորադասությունը և համապատասխան իրավասությունները:

- Օրենսդրական ակտերը (ընդգրկում է ՀՀ Սահմանադրությունը և օրենքները) ընդունվում են ՀՀ Ազգային ժողովի (որոշումներ), ՀՀ Նախագահի (հրամանագրեր և կարգադրություններ), ՀՀ կառավարության (որոշումներ) և ՀՀ վարչապետի (որոշումներ) կողմից:
- Գերատեսչական իրավական ակտերն ընդունվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի (որոշումներ), կարգավորող հանձնաժողովների և խորհուրդների (հրամաններ և հրահանգներ), ՀՀ Ազգային ժողովի նախագահի (հրամաններ), նախարարների (հրամաններ), ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների¹⁹ (հրամաններ), մարզպետների (որոշումներ կամ կարգադրություններ) և Երևանի քաղաքապետի (որոշումներ և կարգադրություններ) կողմից («Իրավական կատերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 4):

Օրենսդրական ակտերը ներկայացվում են Կառավարության քննարկմանը և համապատասխան նախարարություններին՝ կարծիք հայտնելու համար (ՀՀ Նախագահի ՆՀ-174-Ն հրամանագիր, Հոդված 31 և 40): Օրենսդրական ակտերը պետք է պաշտոնապես հրապարակվեն («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդվածներ 48, 49, 51, 52 և 53) և ուժի մեջ մտնեն դրանցում նշված ժամկետներում: Մինչև ընդունումն օրենսդրական ակտերի նախագծերը ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին, իրավական այլ ակտերին և միջազգային պայմանագրերին

¹⁹ ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և համապատասխան բնագավառում իրականացնում է պետական քաղաքականությունը, բնագավառի կառավարումն ու վերահսկողությունը: Օրինակ. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը ՀՀ-ում ավիացիայի (բացառությամբ ռազմական ավիացիայի) բնագավառի պետական կառավարումն իրականացնող լիազորված մարմինն է, մշակում և իրականացնում է ավիացիայի բնագավառում պետական քաղաքականությունը, ավիացիոն ծառայությունների և ՀՀ-ում գործող ավիացիոն ենթակառուցվածքների կառավարումն ու վերահսկողությունը:

համապատասխանեցնելու նպատակով պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթարկվում ՀՀ Արդարադատության նախարարությունում: Այս գործընթացը տևում է 15 օր՝ եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ: Որոշ սահմանված դեպքերում պետական փորձագիտական եզրակացության ժամկետը ՀՀ արդարադատության նախարարը կարող է երկարաձգել ևս 10 օրով:

Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերն ընդունվելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում ուղարկվում են ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման: Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ կամ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 55)²⁰:

Օրենսդրական և գերատեսչական իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարում է միայն իրավական ակտն ընդունած մարմինը կամ դրա իրավահաջորդը: Իրավաստեղծ մարմինն իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարել միայն նույն տեսակի իրավական ակտով: Իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում իրավաստեղծ մարմնի կամ դրա իրավահաջորդի որոշմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և ակտերի ընդունումը, ուժի մեջ մտնելը, ուժը կորցնելը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքերի ավագանիները և համայնքի ղեկավարները:

Համայնքի ավագանու որոշումները.

Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 11): Որոշման նախագծերը ներկայացվում են համայնքի ավագանու անդամներին: Յուրաքանչյուր նախագծին կցվում են դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումը և յուրաքանչյուր որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվը: Համայնքի ավագանու որոշումները և ուղերձներն ընդունվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է համայնքի ավագանու որոշում ընդունելու լիազորությունների շրջանակները (Հոդված 16):

²⁰ Իրավական ակտեր ընդունող պետական մարմինը կարող է ակտերի (օրենքների) նախագծերը հրապարակել մամուլով կամ զանգվածային լրատվական այլ միջոցներով և այդպիսով դրանք դարձնել համաժողովրդական քննարկման առարկա («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 29:)

Կարգադրություններ.

Համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում արձակում է կարգադրություններ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 32):

Հանրաքվե.

Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները կարող են նաև ընդունվել հանրաքվեով («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 20): Տեղական հանրաքվեի կարող են դրվել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված հարցերը («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, Հոդված 5): Համայնքի ավագանու բացառիկ իրավասությունների շրջանակներում գտնվող մի շարք հարցեր չեն կարող դրվել տեղական հանրաքվեի:

Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը (որոշումներ, կարգադրություններ), դրանք ընդունելուց հետո՝ պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են ՀՀ արդարադատության նախարարություն («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 34):

Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Տեղական հանրաքվեի միջոցով ընդունված ակտերը ուժի մեջ են մտնում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ համապատասխան որոշումը հրապարակվելուց հետո՝ հինգերորդ օրը: Այս իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կարող են արվել միայն հանրաքվեի միջոցով («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, Հոդված 36)

Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի ընունումը, ինչպես նաև այդ ակտերում փոփոխությունների ու լրացումների կատարումն իրականացվում է միևնույն ընթացակարգով:

Հավելված Դ. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ընդունվել է 24.11.2004

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման եւ դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաեւ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական եւ տնտեսական հիմքերը:

Հոդված 2. Օրենքի կարգավորման ոլորտը եւ սահմանափակումները

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է արտադրության եւ սպառման ընթացքում գոյացած թափոնների գործածության վրա:

2. Օրենքի գործողությունը չի տարածվում՝

ա) ռադիոակտիվ թափոնների,

բ) հոսքաշերտին խառնվող եւ բնական ջրատարներ թափվող նյութերի,

գ) արտանետման աղբյուրներից անջատվող գազային խառնուրդների հետ մթնոլորտ արտանետվող նյութերի,

դ) հանքարդյունահանող կազմակերպությունների մակաբացման շերտի ապարների վրա:

Սույն մասով նախատեսված՝ թափոնների գործածության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

Հոդված 3. Թափոնների գործածության իրավական կարգավորումը

Արտադրության եւ սպառման թափոնների գործածության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով եւ իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

արտադրության եւ սպառման թափոններ (այսուհետ՝ թափոններ)
արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաեւ

ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները.

թափոններ առաջացնող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի գործունեության ընթացքում գոյանում են թափոններ.

թափոնների գործածություն՝ գործողություններ, որոնք ուղղված են թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասազերծմանը եւ թաղմանը.

վտանգավոր թափոններ՝ թափոններ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար, եւ պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ.

թափոնների հավաքում՝ գործունեություն, որը կապված է թափոնների հեռացման եւ հատուկ հատկացված տեղերում կամ օբյեկտներում դրանց տեղադրման հետ, ներառյալ՝ թափոնների տեսակավորումը՝ հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով.

թափոնների պահում՝ թափոնների ժամանակավոր տեղադրում հատուկ հատկացված տեղերում կամ օբյեկտներում՝ դրանց հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով.

թափոնների օգտագործում՝ թափոնների կիրառումն ապրանքների արտադրության, էներգիայի ստացման կամ այլ նպատակներով.

թափոնների մշակում, վերամշակում՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացում, որոնք կապված են թափոնների ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ.

թափոնների օգտահանում՝ թափոնների օգտագործում՝ որպես երկրորդային նյութական կամ էներգետիկ ռեսուրս.

թափոնների հեռացում՝ թափոնների հետ կապված գործողություններ, որոնք չեն հանգեցնում դրանց օգտահանմանը.

թափոնների վնասազերծում՝ թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով.

թափոնների տեղադրում՝ թափոնների մեկուսացում, որը բացառում է թափոնների հետագա օգտագործումը եւ ուղղված է դրանց չեզոքացմանն ու շրջակա միջավայրում վտանգավոր նյութերի հետագա տարածմանը.

թափոնների թաղում՝ թափոնների վերջնական տեղադրում հատուկ առանձնացված տեղերում կամ օբյեկտներում, որը բացառում է դրանց վտանգավոր ներգործությունը մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա.

թափոնների գործածության օբյեկտներ՝ թափոնների հավաքման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման եւ թաղման համար օգտագործվող տեղեր կամ օբյեկտներ.

հատուկ հատկացված տեղեր՝ թափոնների տեղաբաշխման տեղեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ, շինություններ, ընդերքի տեղամասեր, որոնց օգտագործման համար սույն օրենքով սահմանված կարգով տրվել է թափոնների հեռացման կամ դրանց հետ այլ գործողություններ կատարելու թույլտվություն.

թափոնների փոխադրում՝ թափոնների տեղափոխում դրանց գոյացման կամ պահման վայրերից դեպի մշակման, օգտահանման կամ հեռացման վայրեր կամ օբյեկտներ.

թափոնների անդրսահմանային փոխադրում՝ թափոնների փոխադրում որեւէ պետության տարածքից այլ պետության տարածք կամ որեւէ պետության իրավասության ներքո չգտնվող տարածքով՝ պայմանով, որ թափոնների նման փոխադրումը առնչվում է առնվազն երկու պետության շահերի.

թափոնների պետական դասակարգիչ՝ թափոնների ծածկագրերի եւ անվանումների համակարգված ցանկ, որը նախատեսված է պետական կամ վարչական վիճակագրությունում օգտագործելու համար՝ թափոնների գոյացման, կուտակման, մշակման (վերամշակման), վնասագերծման եւ հեռացման մասին բազմակողմանի հիմնավորված տեղեկատվություն տրամադրելու նպատակով.

արտոնագրված աղբավայրեր՝ աղբավայրեր, որոնց գործունեության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կա թույլտվություն.

թափոնների տեղադրման սահմանաքանակ՝ որոշակի տեսակի թափոնների սահմանային թույլատրելի քանակ, որը օրենսդրությամբ սահմանված ձևով, որոշակի ժամկետով կարելի է տեղաբաշխել թափոնների տեղադրման օբյեկտներում՝ հաշվի առնելով տվյալ տարածքի էկոլոգիական իրավիճակը.

թափոնների գոյացման նորմատիվ՝ որոշակի տեսակի թափոնների սահմանաքանակ՝ արտադրանքի որոշակի միավորի ստացման դեպքում. թափոնների անձնագիր՝ թափոնների տեսակը եւ վտանգավորության դասը հավաստող փաստաթուղթ, որը տեղեկություններ է պարունակում դրանց կազմի վերաբերյալ.

թափոնների տեսակ՝ թափոնների դասակարգման համակարգին համապատասխան՝ ընդհանուր հատկություններ ունեցող թափոնների խումբ.

թափոնների անձնագրավորում՝ ռեսուրսախնայման եւ թափոնների անվտանգ գործածությունն ապահովելու նպատակով թափոնների անձնագրի տվյալների հիման վրա իրականացվող՝ թափոնների նույնականացմանն ուղղված գործողություններ.

արգելված թափոններ՝ թափոններ, որոնց հետագա գործածության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կանոնադրվի արգելման մասին որոշում.

թափոնների պետական կադաստր՝ թափոնների դասակարգչի, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների եւ հեռացման վայրերի ռեստորների, թափոնների եւ դրանց օգտահանման ու վնասագերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների ամբողջություն:

Չորված 5. Օրենքի հիմնական խնդիրները

Օրենքի հիմնական խնդիրներն են՝

ա) թափոնների գործածության ոլորտում պետական միասնական քաղաքականության հիմնական սկզբունքների սահմանումը.

բ) թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության վերաբերյալ հիմնական պայմանների, պահանջների եւ կանոնների, ինչպես նաեւ ռեսուրսախնայողության համար տնտեսական խթանման միջոցների սահմանումը.

գ) թափոնների նվազագույն քանակությամբ գոյացման ապահովումը, տնտեսական գործունեության մեջ դրանց օգտագործման ընդլայնումը, մարդու

առողջության եւ շրջակա միջավայրի վրա թափոնների վտանգավոր ներգործության նվազեցումը.

դ) թափոնների գործածության ոլորտին վերաբերող հարաբերությունների իրավական կարգավորումը:

Հոդված 6. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները

1. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

ա) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի պահպանությունը թափոնների բացասական ներգործությունից.

բ) նյութափոխանումներ եւ էներգետիկ ռեսուրսների բանական օգտագործման ապահովումը.

գ) թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական եւ սոցիալական շահերի զուգակցումը:

2. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունը թափոնների գոյացման եւ դրանց վտանգավորության նվազեցումն է հետեւյալ միջոցներով.

ա) անթափոն եւ սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման նպատակով գիտատեխնիկական նորագույն նվաճումների օգտագործում.

բ) թափոնների քանակի նվազեցման նպատակով նյութափոխանումներ ռեսուրսների համալիր օգտագործում.

գ) հունքային արժեք ունեցող թափոնների առավելագույն սպառում ուղղակի, կրկնակի կամ այլընտրանքային օգտագործումով.

դ) օգտահանման համար ոչ պիտանի թափոնների անվտանգ հեռացման ապահովում՝ թափոնների վնասագերծման եւ ոչնչացման համապատասխան տեխնոլոգիաների, էկոլոգիապես անվտանգ մեթոդների եւ միջոցների մշակմամբ.

ե) թափոնների գործածության ոլորտում տեղեկատվության մատչելիության ապահովում.

զ) տնտեսական խթանման մեխանիզմների սահմանում:

ԳԼՈՒԽ 2.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Թափոնների գործածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

Թափոնների գործածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

ա) թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության մշակումը եւ իրականացման ապահովումը.

բ) թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության համակարգումը.

գ) սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման, թափոնների հավաքման եւ օգտահանման խթանման տնտեսական մեխանիզմների ապահովումը.

դ) թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) եւ օգտահանման կարգի սահմանումը.

ե) վտանգավոր թափոնների վերանշակման, վնասագերծման, պահման, փոխադրման եւ տեղադրման գործունեության լիցենզավորումը եւ լիցենզավորման կարգի սահմանումը.

զ) վտանգավոր եւ արգելված թափոնների ցանկերի սահմանումը.

է) թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման կարգի սահմանումը.

ը) վնասագերծված եւ օգտահանման ոչ ենթակա թափոնների տեղադրման օբյեկտների ստեղծման ապահովումը.

թ) թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը.

ժ) օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Չորված 8. Թափոնների գործածության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները

Թափոնների գործածության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

ա) մասնակցությունը թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության ձեւավորմանը.

բ) թափոնների գործածության ոլորտում նպատակային ծրագրերի կազմումը.

գ) թափոնների պետական հաշվառման իրականացումը.

դ) իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար թափոնների տեղադրման սահմանաքանակների հաստատումը.

ե) վտանգավոր եւ արգելված թափոնների ցանկերի կազմումը.

զ) ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի սահմանումը.

է) վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրումների թույլտվությունների տրամադրման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

ը) թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի վերաբերյալ համաձայնություն տալը.

թ) թափոններ արտադրողների կազմած՝ թափոնների անձնագրերի համաձայնեցումը.

ժ) թափոնների գոյացման ծավալների վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումը.

ժա) օրենքով սահմանված կարգով թափոնների գոյացման, մշակման, օգտահանման, տեղադրման եւ հեռացման ժամանակ պոլիգոնների, համալիրների, շինությունների եւ այլ հատուկ հատկացված վայրերի կամ օբյեկտների շինարարության, վերակառուցման եւ շահագործման նախագծային փաստաթղթերի ու համալիր ծրագրերի պետական բնապահպանական փորձաքննության իրականացումը.

ժբ) թափոնների պետական կադաստրի վարումը.

ժգ) սակավաթափոն եւ անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումն այլ գերատեսչությունների հետ.

ժդ) թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների եւ հեռացման վայրերի ռեստորների կազմման, վարման, ինչպես նաեւ մոնիթորինգի (մշտադիտարկում) իրականացումը.

ժե) թափոնների գործածության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը եւ իր իրավասության սահմաններում գերատեսչական իրավական ակտերի ընդունումը.

ժզ) թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության եւ թափոնների անդրսահմանային փոխադրման հարցերով միջգերատեսչական միջազգային պայմանագրերի կնքումը.

ժէ) միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրյա իրավասու պետությունների հետ թափոնների գործածության ոլորտում տեղեկությունների փոխանակումը.

ժը) օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 9. Թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները

Թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

ա) թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակումը եւ թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման եւ թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական եւ հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակումը եւ դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

բ) թափոնների բացասական ներգործությունից մարդու առողջության պաշտպանության միջոցառումների գերակա ուղղությունների մշակումը եւ դրանք Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը.

գ) թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի սահմանման վերաբերյալ համաձայնություն տալը.

դ) թափոններից ստացվող արտադրանքի նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջների սահմանումը եւ հիգիենիկ եզրակացության տրամադրումը.

ե) ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի կազմմանը մասնակցելը.

զ) օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 10. Թափոնների գործածության ոլորտում տարածքային կառավարման մարմինների իրավասությունները

Թափոնների գործածության ոլորտում տարածքային կառավարման մարմինների իրավասություններն են՝

ա) մասնակցություն թափոնների գործածության ոլորտի պետական քաղաքականության ձեւավորմանը.

բ) մասնակցություն թափոնների գործածության ոլորտի պետական ծրագրերի կազմմանը.

- գ) թափոնների գործածության ոլորտում իրենց վարչական տարածքի սահմաններում տարածքային նշանակության ծրագրերի կազմումը եւ դրանց իրականացման համակարգումը.
- դ) իրենց վարչական սահմաններում թափոնների տեղադրման վայրերի լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված թույլտվություններ տալը.
- ե) իրենց վարչական տարածքի սահմաններում սանիտարական մաքրման սխեմաների կազմումը եւ աղբահանության նկատմամբ հսկողության իրականացումը.
- զ) թափոնների գոյացման, մշակման ու օգտահանման օբյեկտների եւ հեռացման վայրերի գրանցամատյանների կազմումը եւ վարումը.
- է) թափոնների գոյացման, մշակման, վնասագերծման, օգտահանման ու հեռացման հաշվառման եւ դրանց անձնագրավորման կազմակերպումը.
- ը) իրենց վարչական տարածքի սահմաններում չհսկվող եւ չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը).
- թ) իրենց վարչական տարածքի սահմաններում ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության ներգրավման կազմակերպումը.
- ժ) օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 11. Թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները

1. Թափոնների գործածության ոլորտում համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում՝

ա) իրականացնում է հսկողություն աղբահանման նկատմամբ.

բ) կազմում է տարածքների սանիտարական մաքրման սխեմաները.

գ) իրականացնում է չհսկվող եւ չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը).

դ) կազմակերպում է ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցությունը:

2. Թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ իրավասություններ:

ԳԼՈՒԽ 3.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ, ՎԻՃԱԿԱԳՐԱՎԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄԸ

Հոդված 12. Թափոնների գործածության ոլորտում պետական նորմավորումը

1. Մարդու առողջության եւ շրջակա միջավայրի պահպանության ու թափոնների ծավալների նվազեցման նպատակով թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար սահմանվում են թափոնների տեղադրման սահմանաքանակներ:

2. Թափոնների տեղադրման սահմանաքանակները սահմանում են թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմինները՝ շրջակա միջավայրի վրա սահմանային թույլատրելի վտանգավոր ներգործությունների նորմատիվներին համապատասխան:

3. Թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը բնապահպանության բնագավառում պետական

կառավարման լիազորված մարմնի հաստատմանն են ներկայացնում թափոնների գոյացման նորմատիվների եւ դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 13. Թափոնների պետական հաշվառումը, անձնագրավորումը եւ վիճակագրական հաշվետվություն ներկայացնելը

1. Թափոնների պետական հաշվառումը եւ անձնագրավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա եւ անհատ ձեռնարկատերերը), պարտավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել գոյացող, օգտագործվող, վնասագերծվող, այլ անձանց փոխանցվող կամ այլ անձանցից ստացվող, ինչպես նաեւ տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում:

3. Վտանգավոր թափոններ առաջացնող եւ թափոնների տեղադրում իրականացնող իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա եւ անհատ ձեռներեցները), օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով ոլորտում լիազորված մարմնին պարտավոր են ներկայացնել վարչական վիճակագրական հաշվետվություններ:

4. Թափոնների վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվության ձեւը եւ դրա լրացման հրահանգը թափոնների պետական դասակարգչի հիման վրա սահմանում է բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը:

Հոդված 14. Թափոնների պետական կադաստրը

1. Թափոնների պետական կադաստրը ներառում է թափոնների դասակարգիչը, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների եւ հեռացման վայրերի ռեեստրները, ինչպես նաեւ թափոնների եւ դրանց օգտագործման ու վնասագերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների բանկը:

2. Թափոնների պետական կադաստրը վարում է բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան:

Հոդված 15. Թափոնների գոյացման, վերամշակման եւ օգտահանման օբյեկտների ռեեստրը

1. Թափոնների գոյացման, վերամշակման եւ օգտահանման օբյեկտների մասին տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման եւ վերլուծության ապահովման նպատակով վարվում է դրանց ռեեստրը, որը ներառում է թափոնների անվանացանկը, գոյացման ծավալները, որակական եւ քանակական բնութագրերը, տեղեկություններ՝ թափոնների հետ վարվելու եւ դրանց գոյացման ծավալների ու վտանգավորության աստիճանի նվազեցման վերաբերյալ: Ռեեստրի տվյալները ենթակա են ամենամյա ճշգրտման:

2. Թափոնների գոյացման, վերամշակման եւ օգտահանման օբյեկտների ռեեստրի վարումը թափոններ արտադրողների հաշվետվության հիման վրա իրականացնում է բնապահպանության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Թափոնների առաջացման, վերամշակման եւ օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 16. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարումը

1. Թափոնների հեռացման վայրերի (ինչպես գործող, այնպես էլ փակված կամ կոնսերվացված) հաշվառման եւ նկարագրման նպատակով համապատասխան անձնագրերի, թափոններ արտադրողների հաշվետվության հիման վրա վարվում է դրանց ռեեստրը: Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի տվյալները ենթակա են ամենամյա ճշգրտման:

2. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրը վարում է բնապահպանության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 17. Թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգը

Շրջակա միջավայրի վրա թափոնների ներգործությունը որոշելու եւ կանխատեսելու, դրանց բացասական հետեւանքները ժամանակին բացահայտելու եւ կանխարգելելու նպատակով թափոններ արտադրողներն ու տնօրինողները, ինչպես նաեւ բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը իրականացնում են պարբերական մոնիթորինգ:

Թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգը շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի միացյալ համակարգի բաղկացուցիչ մասն է:

ԳԼՈՒԽ 4.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18. Թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական անձանց իրավունքները

Թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական անձինք իրավունք ունեն`

- ա) թափոնների գործածության հետ կապված գործողություններ իրականացնելիս ունենալու իրենց կյանքի եւ առողջության համար անվտանգ պայմաններ.
- բ) թափոնների գործածության շահագործվող, կառուցվող կամ կառուցվելիք օբյեկտների անվտանգության վերաբերյալ ստանալու տեղեկատվություն.
- գ) թափոնների վերաբերյալ օրենսդրության խախտման հետեւանքով իրենց առողջությանը եւ ունեցվածքին պատճառված վնասի համար օրենքով սահմանված կարգով հատուցում պահանջելու:

Հոդված 19. Թափոնների գործածության ոլորտում իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի իրավունքները

Թափոնների գործածության ոլորտում իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերն իրավունք ունեն`

- ա) օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով համապատասխան պետական կառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու թափոնների օգտահանման տեխնոլոգիաների, թափոնների օբյեկտների շինարարության եւ շահագործման վերաբերյալ.
- բ) առաջարկություններ ներկայացնելու իրավասու կառավարման մարմին՝ թափոնների գործածության օբյեկտների տեղադրման, նախագծման, շինարարության եւ շահագործման վերաբերյալ.
- գ) թափոնների գործածության օբյեկտներ ստեղծելիս Հայաստանի Հանրապետության օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով եւ դեպքերում ստանալու արտոնություններ.
- դ) մասնակցելու թափոնների գործածության տեղական, տարածքային եւ պետական ծրագրերի մշակմանը:

Հոդված 20. Թափոնների գործածության ոլորտում իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի եւ ֆիզիկական անձանց պարտականությունները

Թափոնների գործածության ոլորտում իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը եւ ֆիզիկական անձինք պարտավոր են՝

ա) թափոնների գործածության ոլորտում պահպանել սույն օրենքի եւ իրավական այլ ակտերի պահանջները.

բ) թափոնները տեղաբաշխել միայն սույն օրենքով նախատեսված՝ դրանց համար հատուկ հատկացված տեղերում.

գ) տեղեկացնել թափոնների գործածության ընթացքում առաջացած՝ մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին վտանգ սպառնացող վթարային իրավիճակների մասին եւ միջոցներ ձեռնարկել դրանց հետեւանքների վերացման ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 5.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՅԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՍԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

Հոդված 21. Թափոնների օգտահանման եւ դրանց գոյացման ծավալների նվազեցման ապահովմանն ուղղված կազմակերպական եւ տնտեսական միջոցառումները

Թափոնների օգտահանման եւ դրանց գոյացման ծավալների նվազեցման ապահովմանն ուղղված միջոցառումները նախատեսում են՝

ա) թափոնների գոյացման եւ տեղադրման ծավալների սահմանաքանակների սահմանում.

բ) շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարի սահմանում՝ տարբերակելով դրանց վճարման դրույքաչափերը՝ ելնելով թափոնների վտանգավորության աստիճանից եւ տեղադրման տարածքի տնտեսական՝ հողի կադաստրային արժեքից.

գ) թափոնների գոյացման ծավալները նվազեցնող եւ արտադրության մեջ սակավաթափոն տեխնոլոգիաներ ներդնող, ինչպես նաեւ երկրորդային հումք համարվող թափոնների հավաքման, պահեստավորման եւ հանձնման գործառնություններով զբաղվող ընկերություններին եւ կազմակերպություններին օրենքով սահմանված դեպքում՝ եւ կարգով արտոնությունների տրամադրում.

դ) ռեսուրսային արժեք ներկայացնող թափոնների ցանկի ստեղծում, որոնց համար սահմանվում է հատուկ ռեժիմ՝ դրանց հավաքումը, պահեստավորումը եւ օգտագործումը խթանելու նպատակով.

ե) թափոնների օգտահանման եւ դրանց գոյացման նվազեցմանը նպատակաուղղված գիտահետազոտական աշխատանքների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նպատակային ֆինանսավորում.

զ) շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար օրենսդրությամբ սահմանված բնապահպանական վճարներից ստացված միջոցների նպատակային օգտագործում՝ թափոնների օգտահանմանն ու դրանց ծավալների նվազեցմանը նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորման համար.

է) թափոնների օգտահանման միջոցառումների համար ֆինանսավորման հիմնադրամների ստեղծում՝ թափոններ արտադրողների, դրանց սեփականատերերի, հայրենական եւ օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց կամավոր մուծումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին:

Հոդված 22. Շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարները

Շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար սահմանվում են բնապահպանական վճարներ՝ «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 23. Թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների խթանումը

Թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների խթանման նպատակով թափոնների գոյացման նվազեցմանն ուղղված տեխնոլոգիաներ ներդնող կազմակերպությունները, որոնք թափոններ են օգտահանում արտադրանքի արտադրման (աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման) ընթացքում, իրականացնում են դրանց հավաքումը, պահեստավորումը, արտադրամասերի շինարարությունը, ինչպես նաեւ կազմակերպում են թափոնների օգտահանման համար սարքավորումների արտադրություն, փայտի իրական մասնակցություն են ունենում թափոնների օգտահանմանը եւ դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը, կարող են ստանալ արտոնություն օրենքով սահմանված դեպքում:

ԳԼՈՒԽ 6.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 24. Վերահսկողություն իրականացնելը

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը թափոնների գործածության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐՊԱՆԱՍՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 25. Թափոնների գործածության ոլորտում իրավախախտումները

Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը սույն օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8.

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 26. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
2. Մինչեւ սույն օրենքից բխող համապատասխան իրավական ակտերի ընդունումը գործում են հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի նորմերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
21.12.2004
ՀՕ-159**

Հավելված Ե. Իրավական այլ ակտերի ցանկ.

ա. ՀՀ կառավարության 09.12.2005թ. «Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» թիվ 2291-Ն որոշումը, որը.

1. կանոնակարգում է թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մոտ թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման գործընթացը
2. սահմանում է ՀՀ բնապահպանության նախարարության՝ որպես լիազոր մարմնի, որոշ լիազորություններ
3. սահմանում է նորմատիվների որոշման հիմնական նպատակը
4. սահմանում է նախագծերի հաստատման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը
5. սահմանում է նախագծի հաստատման պայմանները և ժամկետները:

բ. ՀՀ կառավարության 19.01.2006թ. «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» թիվ 47-Ն որոշումը, որը.

1. սահմանում է թափոնի անձնագրի տիտղոսաթերթի ձևը
2. կանոնակարգում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վտանգավոր թափոնների անձնագրերի կազմման, համաձայնեցման և հաստատման հետ կապված հարաբերությունները
3. սահմանում է ՀՀ բնապահպանության նախարարության՝ որպես լիազոր մարմնի, որոշ լիազորություններ
4. սահմանում է անձնագրերի կազմման հիմնական նպատակները
5. սահմանում է անձնագրի կազմման, համաձայնեցման և հաստատման ընթացակարգը և անձնագրի բովանդակությունը:

գ. ՀՀ կառավարության 20.04.2006թ. «Թափոնների գոյացման, վերանշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 500-Ն որոշումը, որը

1. կանոնակարգում է թափոնների գոյացման, վերանշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման հետ կապված հարաբերությունները
2. սահմանում է ՀՀ բնապահպանության նախարարության՝ որպես լիազոր մարմնի, որոշ լիազորություններ
3. սահմանում է ռեեստրի վարման հիմնական նպատակները
4. սահմանում է ռեեստրի գրանցման հաշվետվությանը ներկայացվող պահանջները (պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը)
5. սահմանում է ռեեստրի վարման ընթացակարգը:

- դ. ՀՀ կառավարության 13.07.2006թ. «Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 1180-Ն որոշումը, որը.
1. կանոնակարգում է թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման հետ կապված հարաբերությունները
 2. սահմանում է ՀՀ բնապահպանության նախարարության՝ որպես լիազոր մարմնի, որոշ լիազորություններ
 3. սահմանում է թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման հիմնական նպատակները
 4. սահմանում է ռեեստրում գրանցման ենթակա թափոնների հեռացման վայրերի չափանիշները
 5. սահմանում է գրանցման ենթական տեղեկատվության (գրանցման թերթիկի) բովանդակությունը
 6. սահմանում է ռեեստրի վարման ընթացակարգը:
- ե. ՀՀ կառավարության 25.12.2006թ. «Թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին» թիվ 1343-Ն որոշումը, որը.
1. կանոնակարգում է թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման հետ կապված հարաբերությունները
 2. սահմանում հաշվառման կարգի տարածման շրջանակները
 3. սահմանում է հաշվառման անցկացման հիմնական նպատակները և շրջանակները
 4. սահմանում է թափոնների հաշվառման ընթացակարգը և հաշվառման իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձին
 5. թափոնների հաշվառման վերաբերյալ գրանցվող տեղեկատվության բովանդակությունը:
- զ. ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 430-Ն հրամանը, որը.
1. ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը
 2. ցանկում բերված թափոնների անվանումը, ինչպես նաև ագրեգատային վիճակի և ֆիզիկական ձևի նկարագրությունը:
- է. ՀՀ կառավարության 07.12.2006թ. «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» թիվ 1739-Ն որոշումը, որը.
1. կանոնակարգում է թափոնների պետական հաշվառման հետ կապված հարաբերությունները
 2. սահմանում է թափոնների պետական հաշվառման հիմնական նպատակը
 3. սահմանում է պետական հաշվառման շրջանակները

4. սահմանում է ՀՀ բնապահպանության նախարարության՝ որպես լիազոր մարմնի, որոշ լիազորություններ
 5. սահմանում է պետական լիազոր մարմնին տեղեկատվության ներկայացման կարգը և ժամկետները:
- ը. ՀՀ կառավարության 18.01.2007թ. «Թափոնների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 144-Ն որոշումը, որը.
1. սահմանում է թափոնների պետական կադաստրի վարման կարգը
 2. կադաստրում գրանցվող տեղեկատվության բովանդակությունը
 3. պետական կադաստրի վարման հիմնական նպատակը
 4. կադաստրից տվյալների տրամադրման կանոնները:
- թ. ՀՀ կառավարության 19.05.2005թ. «Թափոնների գործածության ոլորտում լիազորված մարմին ճանաչելու մասին» թիվ 599-Ն որոշումը, որով ՀՀ բնապահպանության նախարարությանը ճանաչվել է թափոնների գործածության ոլորտում թափոնների կառավարման լիազորված մարմին:
- ժ. ՀՀ կառավարության 19.05.2005թ. «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին». թիվ 670-Ն որոշում:
- ժա. ՀՀ կառավարության 24.11.2006թ. «Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկի և ռեեստրի վարման գրքի ձևերը հաստատելու մասին» թիվ 387-Ն որոշում:
- ժբ. ՀՀ բնապահպանության նախարարի 02.02.2006թ. «Թափոնի անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 19-Ն հրաման:
- ժգ. ՀՀ բնապահպանության նախարարի 07.11.2006թ. «Թափոններ գոյացնող, վերանշակող և օգտահանող օբյեկտների ռեեստրներին գրանցման հաշվետվությունների և ռեեստրի վարման գրքի ձևերը հաստատելու մասին» թիվ 359-Ն հրաման:
- ժդ. ՀՀ բնապահպանության նախարարի 27.04.2007թ. «Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաշվարկի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 97-Ն հրաման:
- ժե. ՀՀ կառավարության 08.12.1995թ. «Հայաստանի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին» թիվ 97 որոշման մեջ բերված թափոնների սահմանումը նման է ԵՍ «Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվում» (2008/98/EC) բերված սահմանմանը. «թափոններ – նյութեր և

առարկաներ, որոնք հեռացվում են, նախատեսված են հեռացման համար կամ ենթակա են հեռացման»: Որոշումը սահմանում է երկու տիպի թափոններ. «վտանգավոր թափոններ» և «այլ թափոններ»: Վտանգավոր թափոնները սահմանվում են որպես թափոններ, որոնք վտանգ են ներկայացնում մարդու առողջության և շրջակա բնական միջավայրի համար, իսկ այլ թափոնները՝ բնակավայրերից հավաքվող թափոններն են և կենցաղային թափոնների այրման հետևանքով առաջացած մնացորդները:

Ժգ. ՀՀ բնապահպանության նախարարի 10.08.1999թ. «ՀՀ կառավարության 1995թ. դեկտեմբերի 8-ի թիվ 97 որոշմամբ նախատեսված կարգավորվող և չկարգավորվող թափոնների, դրանց վտանգավոր հատկությունների ցանկերի, հայտավորման, ծանուցման և հեռացման գործողությունների վերաբերյալ փաստաթղթերի հաստատման մասին» թիվ 96 հրամանը, որում բերված է նաև կարգավորվող և չկարգավորվող թափոնների և դրանց վտանգավոր հատկությունների ցանկերը:

Ժե. ՀՀ կառավարության 20.05.2004թ. «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 874-Ն որոշումը²¹ ընդունվել է ՍԱԿ-ի «Վտանգավոր թափոնների երկրից երկիր տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով: Որոշումը կրկին սահմանում է վտանգավոր թափոնների ցանկը և հանձնարարում ՀՀ բնապահպանության նախարարությանը հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը (որը հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. թիվ 342-Ն հրամանով²²):

Ժը. ՀՀ բնապահպանության նախարարի 20.12.2006թ. «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 430-Ն հրամանը, թափոնների ցանկ պարունակող միակ իրավական ակտն է, որն ընդունվել է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի (Հոդված 8) հիման վրա: Օրենքի պահանջի համաձայն հրամանը սահմանում է միայն վտանգավոր թափոնների ցանկը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ակնկալվող իրավական ակտերը.

- ՀՀ կառավարության կողմից վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման եւ

²¹ Սույն որոշումը չի ընդունվել «Թափոնների մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

²² Ցանկում հիշատակված են քաղաքային կոշտ թափոնները, սակայն չի տրված սահմանումը:

տեղադրման գործունեության լիցենզավորումը և
լիցենզավորման կարգի սահմանումը

- ՀՀ կառավարության կողմից վտանգավոր և արգելված թափոնների ցանկի հաստատումը
- ՀՀ կառավարության կողմից թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման կարգի սահմանումը:

Հավելված 2. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1994թ. և բաղկացած է մոտ 7 էջից: Օրենքի անգլերեն թարգմանությունը «ոչ պաշտոնական» է: Օրենքի ծավալը համապատասխանում է միջազգային ակնկալիքներին: Չկա տեղեկատվություն օրենքում որևէ փոփոխություն կատարելու մասին: Չարմանալի է, որ չկա օրենքի պաշտոնական թարգմանված անգլերեն տարբերակը: Այս իրավիճակը պետք է շտկվի և «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի պաշտոնական անգլերեն տարբերակը պետք է տեղակայվի Կառավարության ինտերնետային կայքում:

Օրենքի 1-ին հոդվածը սահմանում է «օտարերկրյա ներդրող» և «օտարերկրյա ներդրում» հասկացողությունները և որոշ չափով ընդգծում է օտարերկրյա ներդրողի իրավունքը՝ ստեղծել օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություն:

Հոդված 3-ը սահմանում է օտարերկրյա ներդրումների տեսակները: Դրանք, ի թիվս այլոց, պայմանագրային ծառայությունների մատուցման հատուցումներն են (Հոդված 3, դ, ե, է): Հոդվածը սահմանում է, որ օտարերկրյա ներդրողը կարող է ներդրում կատարել ցանկացած տեսակի գործունեությունում, եթե այն արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ:

Հոդված 3-ի ձևակերպումները մասամբ խճճված են և պետք է պարզեցվեն: Այնուամենայնիվ, հոդվածի ձևակերպումից կարելի է ենթադրել, որ օտարերկրյա ներդրողը կարող է մասնակցել թափոնների գործածության բնագավառում, եթե դրույթներից այլ բան չի բխում: Հոդված 4-ը հաստատում է այս ենթադրությունը: Համաձայն այս հոդվածի, օտարերկրյա ներդրողը իրավունք ունի ստեղծել օտարերկրյա ներդրումներին ամբողջությամբ պատկանող ձեռնարկություններ, հիմնադրել նոր համատեղ ձեռնարկություններ կամ ձեռք բերել բաժնեմաս գործող ձեռնարկություններում: Ներդրողը կարող է նաև ձեռք բերել հողօգտագործման և գույքային այլ իրավունքներ:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՔԿԹ գործածության բնագավառում օտարերկրյա ներդրումները հնարավոր են, եթե այլ բան նախատեսված չէ կիրառվող օրենսդրությամբ:

Հոդված 5-ը սահմանում է, որ օտարերկրյա ներդրումներն օտարերկրյա ներդրողի ցանկությամբ գնահատվում են ազատ փոխարկելի արտարժույթով կամ ՀՀ ազգային դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված, արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Այն չի նախատեսում շահույթի ազատ արտահանումը (էքսպատրիացիան), սակայն արտահանումը հնարավոր է, եթե կիրառվող օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Շահույթի և եկամուտի արտահանումն ամփոփ ձևով հիշատակվում է Օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներում: Այս խնդրի պարզաբանման համար օտարերկրյա ներդրողին կպահանջվի տեղական փորձագետի իրավաբանական և հաշվապահական խորհրդատվությունը:

Օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով Հոդված 6-ը օտարերկրյա ներդրողների համար երաշխավորում է հավասար

իրավունքներ (իրավական ռեժիմներ), ինչպես նաև լրացուցիչ արտոնությունների սահմանման հնարավորություն երկրի սոցիալական և տնտեսական զարգացման կարևորագույն բնագավառներում: Լրացուցիչ արտոնությունները պետք է սահմանվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի օտարերկրյա ներդրումները կարգավորող ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը: Սա ընդունելի ժամանակահատված է, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրումային պայմանագրերի գործողության ընթացքում հնարավոր են փոփոխություններ օրենքում (5 տարվա ընթացքում և հետագա ժամանակահատվածում), այս պայմանը բավականին գրավիչ է:

Հոդված 8-ը սահմանում է, որ օտարերկրյա ներդրումները Հայաստանի Հանրապետությունում ազգայնացման ենթակա չեն: Առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ: Եթե ընդունենք, որ սա թարգմանության հետ կապված խնդիր չէ, ապա Օրենքի այս դրույթը թերի է, քանի որ միջազգային մակարդակով ներդրողները կարող են ակնկալել լրիվ, անհապաղ և համապատասխան (ադեքվատ) փոխհատուցում: Օրենքի 9-րդ հոդվածում սահմանված օտարերկրյա ներդրումներին պատճառած վնասի փոխհատուցման կարգը նույնպես չի ենթադրում անհապաղ և համապատասխան փոխհատուցում:

Արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների (ներառյալ անձնական գույքը) ներմուծումն ազատված է մաքսատուրքից և ակցիզային հարկից: Այսպիսով, թափոնների գործածության բնագավառի համար պահանջվող ցանկացած նյութի ներմուծումն (օրինակ՝ աղբատար մեքենաները) ազատվում է մաքսատուրքի վճարումից:

Հոդված 17-ը սկզբունքային նշանակություն ունի: Այն սահմանում է, որ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունները հարկեր են վճարում և հարկային արտոնություններ ստանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սովորաբար, օտարերկրյա ներդրումների մասին օրենքները օտարերկրյա ներդրողների համար սահմանում են հարկերից ազատման կամ նվազեցված հարկերի վճարման ժամանակահատված: Սակայն «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում այդպիսի պայման նախատեսված չէ:

Համաձայն 18-րդ հոդվածի, Օրենքով սահմանված արտոնությունները տարածվում են օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների վրա, որոնցում այդ ներդրումները «հիմնադրման» պահին կազմում են առնվազն երեսուն տոկոս: Այս դրույթը պարզաբանման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե արդյոք խոսվում է ընկերության կապիտալացման (շրջանառության մեջ գտնվող ընկերության բոլոր արժեթղթերի գումարային արժեքն՝ արտահայտված ընթացիկ գներով), թե՞ (ծրագրի իրականացման համար) անհրաժեշտ ֆինանսական միջոցների 30%-ի մասին:

Նույնպես պարզ չէ, թե արդյոք «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը թույլ տալի՞ս է վեճերի քննարկում միջազգային արբիտրաժային տրիբունալներում (Հոդված 24):